Վահան Տերյան

Իմ
գրադարանը

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Էդ

ՀՏԴ 891.981 Տերյան
ԳՄԴ 84Հ
Տ 470

Կազմեց և խմբագրեց Նվեր Վիրաբյանը

Տերյան Վահան
Տ 470 [Ստեղծագործությունների ժողովածու]/ Վահան Տեր-
յան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2011., էջ. 216 (Իմ գրադարանը)

Վահան Տերյանի այս ժողովածուն լույս է տեսել «Իմ գրադարանը» մատենաշարով: Ներառում է հեղինակի՝ ՀՀ հանրակրթական դպրոցի և բուհական ընդունելության քննությունների ծրագրերով նախատեսված ստեղծագործություններ և լրացուցիչ ընթերցանության նյութեր:

Գիրքը հասցեագրված է ոչ միայն մեր դպրոցականներին, այլև աշխարհասփյուռ հայ պատանիներին ու պարմանուհիներին, ինչպես նաև մեծահասակ ընթերցողներին, բոլոր նրանց, ովքեր չեն կորցրել իրենց հետաքրքրությունը հայ բազմադարյան գրականության նկատմամբ:

ՀՏԴ 891.981 Տերյան
ԳՄԴ 84Հ

ISBN 978-9939-52-447-4

© «Էդիթ Պրինտ», հրատարակչություն

ՆԱԽԱԲԱՆ

Վահան Տերյանը հայ քնարերգության մեջ սկզբնավորել է մի նոր շրջան, որը նպաստել է մեր բանաստեղծական արվեստի հետագա զարգացմանը: Գրել է ավելի քան 400 բանաստեղծություն, շուրջ երեք տասնյակ գրական-քննադատական և հրապարակախոսական հոդված, մի քանի հարյուր նամակ: Թարգմանել է Շ. Ռուսթավելու «Ընձենավոր»-ի նախերգանքը, Վ. Բրյուսովի, Հ. Հայնեի, Պ. Վեռլենի, Է. Վերհառնի, Ֆ. Սոլոգուբի, Ա. Ծերեթելու բանաստեղծություններից, Շ. Բոդլերի արձակ պոեմները, Օ. Ուայլդի «Սալոմե» դրաման, Ա. Շնիցլերի «Տիկին Բերտա Գարլանը» վիպակը և այլ գործեր:

Վահան Տերյանն ապրել է 35 տարի. ստեղծագործել է շուրջ մեկուկես տասնամյակ: Տերյանի երևան գալը հայտնություն էր 20-րդ դարի սկզբի հայ գրական կյանքում: Նրա աստեղային մուքտը նշանավորվել է 1908 թվականին հրատարակած «Մթնշաղի անուրջներ» ժողովածուով: Նա նաև գրական և հասարակական գործիչ էր:

Գրել է հայկական քնարերգության ավանդական թեմաներով՝ նոր մեկնաբանությամբ: Սերը, բնությունը, խոհերը մարդու, աշխարհի և կյանքի մասին առանցքային են նրա ստեղծագործության մեջ:

Առանձնահատուկ է նաև Տերյանի հայրենասիրական քնարերգությունը, որի բարձրակետը «Երկիր Նաիրի» շարքն է: Նա բանաստեղծական ձևերի և արտահայտչական միջոցների մեծ նորարար է:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

(1885–1920)

Վահան Տերյանը ծնվել է 1885 թ.-ին, Գանձա գյուղում (այժմ՝ Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի շրջան), գյուղական քահանայի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում, սովորել է նաև Ախալքալաքի քաղաքային դպրոցում: 1897–99 թթ.-ին հաճախել է Թիֆլիսի գիմնազիան՝ մասնակցելով այնտեղ կազմակերպվող գրական-հասարակական միջոցառումներին: 1899-ին ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի 3-րդ դասարանը: Այստեղ ուսանելու շրջանում Տերյանը խորացել է հատկապես հումանիտար գիտությունների և լեզուների ուսումնասիրման մեջ, ծանոթացել հայ, ռուս և համաշխարհային գրականության դասական արժեքներին: Ռուսական առաջին հեղափոխության նախապատրաստման և վերելքի տարիներին ակտիվորեն մասնակցել է ուսանողական հուզումներին ու ցույցերին: Սկիզբ առած դեմոկրատական հեղափոխությամբ ոգևորված՝ 1905-06 թթ.-ին Տերյանը եկել է Անդրկովկաս, շրջել Շիրակի գյուղերը, զբաղվել պրոպագանդիստական աշխատանքով: Ճեմարանում նա մտերմացել է հեղափոխականորեն տրամադրված սովորողների մի խմբի հետ (Ա. Մյասնիկյան, Պ. Մակինցյան, Ց. Խանզադյան, Օ. Օհանջանյան): Այստեղ էլ սկսվել են Տերյանի գրական առաջին փորձերը, որոնց մի մասը լույս է տեսել իր իսկ խմբագրած «Հույս» աշակերտական ձեռագիր ամսագրում:

1906 թ.-ին ավարտելով ճեմարանը՝ Տերյանն ընդունվել է Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Նույն թվականից նրա բանաստեղծություններն սկսել են երևալ մամուլի էջերում: 1908 թ.-ին Թիֆլիսում լույս է տեսել Տերյանի առաջին բանաստեղծական ժողովածուն՝ «Մթնշաղի անուրջներ»-ը, որով նա միանգամից դարձավ հայ գրականության ականավոր դեմքերից մեկը: Պ. Մակինցյանի, Ա. Ծատուրյանի, Կ. Միքայելյանի հետ 1910-12 թթ.-ին Մոսկվայում Տերյանը հրատարակել է «Գարուն» գրական-

գեղարվեստական ալմանախը (միայն երեք հատոր), իսկ 1912 թ.-ին հիմնադրել «Պանթեոն» հրատարակչական ընկերությունը, որը և նույն տարում լույս է ընծայել նրա «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորը: Բացի վերամշակված «Մթնշաղի անուրջներ»-ից, այն պարունակում է նաև «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ», «Վերադարձ» շարքերը:

1913թ., Մոսկվայի համալսարանի լրիվ դասընթացը չավարտած, Տերյանը ընդունվել է Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետը, որտեղ Ն. Մառի ղեկավարությամբ խորացել է հայագիտության, արաբերենի, պարսկերենի, վրացերենի ուսումնասիրման մեջ: Այդ շրջանում (1915-16) Տերյանը ակտիվորեն մասնակցել է հայ գրականության՝ Ռուսաստանում պրոպագանդելու գործին՝ Վ. Բրյուսովի կազմած «Հայաստանի պոեզիան» և, մանավանդ, Մ. Գորկու խմբագրած «Հայ գրականության ժողովածու» գրքերն ստեղծելու աշխատանքին, ռուսերեն է թարգմանել հայ գրականության մի շարք երկեր (Գ. Սանդուկյանի «Պեպո»-ն, Ռաֆֆու «Կայծեր»-ի առաջին հատորը, Շիրվանզադեի «Չար ոգի»-ն):

Տերյանը 1917թ.-ին մտել է բոլշևիկյան կուսակցության շարքերը, ընտրվել Համառուսաստանյան կենտգործկոմի անդամ և աշխատանքի անցել Ազգությունների ժողովրդական կոմիսարիատում՝ վարելով հայկական գործերի բաժինը: 1917թ. վերջին նա խորհրդային կառավարությանը զեկուցագիր է ներկայացրել Թուրքահայաստանի մասին: Այդ խնդրով մի քանի անգամ հանդիպել ու զրուցել է Վ. Ի. Լենինի հետ, իսկ 1918թ. սկզբին մասնակցել է Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին՝ որպես հայկական գործերի խորհրդական: Տերյանը գրել է մի շարք հրապարակախոսական հոդվածներ («Նամակներ հայ գյուղացիներին և բանվորներին»): 1919-ի աշնանը սաստկացող հիվանդության (թոքախտ) պատճառով, ինչպես նաև Արտաքին գործերի ժողկոմատի կարևոր հանձնարարությամբ Տերյանը մեկնել է Միջին Ասիա: Սակայն ուղևորության դժվարին պայմաններն ավելի են քայքայել նրա առողջությունը, և նա վախճանվել է ճանապարհին՝ 1920 թ. հունվարի 7-ին, Օրենբուրգ քաղաքում:

Տերյանի գրական ժառանգությունը կազմում են ավելի քան 400

բանաստեղծություն, շուրջ երեք տասնյակ գրական-քննադատական և հրապարակախոսական հոդված, մի քանի հարյուր նամակ (զգալի մասը գրված է ռուսերեն)։ Տերյանը թարգմանել է նաև Շ. Ռուսթավելու «Ընձենավոր»-ի նախերգանքը, Վ. Բրյուսովի, Հ. Հայնեի, Պ. Վեռլենի, Է. Վերհառնի, Ֆ. Սոլոգուբի, Ա. Ծերեթելու բանաստեղծություններից, Շ. Բոդլերի արձակ պոեմները, Օ. Ուայլդի «Սալոմե» դրաման, Ա. Շնիցլերի «Տիկին Բերտա Գարլանը» վիպակը և այլ գործեր։

Տերյանի ստեղծագործությունը նոր էջ բացեց հայ պոեզիայի պատմության մեջ։ Տերյանը առաջին արևելահայ բանաստեղծն էր, որը հետևողականորեն կիրառեց և կատարելության հասցրեց բանաստեղծական շարքերի սկզբունքը։ Բացի «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորի մեջ մտած շարքերից, նա գրել է նաև «Փշե պսակ», «Երկիր Նաիրի», «Կատվի դրախտ», «Իմ բալիկին» և այլ շարքեր, թեև դրանք չի հասցրել ավարտել։ Տերյանի երկերի տարբեր հրատարակությունների կազմողներ ստեղծել են նաև այլ շարքեր («Ոսկե շղթա», «Վերջին դաշնակ», «Հոկտեմբերյան երգեր» և այլն)։ Բանաստեղծությունների մի մեծ խումբ էլ (սևագիր և անավարտ) մնացել է շարքերից դուրս։ Տերյանը ասպարեզ բերեց վառ ինքնատիպությամբ օժտված քնարական հերոսի՝ մեծ քաղաքի միջավայրում ապրող և տառապող մարդուն, որի հոգևոր կենսագրությունը, խոհերի ու զգացմունքների աշխարհը շատ կողմերով նորություն էին հայ պոեզիայի պատմության մեջ։ Մինչև վերջ մնալով «մաքուր քնարերգության»՝ արտաքին աշխարհը անհատի հուզական վերապրումների միջոցով ներկայացնելու ոլորտում, նա մեծապես ընդլայնեց բանաստեղծական պատկերի շրջանակները։ Նրա քնարական հերոսի բարդ և հաճախ հակասական ապրումների մեջ արտահայտվեցին XX դ. սկզբի հասարակական մեծ հեղաբեկումները, խորհող անհատի բարձր մղումներն ու երազանքները, հոգեկան տվայտանքն ու որոնումները, ոգևորության և հուսախաբության պահերը։ Տերյանը իր ստեղծագործական ուղին սկսել էր հասարակական ակտիվությամբ տոգորված, «մութ բռնության դեմ» մարտնչող և զոհվող հերոսների փառաբանությամբ («Փշե պսակ»), թեև իր առաջին տպագիր

ժողովածուի մեջ («Մթնշաղի անուրջներ») նա բացահայտել էր գերազանցապես մենության ձգտող և «մոռացումի անձավում» մի պահ պատսպարվել ցանկացող, բայց առանձնության մեջ էլ անվերջ տառապող անհատի ապրումները, որոնք ի վերջո պայմանավորված էին հեղափոխության տեղատվության և սկիզբ առնող ռեակցիայի ճնշիչ մթնոլորտով: «Գիշեր և հուշեր» շարքում քնարական հերոսն ավելի է համակվում կյանքի ողբերգական հակասությունների, իդեալի անհասանելիության գիտակցությամբ («Չգիտեմ՝ կյանքը ինձ ու՛ր է տանում.– Ամեն ինչ հարց է, մթին հանելուկ»): Սակայն և՛ այս, և՛ մանավանդ «Ոսկի հեքիաթ» շարքում մռայլ ու լուսավոր տրամադրությունները, «ուրախալի թախծի կամ թախծալի բերկրանքի» մոտիվները հանդես են գալիս միահյուսված: Հեռավոր, անմարմին իդեալի կողքին երևան են գալիս նաև իրական կյանքի պատկերներ, և քնարական հերոսն իր երազած ցնորք-հեքիաթի իրականացումը փորձում է տեսնել առօրյա աշխարհում («Գարնան քաղաքում», «Կարուսել», «Առավոտ»): Իսկ «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորը եզրափակող «Արևածագ», «Վերադարձ» երգերում Տերյանը, ասես, վերադառնում է «Փշե պսակ»-ի մոտիվներին, բայց շատ ավելի բարձր գեղարվեստական և հասարակական հիմքի վրա: Դուրս գալով «մենության խավար զնդանից»՝ քնարական հերոսը ոչ միայն ողջունում է կյանքի «հեքիաթային առօրյան», հանձնվում է «աղմկահույզ կյանքի խենթ բոցին», այլև ուզում է դառնալ նոր կյանքի և նրա հաղթանակի համար պայքարի կոչվող մունետիկ («Ջինելու նորից գնդերը ցրիվ... Եվ բորբոքելու զայրույթ ու կռիվ...»): Ազատագրական մոտալուտ վերելքի հավատով ներշնչված այս երգերը նախապատրաստեցին Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո գրած (մեծ մասամբ անավարտ մնացած) բանաստեղծությունները: Դրանց մեջ բանաստեղծը՝ «ցնծուն ու խենթ, որպես մրրկահավ», ողջունում է «կարմի՛ր, արյունաբորբ ազատության դրոշ»-ը, կոչ է անում իրականացնել «մշտաշող երկրների» երազանքը:

Տերյանի պոեզիայում նոր մեկնաբանությամբ ներկայացվեցին նաև պոեզիայի «ավանդական» թեմաները՝ սեր, բնություն, մտորումներ աշխարհի և կյանքի մասին: Սիրո զգացումը Տերյանի պոեզիա-

յում անաղարտ է ու ողջախոհ, զերծ է մարմնական մոտիվներից կամ կենցաղային մանրամասներից: Այս առումով առանձնանում են «Կատվի դրախտ» շարքի բանաստեղծությունները:

Շատ նորություններ բերեց նաև Տերյանի հայրենասիրական քնարերգությունը: Դեռևս ստեղծագործության առաջին շրջանում երգած «հայրենական տան» և նրա կորստյան մոտիվները ժամանակի ընթացքում խորացան ու կոնկրետացան, վերածվեցին հայրենասիրական հզոր երգի, որի ամենաբարձր աստիճանը «Երկիր Նաիրի» շարքն է: Այստեղ որոշակիորեն արտացոլվել են պատերազմի շրջանում հայ ժողովրդի ապրած մղձավանջը և բանաստեղծի հոգեկան տառապանքը:

Տերյանը բանաստեղծական ձևերի և արտահայտչական միջոցների մեծ նորարար է: Բացառիկ կատարելության հասցնելով հայկական վանկային ոտանավորի տեսակները՝ նա միաժամանակ ազգային տաղաչափության մեջ սկիզբ դրեց վանկաշեշտային համակարգի զարգացմանը: Վերջին շրջանի գործերում նա դիմել է նաև համաշեշտ (տոնիկական) ոտանավորի ձևերին: Բազմազան են նրա կիրառած բանաստեղծական տան կառուցման և հանգավորման տեսակները, որոնց մեջ կան նաև ոտանավորի ավանդական ձևեր (սոնետ, տրիոլետ, գազել): Տերյանի պոեզիայում մեծապես ուժեղացավ բանաստեղծական հնչյունաբանության նշանակությունը ինչպես բաղաձայն և ձայնավոր հնչյունների կուտակման (բաղաձայնույթ և առձայնույթ), հարուստ հանգերի կիրառման, այնպես էլ լեզվի բացառիկ սահունության ու ներդաշնակության շնորհիվ: Ճշգրիտ հանգերի կողքին նա սկսեց օգտվել նաև մոտավոր (ասոնանսային) հանգերից՝ ցույց տալով հայոց լեզվի «հանգային ռեսուրսների» մեծացման ուղին: Տերյանի լեզուն իր հղկվածությամբ, մաքրությամբ և հարստությամբ արևելահայ գրական լեզվի ամենաբարձր ու կատարյալ դրսևորումներից է:

Տերյանի ստեղծագործական մեթոդի հարցը XX դ. սկզբի հայ գրականության ամենաբարդ խնդիրներից է, որը միանշանակ լուծում չի գտել: Սխալ են եղել Տերյանին «ուղղափառ խորհրդապաշտ (սիմվոլիստ)» հռչակելու փորձերը. հայ բանաստեղծը հեռու էր ինչպես սիմվոլիզմի եսակենտրոն փիլիսոփայությունից,

այնպես էլ պոեզիայի մոգական, կրոնամիստիկ ըմբռնումներից, նրա իմաստը գիտակցաբար մթագնելու, խորհրդավոր դարձնելու ձգտումից: Սակայն միակողմանի և հակապատմական է նաև Տերյանին սիմվոլիզմից բացարձակորեն հեռացնելու միտումը: Իբրև բանաստեղծ ձևավորվելով սիմվոլիզմի և նեոռոմանտիկ այլ հոսանքների լայն տարածման պայմաններում՝ Տերյանը որոշակիորեն կրել է դրանց ազդեցությունը: Տերյանի գեղարվեստական մեթոդը ձևավորվեց սիմվոլիզմի և ռոմանտիզմի միաձուլման ուղիով: Սակայն Տերյանի գեղագիտական ծրագիրը շատ ավելի բազմազան էր ու հարուստ, նա ձգտում էր ժողովրդական խոր հիմքեր ունեցող «իսկական արվեստի անծայրածիր լայնության», ըստ էության՝ ռեալիստ, համագրական արվեստի: Այդ են վկայում նրա գրական-քննադատական ելույթները և հատկապես 1914 թ.-ին կարդացած «Հայ գրականության գալիք օրը» զեկուցումը: Մերժելով ինչպես գավառական սահմանափակությունը և նեղմտությունը, այնպես էլ ապազգայնացած հայ մտավորականության ըմբռնումները գրականության մասին՝ Տերյանը կոչ էր անում «...ձուլել մեր կյանքը համամարդկային կյանքի հոսանքին՝ պահպանելով մեր հոգեկան առանձնահատուկ գծերն ու գույները»: Տերյանը ռուսական կողմնորոշման հետևողական պաշտպան էր ինչպես հասարակական-քաղաքական հարցերում, որտեղ նա կապում էր իր «...լավագույն հույսերը ռուս առաջավոր դեմոկրատիայի հույսերը և բաղձանքները նրա բաղձանքների հետ...», այնպես էլ գեղարվեստի բնագավառում, որտեղ նա վճռական նշանակություն էր տալիս «...ռուսական պարզ ու պայծառ գրականության ազդեցությանը»:

Տերյանի ստեղծագործությունը խոր և անջնջելի հետք թողեց հայ պոեզիայի հետագա ողջ զարգացման մեջ, դարձավ նրա առաջընթացի հզոր գործոններից մեկը:

Երևանում կա Տերյանի անվան դպրոց, փողոց, Գանձայում՝ տուն-թանգարան և դպրոց:

ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ

* * *

Որպես Լայերտի որդին,[1] որպես
Ուլիս[2] մի, թողած և՛ հող, և՛ տուն,
Անցա ծովեր ու ցամաքներ ես՝
Ամեն տեղ օտար և անխնդում:

Ու հոգնած քայլով ահա կրկին
Վերադառնում եմ հայրենի հող,
Դեպի քարերդ ազնիվ ու հին,
Եվ խրճիթներդ ահով նիրհող:

Նվագով անուշ քանի սիրեն
Կանչում էին ինձ և կախարդում,
Բայց սիրտս մաքուր, որպես ցորեն,
Պահեց անունդ վշտում արթուն:

Ցուրտ հեռուներում, անլռելի
Կրկեսների մեջ սրտով մոլոր,
Երազում էի քո սիրելի
Եվ մեղմ երգերը, որպես օրոր:

1 Լայերտի որդի – Ոդիսևսը՝ Հոմերոսի «Ոդիսական» պոեմի հերոսը
2 Ուլիս – այստեղ՝ թափառական, շրջմոլիկ, ճանապարհորդ

Ու կարոտակեզ[1] ահա կրկին
Վերադառնում եմ, որ առհավետ
Ունկնդիր լինեմ քո երգին,
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...

* * *

Այնպես անխինդ են և նման լացին
Երգերն իմ երկրի, այնպես տխրագին.
Մեզ չի հասկանա օտարերկրացին,
Մեզ չի հասկանա սառն օտարուհին:

Այն մելամաղձիկ, լացող, միալար
Ելևէջները ներդաշնակ այնպես
Եվ հարազատ են սրտին մեր մոլար,
Հոգուն մեր բեկված, ավերված, հրկեզ...

Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,
Եվ թուխ դեմքերն այն տխրության սովոր,
Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,
Երկիրն իմ անբախտ և աղետավոր:

Թող հնչե երգն այդ դառն ու ցավածին,
Երգը հայրենի, ցավագար ու հին,
Մեզ չի հասկանա օտարերկրացին,
Մեզ չի հասկանա սառն օտարուհին...

1 կարոտակեզ – կարոտից կիզվող՝ տոչորվող, կարոտավառ

* * *

Իջնում է գիշերն անգութ ու մթին
Եվ այգը բացվում դառն ու մահահոտ,
Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին:

Թող կիտվի խավարն ավելի խրթին,
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,
Ու թող գա, թե կա, ավելի չար-բոթ,
Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին:

Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
Մի հեգ[1] նաիրցի՝ գնում եմ անկանգ.-
Թող գուժկան[2] գիշերն ահասաստ դավե[3] -
Որքան մութը սև, այնքան ես համառ,
Երկնի՛ր, իմ երկի՛ր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակդ վեհ...

* * *

Հայրենիքում իմ արնաներկ
Գիշերն իջավ անլույս ու լուռ.
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եվ վարդի բույր, և՛ սրտի հուր:

---

1 հեգ - խեղճ, թշվառ

2 գուժկան - գույժ՝ վատ լուր բերող, հաղորդող. գուժաբեր, բոթաբեր

3 դավ - դավաճանություն. գաղտնի մտածված կամ նախապատրաստված չարամիտ արարք, գործ

Ամեն մի միտք՝ հիմա մի վերք,
Ամեն հայացք՝ հատու[1] մի սուր,
Արնոտ դիերն են համր ու մերկ
Նայում երկինք՝ անզոր ու զուր,
Մի օր ինչ վառ ծաղկեց մոգված[2]
Մեր նահրյան սիրտը բեկված,
Հրով որքա՜ն խորհրդավոր,
Ահա՛ որպես ծաղիկ թեքված
Մեր հին հոգին՝ համր ու մոլոր,
Ա՜խ, և՛ անզո՛ր, և՛ անարգվա՛ծ...

* * *

Դու հպարտ չես, ի՛մ հայրենիք,
Տրտում ես դու և իմաստուն.
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հմայող ու հին խոստում:
Եվ միթե այդ վշտիդ համար
Չեմ սիրում քեզ այսպես քնքուշ
Եվ խոնարհվում քեզ պես համառ,
Օ՜, հայրենիք դառն ու անուշ...
Չըշլացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով երբեք.—
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ,
Եվ երգերդ՝ մեղմ ու բեկբեկ,[3]
Խեղճությունդ՝ խավար ու լուռ,

1 հատու – սուր, լավ կտրող. փխբ. կտրական, կտրուկ. ուժգին, ազդու
2 մոգված – կախարդված, հմայված, գերված
3 բեկբեկ— բեկբեկված, խորտակված, ընդհատաբար իջնող ու բարձրացող

Աղոթքներդ՝ դառն ու ցավոտ,
Ջանգակներիդ զարկը տխուր,
Եվ խուղերիդ[1] լույսերն աղոտ...

* * *

Մշուշի միջից,– տեսի՛լ դյութական,–
Բացվում է կրկին Նաիրին տրտում.
Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
Եվ այնքան ներում — ո՞ր երկրի սրտում...
Որտե՞ղ են քարերն այնպես վերամբարձ
Ձեռների նման պարզված երկնքին,
Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ
Եվ զոհաբերումն այնպես խնդագին...
Որտե՞ղ է խոցում այնպես չար ու խոր
Սիրտը մարդկային դաշույնը քինոտ.
Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր,
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ...

* * *

Կարծես թե դարձել եմ ես տուն,
Բոլորն առաջվանն է կրկին.
Նորից դու հին տեղը նստում,
Շարժում ես իլիկը մեր հին.
Մանում ու հեքիաթ ես ասում,
Մանում ես անվերջ ու արագ.
Սիրում եմ պարզկա քո լեզուն,

1 Խուղ— խրձիթ, հյուղ, խուց, ստորգետնյա բույն

Ձեռներդ մաշված ու բարակ:
Նայում եմ, մինչև որ անզոր
Գլուխս ծնկիդ է թեքվում.
Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում,
Արևը հանգչում է հեռվում,
Գետից բարձրանում է մշուշ,
Հեքիաթդ անվերջ օրորում,
Իլիկդ խոսում է անուշ...

* * *

Այստեղ է լացել իմ մայրը
Մորմոքն իր և իր օրորը,
Այստեղ այնպես անծայր է
Կարոտն ու այնպես խոր է:

Մեր տունը համր ու դատարկ է,
Մեր տունը որբ ու ավեր է.
Բարակ զանգակի զարկը
Լալիս է երկրիս ցավերը...

* * *

Քեզ կմնա միշտ օտար
Նաիրական իմ հոգին
Եվ թախիծն այս անդադար,
Եվ տրտունջը հին:

Ո՛չ քարերը դարավոր,
Ո՛չ գրերն ավեր
Չեն պատմի քեզ վիշտը խոր
Եվ երկունքը մեր:

Ու զանգերն այն լալագին
Մեռնող իմ երկրում
Չեն հուզելու քո հոգին
Տխրությամբ անհուն:

Եվ խնջույքում հրով հին
Երբ կարմիր խնդա,–
Չես զգա, որ մեր գինին
Մեր արյունն է դա...

ՎՅԱՉԵՍԼԱՎ ԻՎԱՆՈՎԻՆ[1]

Վարդավառի վարդերը վառ
Երգող երգչիդ[2] երդվում եմ ես.
Չկար երկրիս նման պարտեզ—
Եվ նա ավեր, չարին ավա՛ր...
Սրտի երգիչ, դու բոցավառ
Լուսե երգով ասա հրկեզ
Արդյոք «հարյա՛վ» պիտի երգե՞ս,
Վառված ու որբ երկրիս համար:

---

1 Վ. Տերյանի միակ աքրոստիկոսն է. տողերի 1–ին տառերից կազմվում է «Վեչեսլավ Իվանով»:

2 «Վարդավառի վարդերը վառ երգող երգչիդ» – ակնարկում է Իվանովի «Գազելներ վարդի մասին» շարքի երկրորդ բանաստեղծությունը («Роза преображения»), որ ինքը թարգմանել է:

Ինչպես կարկուտն արտն անարատ
Վայր է թափում, այնպես առատ,
Այնպես անգութ երկրում իմ որբ,
Նայիր՝ թափված քանի կորյուն–
Որքա՜ն, որքա՜ն, որքա՜ն արյուն–
Վերքեր–վարդեր արնոտ ու բորբ...

* * *

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի.
Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ
Պատել, պայծա՛ռ Նաիրի:

Վտարանդի[1], երկրում աղոտ,
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:

Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եվ խոցում է, և՛ այրում.
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,
Թե՞ վերքերն իմ հրահրուն:

Ահով ահա կանչում եմ քեզ,
Ցոլա[2], ցնորք Նաիրի՛.—
Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...

---

1 վտարանդի – հայրենիքից հեռացած և օտար երկրում բնակություն հաստատած մարդ, տարագիր, պանդուխտ

2 ցոլալ– շողալ, ցոլքեր արձակել

* * *

Հիշում եմ՝ ինչպես այն ուշ
Աշունն էր ոսկեվորվում[1],–
Մայրամուտն էր ժլատ վառվում,
Բլուրը պատել էր մուժ[2]...

Մեր գյուղն է— սարերը մերկ,
Մեր գետը— բարակ միգում.
Ձանգակը— մեղմ ու բեկուն,
Թախծում են արոտ ու հերկ[3]...

Եվ մայրս ահա հիվանդ,
Միսում է, արև ուզում,
Նստած է հետս դրսում
Անխոս ու մեղմ, հնազանդ:

Եվ ծեր է մայրս այնքան,
Փոքրիկ է— բարի մի մայր...
Ցոլում է սարը սուրսայր,
Ջնգում է զանգը լալկան...

* * *

Ինչպե՞ս չսիրեմ, երկի՛ր իմ կիզված,
Պարզված վերստին սրերին սուրսայր.
Ինչպե՞ս չսիրեմ— հեզությամբ լցված
Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր...

---

1 ոսկեվորել – ոսկեզօծել, ոսկեզարդել, ոսկեջրել. փխբ. ոսկեգույն ներկել, ոսկեգույն ցոլքերով ողողել, դեղնել, դեղին գույն ստանալ

2 մուժ— մառախուղ, մեգ, մշուշ

3 հերկ – վարած՝ հերկած արտ

Որքան որ ելան արյունիդ ագահ,
Դու կամավոր զոհ– բոլորը տվիր.
Դու հավետ եղար անարատ վկա—
Չարերի կոխան, խաչվա՛ծ իմ երկիր:

Հրկեզ քո հոգին, որպես առատ խունկ,
Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
Հեզ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար վեհ ու անհպարտ:

Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավա՛ռ,
Զրահավորվիր խանդով խնդագին...
Վառիր երկունքի գիշերում խավար
Հրով մկրտված նաիրյան հոգին...

* * *

Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց,
Նաիրուհին՝ տխուրաչյա և համեստ.
Այնպես վառ էր լեռնադստեր դեմքը բաց,
Նայվածքն այնպես հրեղեն ու անարվեստ:
Եվ հյուսիսյան հեռուներում ու ցրտում,
Կարծես ցոլաց իմ նաիրյան արևն ալ,
Կարծես բոցե մի վարդ բացվեց իմ սրտում,
Եվ չի կարող արբած հոգիս լուռ մնալ,
Եվ չի կարող սիրտս չերգել այդ անբիծ
Հուրը, որ ինձ ժպտաց ցուրտ հեռվում.
Այդպես արևն է դուրս նայում մութ ամպից
Իմ նաիրյան բա՛րձր, բա՛րձր աշխարհում...

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ*

* * *

Հուր ես հագել հրեղենդ[1],
Ալվարդդ՝ կարմիր կրակ,
Նազում ես այնպես բարակ,
Հուր ես հագել հրեղենդ:
Նիզակդ զա՛րկ հրազենդ,
Կիզիր իմ հոգին, օ՜, հրակ.[2]
Հուր ես հագել հրեղենդ,
Ալվարդդ՝ կարմիր կրակ...

* * *

Նետում ես ոսկի նետերդ
Հուրերդ— որպես արև,
Ես դեմդ— դողդոջ տերև,
Նետում ես ոսկի նետերդ.
Դու բոց ես, ես խենթ թիթեռ եմ,

---

* տրիոլետ– բանաստեղծության կառուցման կայուն ձև, որը բաղկացած է ութ տողից, առաջին տողը կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տողեր, իսկ երկրորդ տողը՝ իբրև ութերորդ տող. ունի երկու հանգ

1 հրեղեն – փխբ. հրի պես այրող, տոչորող, հրե, հրից կազմված, ծնված

2 հրակ – բնստ. կրակ, հրե աչքեր ունեցող

Դու վառ ես, դու հրաթև,
Նետում ես ոսկի նետերդ,
Հուրերդ՝ որպես արև:

* * *

Խոր են քո հուր աչքերը,
Հուրդ իմ հուրն է այրում,
Սիրտս երգում է հրում,
Խոր են քո հուր աչքերը
Հուր են քո սուր տեգերը[1],
Հուրդ վառված իմ հրում
Խոր են քո հուր աչքերը,
Հուրդ իմ հուրն է այրում:

* * *

Հրով արթնացած սիրտս,
Սիրտս բացված հրավարդ:
Լի՛ց քո կրակը զվարթ
Հրով արթնացած սիրտս
Քո դեմ երկյուղած սիրտս
Կիզի՛ր, որսկան հպարտ,
Հրով արթնացած սիրտս,
Սիրտս բացված հրավարդ:

1 տեգ – նիզակի ծայրի սուր երկաթը, որով խոցում են, սլաք, փխբ. խոցող՝ հոգեկան խոր վերք հասցնող բան. այստեղ հայացքը համեմատվում է տեգի հետ

* * *

Այնպես օրորուն է քայլդ,
Սերդ՝ ահեղ ու բորբոք.
Մաշիր հոգիս անողոք,
Այնպես օրորուն է քայլդ.
Այնպես հրահրուն է փայլդ,
Նայվածդ՝ այնպես շոգ,
Այնպես օրորուն է քայլդ,
Սերդ՝ ահեղ ու բորբոք...

* * *

Դիր քո կնիքը սրտում իմ,
Նիշդ[1] անեղծ[2] ու անջինջ,
Օ, հրեղեն դու և ջինջ,
Դի՛ր քո կնիքը սրտում իմ.
Քեզ իմ աղոթքն ու երդումը,
Քեզ պատարագ ամեն ինչ.
Դի՛ր քո կնիքը սրտում իմ,
Նիշդ անեղծ ու անջինջ...

* * *

Չեմ տա երբեք անունդ
Մութ աշխարհի այս փոշում...
Բոց է անունդ հնչուն—

1 նիշ – նշան

2 անեղծ, անեղծական – չեղծված, չվնասված, անխաթար

Չեմ տա երբեք անունդ:
Թող ինձ այրե սամումդ,[1]
Սերդ, որ սիրտ է փշրում.
Չեմ տա երբեք անունդ
Մութ աշխարհի այս փոշում...

Սիրտս ջահել է նորից,
Սիրտս սիրում է կրկին,
Երգս— մի վարդ քո կրծքին,
Սիրտս ջահել է նորից:
Սերս, թաքուն բոլորից,
Սուր է մեխված իմ կրծքին,
Սիրտս ջահել է նորից,
Սիրտս սիրում է կրկին...

* * *

Որպես մադամ Բովարին,[2]
Դու էլ կիզված տագնապով
Խանդով խնդուն ու խաբող,
Որպես մադամ Բովարին...
Եվ օտար է բոլորին
Կրակն այդ խենթ իր թափով,
Որպես մադամ Բովարին,
Դու էլ լի ես տագնապով:

---

1 սամում – տաք ավազախառն հողմ, ավազային փոթորիկ Ասիայի և Աֆրիկայի անապատներում, որևէ բանի բուռն ընթացք. այստեղ՝ սերը համեմատվում է սամումի հետ

2 Բովարի – նկատի ունի Ֆլոբերի «Տիկին Բովարի» վեպի հերոսուհուն

* * *

Տեսա երազ մի վառ.
Ոսկի մի դուռ տեսա,
Վրան փերուզ կամար.
Սյունները հուր տեսա:

Տեսա ծաղկած այգին,
Սոսի սուրբ ծառ տեսա.
Մի հրեշտակ անգին
Սոսից պայծառ տեսա:
Երկու բաժակ տեսա,
Ոսկի գինի էր վառ.
Երկու նիզակ տեսա,
Երկու անգին գոհար:
Սիրտս խոցված տեսա,
Վերքիս արյունն էր վառ.
Դահճիս կանգնած տեսա,
Ասի— արևս ա՛ռ...

* * *

Ես չեմ հոգնել սիրելուց, և երգերից, և ցավից,
Ուղիներից անծանոթ, աղետներից նորանոր:
Ողջո՛ւյն նորից ու նորից, նոր խնդություն, նոր թախիծ,
Եվ առավոտ անստվեր, և մեջգիշեր[1] սևավոր:
Սիրտ իմ, բաց ես աշխարհի և չարի դեմ, սիրտ իմ՝ բա՛ց,
Աշխարհն արև, աշխարհն ամպ, սիրտ—աղբյուր ես դու զուլալ:

Սիրտ իմ, հազար ցնորքով, հազար երգով ես արբած,
Վիճակված է քեզ հնչել— երգով խնդալ, երգով լալ:

1 մեջգիշեր – կես գիշեր

Ու խընդում է լացդ պարզ և խնդումդ՝ լացի պես,
Տխրություն է ամեն ինչ— երազ է և մոռացում:
Բացված ես դու, սիրտ իմ, նուրբ շուշանի պես, ծաղկի պես,
Եվ արևն է այրում քեզ, և մրրիկն է քեզ ծեծում...

* * *

Աշուն է. օրերը ցրտում են...
Գիշերը սուզվում է միգում.
Այնքան քնքշություն կա սրտում իմ,
Այնքան մեղմություն իմ հոգում:
Այնքա՜ն տխրություն, և անուշ է,
Անուշ է այս ցավը հետին.—
Բոլորը երազ է և հուշ է,
Ոսկի է— թափվում է գետին...

* * *

Միշտ նույն հուշն է, հուշը նույն
Չքնա՜ղ, գերող և չըկա
Նրա թույնից անուշ թույն.

Տարիներից հեռակա,
Որպես բոցե մի դաշույն
Պարզվում, կիզում ինձ ագահ.

Կեղեքում է և գգվում
Խինդով քաղցր մահու պես,
Եվ տխրությամբ մորմոքուն.

Ա՜խ, դեռ քանի գիշեր ես,
Քանի գիշեր–դար անքուն

Պիտի արբեմ սրտակեզ
Խենթացնող այս խնջույքում...

* * *

Սիրում եմ ես նրանց, որոնք խենթ են ու անտուն,
Նրանց, որոնք կայան չունեն և չունեն խնդում:

Կորածներին, շրջիկներին, մանուկներին որբ
Եվ այն կանանց, որ նայում են անամոթ ու ցոփ:

Նրանց, որոնք մահն աչքերում— գիշերում խավար
Թափառում են գաղտագողի և փնտրում ավար:

Նրանց, որոնց մեռած սրտում արդեն սեր չկա,
Նրանց, որոնք— մահու պարտված— չար են ու ագահ...

Ա՜խ, կուզեի ես հարազատ և ընկեր լինել
Նրանց, որոնք մոռացված են բանտերում անել:

Եվ կուզեի եղբայր լինել նրանց, որ մթին
Չարչարանքում կորցրել են կրակը հետին:

Եվ անառակ իմ եղբոր հետ ցանկապատի տակ
Կուզեի ես մեռնել անբախտ և անհիշատակ:

* * *

Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյութես, օ՜, Շամիրա՛մ,
Որպես արքան այն, մանուկ Արան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին:
Որքան փորձանք գա իմ զոհ-սրտին,

Որքան էլ փայլդ փայե[1] նրան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյութես, օ, Շամիրամ:

* * *

Դարձար դու, և սիրտս տխուր է.
Հնչիր-երգից անուշ.
Քո ձայնը այնքան դեռ մաքուր է,
Այնքան հարազատ մի հուշ.
Իսկ սիրտս արդեն խոնարհել է,
Հոգիս արդեն մարել.
Թեթև է արդեն ներելը,
Բայց... անհնար է սիրել...

* * *

Այսօր գալու է իմ յարը,
Օ՜, սի՛րտ, խնդա ու դողա,
Քնքուշ մայիս է ահա,
Այսօր գալու է իմ յարը:
Երեկ դեռ, երեկ հունվար էր,
Այսօր— մայիս է ահա...
Այսօր գալու է իմ յարը,
Օ՜, սի՛րտ, խնդա ու դողա...

1 փայել-գգվել, փայփայել. շոյել, հոգածությամբ խնամել

ՇԱՐՔԵՐԻՑ ԴՈՒՐՍ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՅԱՆՔԻ ՈՐԲԵՐԸ

Դալուկ ու կնճռոտ, դեմքերով տխուր,
Կյանքի որբերն են անցնում համրորեն,
Աչքերն անարցունք, շրթունքները լուռ,
Մենակ, դժնադեմ...
Ա՜խ, ես սիրում եմ այդ վշտածրար
Դեմքերը դաժան տառապած մարդոց,
Որ մենակ շավղով օրորում են հար
Նոր արևի բոց...
Կյանքի որբերը... վշտերով սնված,
Փշոտ ճամփեքից ոտքերը արնոտ,
Մարդկանցից մերժված, բախտից հալածված,
Ճակատներ կնճռոտ...
Ուրուրների պես մտքերի ետքին
Գնում են անդուլ, գնում են անվերջ —
Անլուր աշխարհի անմիտ անեծքին
Գնում են հավերժ...
Մենակ ոգիներ, մերժված խոսքի պես,
Հոգուս եղբայրներ, սև կյանքի որբեր,
Եկեք իմ գիրկը, գուրգուրեմ ես ձեզ,
Մենակ ոգիներ...

ԿՈՇՄԱՐԸ[1]

Խաղաղ ննջեցին գյուղերը խավար
Եվ քաղաքները բերդերովն ամուր,
– Ա՜խ, այն գիշերը՝ անսահման երկա՛ր,
– Այն լռությունը՝ մահու պես տխուր...

Թշնամին եկավ մութի պես կամաց,
Ամենքն ահաբեկ փախան դեպի սար.
– Մայրը վայր ընկավ... երեխան մնաց...
– Այն դաժան մարդոց երեսը տեսա՞ր...

Լուռ ննջել էին գյուղերը խավար...
Ես այն ցավի մեջ եղա մի՛ անգամ...
– Ա՜խ, այն գիշերը՝ անսահման երկար...
– Մայրի՛կ, իմ հոգու ծաղիկներն ընկան...

Կարմի՛ր տեսիլներ— սասանում ծնող.
Ես տեսա՝ ինչպես մարդիկ կուրացան...
– Արյուն են շնչում երկինք, ծով ու հող–
– Մայրի՛կ, իմ շուրջը արյուն է միայն...

ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

Հեռացի՛ր, աշո՛ւն՝ համրորեն լացող,
Ողջույն քեզ, մրրիկ ահեղաշաչյուն,
Ողջույն քեզ, կռվի առաջին հնչյուն՝
Լույսի պես կարող, խոսքի պես խոցող...

---

1 կոշմար – մղձավանջ, ծանր, տանջալից երազ. փխբ. ահռելի՝ անտանելի վիճակ, պայմաններ, հանգամանք

Գրկի՛ր իմ հոգին մարտի ցնծությամբ,
Բորբոքի՛ր սիրտս, ազատության երգ,
Շողա՛ մռայլում, ըղձալի՛ եզերք,
Որոտա՛, շաչի՛ր, փոթորկավե՛տ ամպ...

ՔԱՂԱՔ

«Քաղաքի երգեր» ցիկլից
Ցոլակին[1]

Սև ճիրաններդ, անհաղթ Բաբելոն,[2]
Դու երկարում ես արձակ դաշտերում
Քո պաղ շենքերի մութ նկուղներում
Դու, կո՛ւյր, պահում ես մի ահեղ ցիկլոն[3]:

Քո ցուրտ լույսերի անխոս խնդությամբ
Դու դաժանորեն նայում ես հեռուն.
Քո պալատների ներքնահարկերում
Դու, խե՛նթ, սնում ես մի պայծառ վիշապ:

Եվ այնտե՛ղ, այնտե՛ղ՝ քո դղյակներում,
Ուր օրգիաների[4] կոշմարն է խոսում,
Քո խնջույքների լպիրշ քաոսում
Ալ–ուրվականն իր դաշույնն է սրում:

---

1 Ցոլակ Խանզադյան (1886–1935) – քննադատ, գրականագետ, կյանքի վերջին շրջանում ռուս և անտիկ գրականության դասախոս Երևանի համալսարանում:

2 Բաբելոն – հնագույն քաղաք Միջագետքում, Եփրատ գետի ափին:

3 ցիկլոն – մթնոլորտի մեծ արագության հասնող պտուտական շարժում՝ շարժման կենտրոնում ճնշման նվազումով, որն ուղեկցվում է ամպամածությամբ ու տեղումներով. փոթորիկ, մրրիկ

4 Օրգիա – հին հունական ու հռոմեական Բաքոս–Դիոնիսի պատվին կատարվող պաշտամունքային տոն. փխբ. գինարբուք, խրախճանք, սանձարձակ կերուխում և սեռական հաճույքներ

ԱՂԲՅՈՒՐ

Ալ. Ծատուրյանին[1]

Մահու պես դաժան ձմեռն է իջել,
Մարել են, մեռել— երգ, ծաղիկ ու բույր.
– Դու քար ցրտում էլ, ձյունների մեջ էլ,
– Հավետ կենդանի, կարկաչուն աղբյուր...

Ժեռ սարի կրծքից դու դուրս ես թռչում,
Սառույցը ճեղքում— գոհարներ ցողում,
Ծաղրանքով ձյունի երեսն ես թրջում,
Մռայլ երկնի դեմ պայծառ ծիծաղում:

Քո մեջ ապրում է հույսը չմարող...
Դու, որպես գալիք գարունների լուր,
Դու, որպես սերը՝ մահու դեմ կարող–
Ազատության երգ, կարկաչուն աղբյուր...

* * *

Արծաթ–կարկաչուն
Աղբյուրն է խոսում հավիտենաբար.
Իմ ուղիների հեռվում անկոպար[2],
Հավիտենաբար
Քո սերն է հնչում.

---

1 Ծատուրյան Ալեքսանդր Ռուբենի (1881 – 1920) – Վ. Տերյանի ընկերներից. հրապարակախոս, մշակութային գործիչ

2 անկոպար – անսահման, անվերջ, անհուն, ոչ բանուկ, ցեխոտ

Անձրևային երգ—
Աստղերի ուղին մշուշ ծովերում—
Դու, իմ հեռավոր որոնումներում.
Մոլորումներում՝
Հայրենի՛ եզերք...

Լույսերը մեռան,-
Մութը սառնաթև գրկեց ամեն ինչ-
Դու, մենակ կյանքիս միակ ամոքիչ,
Քնքուշ ու թովիչ
Պայծա՛ռ հանգրվան...

ՍՈՆԵՏ[1]

Կյանքին միշտ օտար, մահից վախեցող—
Ես շրջում էի այս գունատ երկրում,
Ուր չկար ցավի երջանկության ցող
Եվ ոչ չմեռնող բախտի դառը թույն:

Նա իր կարոտով ու իր ցանկությամբ
Վառվեց իմ ամուլ[2] գոյության վերա —
Քնքուշ, հեռավոր մի հրեղեն ամպ՝
Ես նորան տեսա ու բախտից մեռա...

Նա իր բոցերով այրեց ու գնաց,
Նա բերեց հոգուս մահու քաղցր կյանք,
Ուր հեզ վառվում է հավիտյան անլաց
Անմեռ տրտմության մի պայծառ տանջանք,-

1 սոնետ - բանաս. կառուցման կայուն ձևերից մեկը, բաղկացած է 14 տողից՝ սկզբում երկու քառյակ և վերջում երկու եռատող

2 ամուլ- փխբ. անօգուտ, ապարդյուն, անպտուղ

Մի պաղ քարացում աղոթքի կանգնած,
Մի վայելք-հուշի չմեռնող արբանք...

* * *

Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր,
Գիշերի պես խորհրդավոր.
Քո մեղավոր, խորհրդավոր աչքերը մութ,
Որպես թովիչ իրիկնամուտ:
Քո աչքերի անծայր ծովում մեղքն է դողում,
Որպես գարնան մթնշաղում:
Քո աչքերում կա մի քնքուշ բախտի վերհուշ,
Արբեցումի ոսկե մշուշ:
Մոլորվածին անխոս կանչող— փարոսի շող,
Քո աչքերը հոգի տանջող:
Ես սիրում եմ գգվող- անգութ աչքերդ մութ,
Որպես գարնան իրիկնամուտ:

ԵՐԳ

Կուրծքը հև առած, հավքից թև առած— ե՞րբ կգա նա.
Իմ սրտում սառած այս աշունը թաց— ե՞րբ կգնա նա:

Իմ թախծոտ հոգին, ցավս անմեկին[1] կամոքե՞ նա,
Իմ հիվանդ կրծքին, իմ արնոտ վերքին կմոտենա՞...

Կուրծքը հև առած, հավքից թև առած— ե՞րբ կգա նա,
Որ սիրտս ցաված, հոգիս բեզարած հանգստանա:

1 անմեկին - անբացատրելի, անլուծելի, անբաժան

* * *

Արդյոք կապրե՞ս սիրտս մաշող կարոտը հեզ...
Չարտասանված, սրտում թաղված երազներս աստեղաշող[1]
արդյոք կապրե՞ս...
Արդյոք կզգա՞ս սիրտըս այրող սերը երազ...
Այն խոսքերը, այն երգերը, որ քեզ ասել ես չեմ կարող.
արդյոք կզգա՞ս...

ՍԻՐԵԼԻ ՊԱՎԼՈ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ[2]

Եկան օրեր ու անցան, ու ինձ ոչինչ չմնաց.
Հուրեր, հուրեր— ծիածան, ու ինձ ոչինչ չմնաց:

Գարնան անուշ ծաղկանց պես, վարդերի պես հրահրուն,
Հողմով տարված հեռացան, ու ինձ ոչինչ չմնաց:

Ու նոքա, որ սիրեցին— սիրտս նրանց չտվի.
Գնացին ու չդարձան, ու ինձ ոչինչ չմնաց:

Եվ նոքա, ում սիրեցի իմ ցավով ու խենթությամբ—
Սրբեցին ու մոռացան, ու ինձ ոչինչ չմնաց:

Ձմեռ իջավ իմ գլխին, և՛ ցուրտ, և՛ խոր, և՛ անդորր,
Աղբյուրներս չորացան— ոչինչ, ոչինչ չմնաց...

---

1 աստեղաշող – աստղաշող, աստղերով շողացող

2 Պողոս, Պաոլո Մակինցյան (1884 – 1937) – գրականագետ, քննադատ, պետական գործիչ. Լազարյան ճեմարանում և հետագա տարիներին Վ. Տերյանի ամենամտերիմ ընկերներից. պոետի երկերի առաջին քառահատոր ժողովածուի կազմող, ծանոթագրող և խմբագիր:

* * *

Դարձյալ իջավ գիշեր, դարձյալ— ու կրկին
Մենակ ես դու, ինքդ քո դեմ՝ մերկ ու բաց.
Ալ նորից դու՝ շփոթմունքով ցավագին,
Երկյուղով ես, երկյուղով ես դու լցված:

Որպես տերևն աշնամուտի[1]՝ հողմի դեմ,
Դողում ես դու, որպես շյուղը եղեգի.
Ինքդ քո դեմ դու անզոր ես ու անզեն.
Ինքդ քո դեմ, ինքդ քո դեմ, իմ հոգի...

***

Շատ երգեր կան իմ սրտում,
Բայց ես էլ չեմ երգելու.
Փախչում եմ լուռ ու տրտում,
Չար հողմին հլու...

Համր է հիմա իմ լեզուն
Եվ խորհուրդս խոր.
Մի նոր հուր է ինձ կիզում
Դառն ու ահավոր...

Ու մենության մութ ծոցում
Սիրտս՝ ողջակեզ,
Սրբում եմ ես այն բոցում,
Որ անհայտ է ձեզ...

1 աշնամուտ – աշնանամուտ՝ աշնան սկիզբը

Եվ չեք տեսնի դուք բնավ
Հուրն ու մոխիրն իմ սիրո,
Լո՛ւռ և խո՛ր, և սեր, և ցավ,
Եվ ցնորք, և զոհ...

* * *

Եթե սեր չկա— ինչի՞ համար
Պիտի չարչարվեմ չար աշխարհում –
Կգնամ հողի գիրկը խավար,
Կլռեմ, որպես քարն է լռում.
Եվ ինձ թող ծաղրե երկինքը ցուրտ,
Երկիրը տոնե խնջույք ագահ—
Եթե աստղերում չկա խորհուրդ,
Եթե աղոթքս լսող չկա...

* * *

Անզարդ իմ օրվան, անտուն իմ կյանքին
Դեռ շատ է գալու և՛ բոց, և՛ աղետ.
Մինչև ազատվի հրկեզ իմ հոգին,
Հարություն առնե մոխրից առհավետ.
Մինչև դադարի մրրիկն այս մթին,
Մինչև հանդարտեն շշուկներն այս չար
Ու վատնեմ առատ իմ գանձը հետին
Երկրային միգում երկունքով հոժար.
Թո՛ղ գան—պատրաստ սիրտս և հլու,
Որպես նորահարսն ահով մի խնդուն

Մնոնում է մահիճ— այնպես տանջվելու
Գնում է հոգիս հրճվանքով անհուն...

* * *

Նույնն է հասցեդ հնամյա,
Նույնն է օթելը[1]— «Պարիժ»,
Բայց տրտմությունս հիմա
Այլ է, կարոտս՝ ուրիշ:

Նույնն է խանութը դեմի,
Նույն ցուցանակը հիմար.
Նույն մեղմախոս Վեռլենի
Երգն ես կրկնում դու համառ:

Գուցե այստեղ գտներ իմ
Սիրտը շրջիկ ու մոլոր.
Եվ խնդություն մի վերին,
Եվ ամոքում, և՛ օրոր:

Բայց հեռանում եմ անկամ.
Ի՞նչն է վանում ինձ, ինչո՞ւ:
Մի՞տդ է՝ ինչպես մի անգամ
Ինձ ասացիր դու «գնչու»...

1 օթել–հյուրանոց

* * *

Մենք բոլորս, բոլորս
Մանուկներ ենք որբ.
Մանուկներ ենք մենք կորած—
Հավիտյան անմայր.
Մենք բոլորս մոլորված
Անտառում խավար...

Մենք նետված ենք բոլորս
Երկիրն այս հեռու,
Կանչում ենք միշտ— ձայն չկա,
Աղոթում ենք — ոմ.
Ո՞վ կփրկե, ով կգա,
Որ տանի մեզ տուն...

* * *

Մանուկ ենք մենք—երկու խեղճ,
Մոլորված մանուկ,
Եվ չարիքին չկա վերջ
Եվ մենք միշտ անօգ.–
Մենք ճանապարհ չգիտենք,–
Իսկ խավարն ագահ.
Միայն մենք ենք, միայն մենք,
Էլ ոչ ոք չկա...

ԱՐԱՐԱՏԻՆ

Ներբող[1]

Երկնասլաց ու թեթև:
Նրբակապույտ ծածկած մեզ,
Դո՛ւ, հրեշտակ լուսաթև,
Նյութեղեն չես դու երբեք:
Հայոց արնոտ աշխարհի
Հոգին ես դու անարատ,
Հուրը հար թող հրահրի
Սեգ ճակատիդ, Արարա՛տ:
Եվ ավերվող մեր սրտում
Եռա անմար ու առատ,
Դո՛ւ, պահապա՛ն մշտարթուն,
Լուսակատա՛ր Արարատ...

Չեմ տեսել քեզ, բայց որպես
Անուշ ցնորք իմ հոգում
Պայծառ ես դու, հրակե՛զ,
Հրապսակ ու կանգուն —
Արդար դրոշ հայության,
Սիրո սեղան հրառատ,
Դո՛ւ, իմ երկրի հարության
Անխաբ վկա՛, Արարա՛տ,
Որքան մնանք մենք նկուն[2],

1 ներբող–օդա, գովասանական կամ փառաբանական բովանդակություն ունեցող քնարական ստեղծագործություն՝ նվիրված որևէ նշանավոր անձի կամ իրադարձության, գովերգ

2 նկուն– ընկճված, հաղթահարված, վիատված, վիատ, խեղճ, նվաստացած, ճնշված, արհամարհված, թույլ, անզոր, տկար

Որքան խավարն իջնի խոր,
Ծիրանավո՛ր մեր հոգուն
Դո՛ւ, պահապա՛ն զորավոր...

Որպես երազ լուսեղեն
Ձյունապայծառ ու շողուն՝
Դո՛ւ, անխորտա՛կ ապավեն
Հրաձարակ[1] մեր հոգուն.
Կանգնի՛ր, անկյա՛լ[2] ժողովուրդ,
Եվ հավատա՛, և տոկա՛.
Կա քո վշտում վեհ խորհուրդ
Եվ խաչվածին մահ չըկա.
Պարզվի՛ր պայծառ դեպի վեր,
Ցոլա հրով անարատ,
Երկրիս մոխիր ու ավեր,
Դո՛ւ, անմահ սիրտ, Արարա՛տ...

* * *

Ախ, Բուզուլուկ[3] քաղաքում
Նստած ես հիմա,
Ինձ ես մնում դու անքուն
Օ, պրինցուհի[4] Նա:

---

1 հրաձարակ – հրի ճարակ՝ կերակուր դարձած, հրկիզված

2 անկյալ– տնանկ, ընկճված,

3 Բուզուլուկ – քաղաք Օրենբուրգի մարզում

4 պրինցուհի – արքայի կամ արքայազնի կին կամ դուստր, պրինց–թագավորական տան անդամի և տիրակալ իշխանի տիտղոսը կրող անձ Արևմտյան Եվրոպայում...

Ինձ ես անվերջ երազում
Փայտե դղյակում,
Եվ գիշերն է արտասվում
Քո Բուզուլուկ քաղաքում:

Բայց ես չեմ գա բախելու
Դուռը դղյակիդ.
Ես հեռու եմ, ես հեռու՝
Ցնորքը կյանքիդ:

Անուրջներով միամիտ,
Մտքով նվագուն,
Ինձ ես պարզել պարզ հոգիդ
Քո Բուզուլուկ քաղաքում:

Շուտով արևն այդ միգում
Ցերեկ կդառնա,
Դու նստած ես դեռ անքուն,
Օ, պրինցուհի՛ Նա...

* * *

Ցուրտ հոկտեմբերն է ծեծում իմ դուռը,
Եվ մրրկում է հողմը գիշերս,
Բոլորն անզոր է, բոլորն իզուր է
Եվ անամոք է, որպես հուշերս:

Քամին ծեծում է, ցրում թերթերը,
Մի չար արև է այրել երկիրս.

Մերկ անապատ են դարձել արտերը,
Ողբի նման են բոլոր երգերս:

Թույն ու թախիծ են անեղծ հուշերս,
Մութ մտքերին իմ հոգիս ավար է. –
Ալեկոծում է հողմը գիշերս.–
Անծայրածի՛ր է, սի՛րտ, քո խավարը...

* * *

Ձեռներում Ձեր մանրիկ, նվագուն,
Ձեր ձայնում, երբ ասում եք «Տերյան»,
Ձեր բարակ ժպիտում նաիրյան —
Մի թախիծ կա մեղմած ու թաքուն:
Շուրթերում Ձեր մաքուր ու բուրյան,
Ձեր պարում՝ հեզանազ ու ճկուն,
Հաշտորեն խոնարհված Ձեր հոգում
Նաիրյանն է երգում, հնօրյան.
Երբ կիզում եք Ձեր միշտ հրախանդ՝[1]
Նայվածքի բոցերով մթամած,—
Ուզում եմ օրորել Ձեզ կամաց,
Փայփայել երգերով հնավանդ[2],
Տխրությամբ հնազանդ ու մեղմած,
Նաիրյան նվագով իմ հիվանդ:

1 հրախանդ – բորբոքված կատաղի խանդով

2 հնավանդ – հնուց ավանդված, հին դարերից իբրև ավանդ հասած, հնամենի, վաղեմի, վաղնջական

* * *

Դու կնստես իրիկվան
Կարոտով անքուն,
Ինձ կկանչես, ու կգամ
Անտես ու թաքուն.
Կբացվի լույս առավոտ,
Կդառնամ ստվեր,
Սիրտդ կայրի նոր կարոտ,
Դառն ու նոր մի սեր.
Ու դանդաղկոտ մեկի հետ
Կգաս ձորափ, կիջնես ցած,
Կերթաս, կերթաս դեպի գետ
Նոր խինդով արբած,
Կգտնես ինձ մահճում ցուրտ,
Կգրկես քնքուշ,
Ու կլինի սերը լուրթ[1],
Հավերժ և անուշ...

* * *

Ծույլ ու դանդաղ
Ձյունը ծաղկուն
Իմ անուրախ
Հյուղն[2] է ծածկում:

Համր է չորս դիս,[3]

1 լուրթ – բաց կապույտ գույնի, կապտավուն, փխբ. պայծառ, ուրախ
2 հյուղ – փոքրիկ՝ խղճուկ տնակ, խրճիթ
3 դի – կողմ

Մուժ ու մշուշ.
Ձյունը սրտիս,
Սրտիս անուժ.

Խոր ձյունի տակ
Սի՛րտ իմ անօգ,
Սի՛րտ իմ մենակ,
Ո՛րբ իմ մանուկ,

Ինչ ունեիր
Բոց ու բորբոք,–
Ողջը՝ տվիր,
Սի՛րտ, անամոք:

Ինչ ունեիր
Հուր ու մաքուր,–
Ողջը՝ տվիր
Անտրիտուր:[1]

ՀՐԱԺԵՇՏԻ ԳԱՋԵԼ

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով.
Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես՝ մնաս բարով:

Մնաք բարով, ասում եմ ես, բոլոր մարդկանց՝ չար ու բարի,
Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես՝ մնաս բարով:

Մնաք բարով, ասում եմ ես, ընկերներիս՝ մոտ ու հեռու,
Ոսոխներիս՝ չար ու արթուն, ասում եմ ես՝ մնաք բարով:

1 անտրիտուր— առանց փոխհատուցման, չհատուցվող

Երկնի մովին,[1] կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին լույս ոլորտում, ասում եմ ես՝ մնաք բարով:

Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտույտներին ոսկի արտում, ասում եմ ես՝ մնաք բարով:

Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Մանուկներին վառ-խլրտուն, ասում եմ ես՝ մնաք բարով:

Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու.
Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնաք բարով, մնաք բարով:

* * *

Երկու դժբախտ մանուկ,
Երկու երկչոտ ուրու.
Նետված ենք մենք անօգ
Երկրում հեռու, հեռու.
Մութ հողմերին ավար՝
Երկու տերև մոլոր,
Անտառներում խավար,
Ուղիներում ոլոր.[2]
Սիրտը մեր որբ՝ ահից.
Ո՞վ մեր հոգին խոցված
Պիտի փրկե մահից,
Երբ չկա աստված...

1 մով- կապույտ, մավի, ծավի, լուրթ, բիլ

2 ոլոր - ոլորուն, ոլորապտույտ, փխբ.՝ մանվածապատ, խճճված

* * *

Սրտակեզ կսկիծ մի հին,
Որ անդուլ սարդի նման
Հյուսել է հրե ոստայն,
Մաշում է հար իմ հոգին:
Ու որպես անդեղ մի ախտ,
Հին ցավ մի, թունոտ մի խոց,
Մթամած, ագահ մի բոց
Կիզում է կյանքս անբախտ:
Գնում եմ՝ ուղին իմ ծուռ
Եվ գիտեմ՝ դեպի կորուստ.
Նիշված է բախտս վերուստ,
Եվ չկա փրկության դուռ...

* * *

Մաշում է իմ սիրտն անդադար
Հին երգ մի՝ ծանոթ ու տրտում.
Կիզում է կարոտ մի արթուն,
Մաշում է իմ սիրտն անդադար:
Դրժել եմ կարծես մի երդում,
Մի ուխտ եմ թողել անկատար,
Մաշում է իմ սիրտն անդադար
Հին երգ մի՝ ծանոթ ու տրտում:

* * *

Տնակն իմ ցուրտ ու անզարդ,
Օրերս համր են հոսում.
Ընկերս գարշ[1] մի՝ գեշ սարդ,
Ոստայն է, չարը, հյուսում.
Հյուսում է ցանց իմ սրտում,
Կիտում է թույն իմ հոգում,
Արյունս նա է արթուն
Քամում միշտ համր ու տոկուն.
Մեռնում եմ՝ լուռ ու դժվար,
Անցնում եմ՝ հուր մի անույժ,–
Իջնում եմ սև մի աշխարհ,
Չար խոց են և՛ միտք, և՛ հուշ...

* * *

Գիշերն իջավ սև ու չարաչք.[2]
Լինենք խաղաղ, մեղմ աղոթենք,
Գուցե բացվի լուսե հրաշք,

Գուցե անցնի խավարակուռ[3]
Մշուշն այս չար, և ազատվենք—
Լինենք մանուկ, լինենք մաքուր.

---

1 գարշ – զզվանք պատճառող, զզվելի

2 չարաչք – չար աչք ունեցող, չարագուշակ

3 խավարակուռ – խավարամած, խավարչտին, խիստ խավար, փխբ. տառապանքից խավարած, չար, մռայլ դարձած

Մեր սրտերում պահենք մի հուր,
Խաղաղ մի լույս խավարում չար,
Գուցե բացվի զնդանն անդուռ.

Օրհնենք բոլորն, ինչ էլ որ գա,
Եվ ընդունենք սրտով հոժար,
Գուցե և Նա մեր ցավն զգա...

* * *

Դողում է մարմինդ կիսաբաց,
Խոսքերդ թվում են հեռավոր,
Շրթունքներդ արնով են հարբած,
Հայացքդ բոցեղեն է ու խոր:

Քո խելառ խնդությամբ է այսօր
Գինովցած իմ թախիծը խելառ,
Քո սրտի արեգակը բոսոր՝[1]
Պարզել ես գիշերին իմ խավար:

Ոսկեղեն է հայացքդ խոցող,
Ժպիտդ՝ խենթացնող մի օրոր,
Համբույրդ խայթում է ալ բոցով
Անեՙյլա, զորեղ ու զորավոր...

1 բոսոր – ալ կարմիր, արյան գույնի

* * *

Ձյունը մանում է բարակ,
Ցած է իջնում թել-թել.
Քաղցր է նստել անկրակ,
Քեզ հետ հինը թերթել,

Բռնել այս ձեռքը նրբին,
Նստել, նստել անքուն.
Զզգալ, որ արդեն արփին
Ցոլաց արևելքում:

Զզգալ, որ բացվում է օր,
Նստել անկամ,[1] անուժ,
Լսել լոկ, որպես օրոր,
Խոսքդ— երգից անուշ:

* * *

Անդարձ կորել է սրտիս խնդումը,
Թունոտ մի մեգ է իջել հոգում իմ.
Մտածումներս թախիծ ու թույն են,
Գալիքը սև է, որպես խոկումն իմ...

Աշխարհն անգութ և ահավոր է,
Եվ ինչ է սերը-անզոր մանուկ մի.
Չարն է հաղթողը, չարն է հզորը,
Թախիծն անզոր է, և սերն անօգ է...

1 անկամ – ակամա, իր կամքից անկախ

Մեր կյանքը դառն է – մեր օրը մութ է,
Անզոր են, զուր են վեճն ու կասկածը.
Բոլորը ծաղր է, բոլորը սուտ է,
Չարն է, որ տեր է, չարն ինքն աստված է:

* * *

Տրտում է տունս
Ու բախտս՝ բիրտ.
Ախ, ո՞ւմ ես, ո՞ւմ ես
Կանչում դեռ, սի՛րտ.
Ննջի՛ր, մոլո՛ր իմ,
Ննջի՛ր, իմ բո՛րբ.
Բոլորն անզոր են,
Բոլորը՝ որբ.
Երկինքը ցուրտ է —
Չարով հաստված.
Ո՞ւր է խորհուրդը,
Ո՞ւր է Աստված...

* * *

Ես մի անմայր որբ մանուկ—
Երկրներում տար[1].
Խոց-խոհերով անամոք,
Մրրիկներում չար.
Ու գնում եմ ես տարված
Անղեկ ու անթի,

1 տար — հեռու, հեռավոր, օտար

Ամեն ինչից վտարված,
Միշտ վտարանդի.
Օտար ու ցուրտ ափ,
Ո՞վ կնդունե ինձ,
Հոգում իմ ահ ու տագնապ,
Եվ մահ, և՛ թախիծ.
Օտար կողմում կիջնի խոր,
Խոր գիշեր, ու ես
Ինքս կասեմ ինձ օրոր,
Ինքս ինձ— մոր պես...

* * *

Գալիս ու որպես ալիք
Գնում են օրերն արագ:
Սիրո՛ւն իմ, ննջի՜ր, բալի՛կ,
Աշխարհը՝ մի չար կրակ:

Երկինքը փակ է հավետ,
Երկիրը՝ դառն ու դաժան.
Լոկ ես եմ, ես եմ քեզ հետ,
Մանո՛ւկ իմ, մաքո՛ւր շուշան:

Քնքո՛ւշ իմ, քնքո՛ւշ թիթեռ,
Այրված են թևերդ նուրբ,
Ընկած ենք երկրում անտեր,
Եվ սերն է, սերն է լոկ սուրբ...

* * *

Մոքերից այս տարամերժ[1]
Ազատեցեք ինձ,
Մորմոքումից այս անվերջ,
Անանց այս ցավից.
Խորն է խոցն իմ և աննինջ
Ու սրտակեղեք,
Բուժեցեք ինձ սիրով ջինջ
Եվ բարի եղեք.
Ուխտել էի ընդունել
Տանջանքը– խնդում,
Բայց մոլորվեց սիրտս անել
Խոհերի բանտում.
Ես պարտվեցի մութ մարտում,
Ընկա չար խոցված–
Չեմ հավատում էլ մարդուն
Եվ չունեմ Աստված...

* * *

Երկրից քո հավետ հեռու
Դեպի իմ աշխարհը սև
Գալիս ես, քնքուշ ուրու,
Թեթև միշտ, միշտ լուսաթև:

Պարզում ես ձեռքդ բարակ,
Կանչում ես ինձ այստեղից,

1 տարամերժ – անմիաբան, իրարամերժ, հակասական

Ու սիրտս մի հին կրակ
Այրում է, մի հին թախիծ:

Գրկում ես սիրով անհույս
Այնպես միշտ ջերմ ու համառ,
Որ սիրտս՝ համր ու անհույզ
Բացվում է սիրո համար:

Օրերը դառն ու տոկուն
Տարել են և՛ սեր, և՛ հուր,
Բայց կա դեռ, կա իմ հոգում
Բաղձանք մի՝ ջերմ ու մաքուր:

Ուզում եմ լինել քեզ հետ,
Այնտեղ՝ քո անհայտ երկրում,
Կիզվել քո սիրով հավետ,
Այրվել միշտ քո սուրբ հրում...

Բայց շշնջում է կրկին
Մեկը չարախինդ ու մութ.
– Հեքիաթ է անմեռ հոգին,
Դժոխքն ու դրախտը՝ սուտ...

* * *

Դուրսը՝ մայիսն է, արբածը,
Դուրսը՝ խնդում ու աղմուկ.
Ցուրտ է զնդանը մեր, թաց է,
Սի՛րտ իմ, անբա՛խտ դու մանուկ.
Լույս է երկինքն ու փողոցը,
Դուրսը՝ գարուն է անմութ.

Դառն են հուշերը մեր, խոց են,
Ողջը անխինդ ու անգութ.
Սի՛րտ իմ, հիվա՛նդ իմ, բալի՛կ իմ,
Օրը մեր, տունը մեր՝ ցուրտ.
Ցավ է անցյալն ու գալիքը,
Ցավ է, երազ ու խորհուրդ...

* * *

Քեզ այնքան անգութ
Կիզել են նոքա
Չարությամբ ագահ,
Սիրով սին ու սուտ.
Ու կրկին ահա
Բաց ես՝ թող կիզեն.
Օ՜, սի՛րտ իմ, անզե՛ն,
Անզո՛ր երեխա...

* * *

Քեզ, իմաստնագույն
Խիզա՛խ նավապետ,
Հանձնում եմ հավետ
Նավակն իմ բեկուն.
Միայն դո՛ւ, անքուն
Բոցե՛ նավավար,
Գիտես ճանապարհ
Մթնում այս անհուն...

* * *

Ոսկեհանդերձ եկար և միգասքող,[1]
Տխուրաչյա աշուն, սիրած աշուն.
Տերևներիդ դանդաղ թափվող ոսկով,
Մետաքսներով քնքշաշրշուն:

Նայվածներով խորին, եկար, ներող,
Եկար կրկին գերող, խորհրդավոր.
Եկար, հուշիկ, անչար ավաղներով,
Օրորներով ամենօրոր:

Քո արևին հատնող և քո երգին, երգին:
Եվ շրշյունիդ փափուկ, և բեկումիդ — ողջույն.
Օ՜, հարազատ, սիրած, եկար կրկին,
Իմ քնքշագին աշուն...

ՊԱՌԼՈՅԻՆ

Դու գիտես, որ բոլորն ապարդյուն,
Բոլորը «կատակ է հիմար».
Բայց պահում ես խոհերդ տրտում
Ու գնում ես համառ:
Դու գիտես, որ մոտիկ են հիմա
Օրերը հանգիստ ու անվերջ,
Բայց գնում ես անդուլ... Գնա,
Մոտ է օրը հավերժ...
Ախ, մոտ է օրն այդ անանց,

1 միգասքող – մեգով (մառախուղի թանձր շերտով) սքողված՝ ծածկված

Եվ գիտենք–կգա արագ,–
Բայց դու դեռ սիրում ես կանանց
Իրանն ու ձեռքը–բարակ...

* * *

Մթնում է միգում արևն իմ բորբոք,
Սուզվում եմ անզոր խավարից–խավար,
Բայց քո սուրբ սիրո հրահրումն անմար
Կփրկե հոգիս մթնում անողոք:
Անծիր բարությամբ, որպես անոխ մայր,
Ներել ես սրտիս անկումներն անօգ,
Սիրել ես, որպես անբախտ ու անհոգ
Քո մանկան — հոգիս օրերում դժվար:
Դու չէի՞ր արդյոք, քո դառնության մեջ,
Երբ սրտիս իջավ ստվերն ահարկու—
Մեղմ փարատեցիր վարանում ու վեճ,
Որպես արեգակ մթնում իմ հոգու,
Ու որպես կնիք անեղծ ու անջինջ —
Դրիր իմ սրտում անունը քո ջինջ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Սոնետ

Մառախուղներ՝ ծանր ու մռայլ բոլորած,
Ցուրտ կրակներ՝ ահաբեկ ու դողդոջուն,
Նևա՜ն, Նևա՜ն, մի՛շտ դավադիր, չի ննջում,

Վետերը՝[1] մութ, օձանման ոլորած:
Եվ պալատներ—արյունաներկ անրջում—
Արքայական—սևախորհուրդ ու սառած—
Բյուր աչքերը խոժոռ ու չար սևեռած
Դիվային ի՜նչ ոճիրներ են անրջում:

Ու երկինքն՝ ամպ, որ հենվել է սև գետին,
Հայացքով իր անաստղ, անխինդ ու մռայլ
Նայում է միշտ այնպես ցուրտ ու անայլայլ,
Որ անսփոփ՝ աչքդ նետում ես գետին:
Բայց դյութիչ է մղձավանջն այս դժնափայլ,
Որ գրկում է քեզ ահերով իր մթին...

* * *

Աշխարհից ես չեմ տրտնջում,
Չեմ գանգատվում.–
Չէ՞ որ բոլորն են տանջվում,
Բոլորն են տրտում:

Եվ ինչպե՞ս և ո՞ւմ աղոթեմ
Անել բանտում.–
Ախ, բոլորն ինձ պես անզեն,
Եվ բոլորն անտուն...

1 վետ – ջրի մեղմ, թեթև ալիք, ծփանք, ալիքավորում, գույների՝ ցոլքերի մեղմ խաղ

* * *

Մի փրկություն կա միայն,
Լոկ մի ճանապարհ.
Սիրել–այրվել հավիտյան,
Խոցվել անդադար...
Կա միայն մի խնդություն
Արժան ու հավերժ.
Լինել անզեն ու անտուն,
Չարչարվել անվերջ...

* * *

Նույն երգն եք երգում դուք, նույն հինը,
Եվ քանի՜ դարեր, քանի՜.
Որքա՜ն, որքա՜ն մտերիմ է՝
Ձեր դաշնը՝[1] սիրտ ու քամի...

Վայերդ նվվում ու նվվում է,
Նույն վայն ես վայում անդուլ.[2]–
Քո սիրտն էլ արդյոք ցավո՞ւմ է,
Քամի՛, երբ լալիս ես խուլ...

* * *

Շղթայված է իմ հոգին, գերի խանդոտ հուշերիս,
Եվ չկա ինձ ազատում անվախճան այս գիշերից...

1 դաշն – դաշինք, ներդաշնակություն

2 անդուլ – դուլ՝ դադար չունեցող, անդադար

Փրկեցեք ինձ այս բանտից, խավարից այս սրտախոց,
Ստվերներից այս տրտում, ամբոխից այս համր ու հոծ[1]...

Ուրուների այս երկրում, որպես մի նոր Ոդիսևս,
Թափառում եմ անխնդում և ահաբեկ նրա պես:

Եվ որպես նոր մի Ղազար, ահա՛ ապրում եմ ձեզ հետ,
Ուրիշ երկիր մի տեսած և ուրիշ, ուրիշ հավետ:

* * *

Թողի երկիրն իմ հայրենի,
Անահ[2] անցա Արաբ ու Հինդ.
Տեսա մարդիկ չորսգլխանի,
Տեսա հազար աղետ ու խինդ:
Հասա մինչև Չինումաչին,[3]
Հասա մինչև ծովը ճերմակ,
Տեսա երկրի ծայրը վերջին
Եվ դրախտի դուռը կրակ:
Հազար անգամ ծագեց Արև
Եվ մայր մտավ հազար անգամ,
Տեսա ծառեր հրատերև,
Տեսա ակունքն արեգական
Եվ փերիներ քնքուշ ու սև,
Աչքերը բոց, իրենք խավար,
Եվ փերիներ[4] տեսա թեթև

1 հոծ – թանձր, խիտ, ստվար, զանգվածային. թավ, հաստ

2 անահ – ահ՝ երկյուղ չունեցող, քաջ

3 Չինումաչին – Չինաստան

4 փերի – իգական սեռի առասպելական բարի ոգի, պարիկ. փխբ. չքնաղագեղ՝ չնաշխարհիկ կին՝ աղջիկ. հավերժահարս

Փրփուրի պես ձերմակ ու վառ....
Բոլորը ծուխ, բոլորն ավազ,
Բոլորն ավար ջուր ու քամուն,
Չկա քեզնից գերիչ երազ,
Քո անունից անուշ անուն...

* * *

Կանգնել ես դու նրբահասակ,
Ժպտում ես ինձ, գերում ես ինձ,
Պարզել ես ինձ երկու նիզակ,
Երկու հրով այրում ես ինձ:
Նազով նրբին ասում ես՝ ե՛կ.
Այնպես անուշ նայում ես ինձ,—
Խուրձ-խուրձ թափած՝ մի սև արեգ-
Շող մազերով այրում ես ինձ:
Պարզվում ես ինձ, սիրուց գինով՝
Քնքուշ ձայնով կանչում ես ինձ,
Արբած եմ ես անուշ թունով,
Ա՜խ, ինչ անուշ տանջում ես ինձ...

* * *

Այնպես նազիկ, այնպես թեթև, այնպես օրոր
Քայլում ես դու:
Ոսկելուսիկ,[1] ծ, հրաթև, այնպես բոսոր
Փայլում ես դու:

1 ոսկելուսիկ – ոսկեգույն լույսով

Դու՝ վիթ[1] ահոտ, դու՝ խուսափուկ, այնպես անուշ
նայում ես դու:
Եվ այնպես տոթ, այնպես փափուկ, այնպես քնքուշ
Փայում ես դու՛,
Նայվածքդ՝ տեգ, ժպիտդ՝ նետ, օ՜, խնայի՛ր,
Խայթում ես դու:
Ինքըդ՝ արեգ, սերդ՝ աղետ, օ՜, մի՛ նայիր,
Դյութում ես դու:
Աշխարհն ամեն քո ոտքի տակ՝ թագուհու պես
Տիրում ես դու:
Օ, հրեղեն, չար արեգակ, ում որ նայես՝
Այրում ես դու...

ՊԱՈԼՈՅԻՆ

Թողած Երևանդ սիրուն,
Ուր քեզ օրորում էր Ասոն,[2]
Հառել ես հայացքդ հեռուն,
Որպես մի նոր Ցազոն:[3]

Այնտեղ նաիրյանն է նազում—
Ասող լացացնում է «մեին».—

---

1 վիթ – այծքաղների կարգին պատկանող այծյամանման կենդանի, որ շատ գեղեցիկ ու բարեկազմ մարմին ունի, անտիլոպների մի տեսակ, փխբ. գործածվում է որպես կանացի գեղեցկության և մասնավորապես՝ մարմնի գեղակազմության խորհրդանիշ

2 Ասո – հայտնի դուդուկահար Երևանում, որի նվագը Տերյանը լսել է 1917 թ. սկզբին

3 Ցազոն – ըստ հունական դիցաբանության՝ թագավորի որդի, որ, արգոնավորդների գլուխն անցած, գնաց Կոլխիդա (Կողքիս)՝ ոսկեգեղմը բերելու... Հեղինակն ակնարկում է բարեկամի՝ հայրենիքը մոռանալու հավանականությունը...

Քեզ այլ մի մուզիկ է հուզում—
Օվկիանի երգն, ամեհին[1]...

Հիմա սոսինները ծաղկում,
Ինչ քաղցր կանչում են քեզ Նորք,
Իսկ դու երազում ես անքուն,
Անքուն տենդով— «Նեվ-Յորք»:

Գնա՛, ես օրհնում եմ ագահ
Կարոտն ու հրահրումն այդ խոր,
Բայց կգա, օ՜, գիտեմ ես, կգա,
Կգա տրտում մի օր.-

Ու մեին մեր, նվագն իր մորմոք
Սրտում քո անհանգրվան
Կերգե, և հոգիդ անամոք
Կասե՝ «օ՜, Երևա՜ն»...

* * *

Մի հին տրտմություն՝ անսփոփ ու խոր,
Որպես վիշտն անել հայրենի հողիս,
Երգում է սրտիս դառնագին օրոր
Եվ անդուլ ցավով մաշում է հոգիս:
Գիտեմ՝ չի գալու ազատության օր,
Այնպես խոր գիտեմ, թեև անհանգիստ
Հոգիս մոգում եմ երազով անզոր
Ու դեղ որոնում անսփոփ վերքիս:

1 ամեհի - անսանձ, անզուսպ, կատաղի

Աղմուկն այս կյանքի արդեն իմ սրտում
Հնչում է որպես մահերգ մի տրտում,
Ու լսում եմ այն, որպես հնավանդ
Մայրական օրոր՝ տխրությամբ անուշ.
Եվ վաղուց հոգիս՝ համր ու հնազանդ
Ձգտում է երկիրն՝ անցավ ու անհուշ:

* * *

Որքան դեռ տրտունջ, քանի տրտմություն
Պիտի օրորեն օրերս կրկին,
Մորմոքուն դողան խոնջած[1] իմ սրտում,
Ձուլվեն դառնությամբ լեցուն իմ երգին...
Եվ որքա՜ն, որքա՜ն պիտի գա վրադ,
Հոգի՛ս, մահու չափ թախիծ ու խոցում,
Քանիցս պիտի դողաս անփարատ
Երկու աշխարհի սահմանագծում...

* * *

Եղիր ինձ քույր... Թող որ հոգիս
Գտնի անդորր ոսկեվորիկ[2]
Քո նայվածի ցոլքում հանգիստ–
Ես չեմ ուզում հուր ու մրրիկ:
Օ, խաղաղի՜ր քո նրբագին
Նայվածի տակ, ոսկի բոցում
Քո աչքերի, որբ իմ հոգին —

1 խոնջած – հոգնած, խոնջացած

2 ոսկեվորիկ – ոսկևոր, ոսկեգույն, ոսկեփայլ

Ես չեմ ուզում ալեկոծում:
Ձեռքս բռնիր և նրբանուրբ
Ինձ ուղեկցիր—ես որբ, ես կույր...
Հոգիս այնպես կարոտ է սուրբ
Մտերմության... Եղի՛ր ինձ քույր...

* * *

Լինեի չոբան սարերում հեռու,
Գայիր անցնեիր վրանիս մոտով,
Իրար նայեինք անուշ կարոտով,
Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու:
Գնայիր աղբյուրն ու ետ դառնայիր,
Թեթև, որպես վիթ ելնեիր ձորից,
Մի ջուր տայիր ինձ քո լի սափորից
Ու վրանիս մոտ հանգստանայիր:
Եվ վերջալույսին մի օր, օ, մի օր,
Մանիշակագույն սարերի լանջին
Բացվեինք իրար խոսքերով չնչին,
Բայց ուխտը լիներ անխարդախ ու խոր:
Ու երբ գնայիր՝ գիշերս անքուն
Դառնար գալիքի մի թովիչ խոստում,
Ու վառվեր հոգիս պարզ ու իմաստուն՝
Իմ վրանի տակ, սարերի գրկում:

* * *

Հովիվներն այնտեղ կրակ են արել
Սարերի վրա— օ, անուշ հեռու.
Ձայնում են անվերջ մթնում իրարու,
Հովիվներն այնտեղ կրակ են վառել:
Ա՜խ, սիրտս թռավ աշխարհն այն հեռու,
Ուր, հի՜ն, հնչում ես, բարբառ հայրենի.
Հովիվներն այնտեղ կրակ են արել
Սարերում իմ բաց, օ, անո՜ւշ հեռու...

* * *

Հովիվներն ազատ հեռու սարերում
Կրակ են անում—ձայնում են իրար:
Ես՝ կալանավոր աշխարհում արար,
Հովիվներն՝ ազատ հեռու սարերում:
Ու երկրից երկիր—գերումից գերում
Գնում եմ անդուլ անհայտին ավար,
Հովիվներն ազա՛տ հեռու սարերում
Կրակ են անում—ձայնում են իրար...

* * *

Դու հնչիր— քո սրտի գարունն է,
Իսկ իմում՝ վերջինն է հիվանդոտ,
Բայց քոնից բորբոքուն ու խանդոտ,
Դու հնչիր, քո սրտի գարունն է:
Օ՜, երգիր, քո հոգին վառվում է,

Իսկ իմում մահացում է տենդոտ,
Դու հնչիր, քո սրտի գարունն է,
Իսկ իմում՝ վերջինն է հիվանդոտ...

* * *

Օ՜, կգան օրեր ավելի տրտում
Ու դժնի, դժնի, առավել դժնի.
Կդառնա հանկարծ բոլորն ապարդյուն,
Օ՜, կգան օրեր ավելի տրտում:
Կլռե տրտունջն անամոք սրտում,
Եվ փոշու նման ձանձրույթը կիջնի...
Օ՜, կգան օրեր ավելի տրտում
Եվ դժնի, դժնի, առավել դժնի...

* * *

Երբ կհոգնեմ, տարե՛ք ինձ երկիրն իմ հեռու,
Այնտեղ կա նուրբ երեկո, մեղմախոս առու,

Այնտեղ հանգիստ կննջեմ մեռած իմ մոր հետ,
Կգրկեն ինձ երազներ դյութական հավետ:

Բայց և քնում ծանր ու խոր սիրտս կզգա միշտ
Դառն ու տխուր մի օրոր— հայրենի մի վիշտ:

Եվ եթե դուք գաք մի օր այցի իմ շիրմին,
Կժպտա ձեզ իմ սրտից բուսած վարդենին:

* * *

Գինով եմ, գինով եմ ես էլ,
Թեթև եմ, անհոգ, լեզվանի.
Օրորիր մեզ՝ պանդոկ կարուսել,
Օրորիր, օրորիր մեզ, գինի՛:

Պոետ մի անտեր ու անտուն
Գիտեմ ես՝ կորա՜ծ եմ, կորա՜ծ.
Բայց դեռ երգն իմ երգում է տենդում—
Օ, երա՜զ է, երա՜զ ու երա՜զ...

* * *

Ինչ քա՜ղցր է նստել այստեղ,
Ժպտալ քո խոսքին սեթևեթ...
Իսկ ներսում իմ, ներսում մի ասեղ
Ասղտում[1] է—ննջե՜լ առհավետ...

Պարում են, երգում վետերում,
Սահում ենք եթեր առ եթեր.
Գուցե վաղն իսկ կարդաս թերթերում
Եվ ժպտաս՝ «հանգեալ ի տէր»[2]...

---

1 ասղտել – ասեղով ծակել. փխբ. խոցոտել, հոգեկան վիշտ պատճառել, մարմնի վրա ծակծկոց զգալ

2 հանգեալ ի տէր – գրաբար կրոն. արտահայտություն, որ գործածվում է հանգուցյալի մասին խոսելիս, ըստ որի մարդիկ մահանում են Տիրոջ՝ Աստծո կամքով և հանգրվանում նրա երկնային արքայության մեջ

* * *

Դուք մի հին վեպ եք դանդաղ թերթում
Այնպես հոգնած ու այնպես տրտում.
Արդյոք ու՞մ վիշտն է, ո՞ւմ ցավագին
Կարոտն է կիզում Ձեր պարզ հոգին:
Ես Ձեզ սիրում եմ, երբ Դուք, Տիկի՛ն,
Կարծես, հիշում եք մեռած մեկին
Ու երբ նայում եք այնպե՛ս մաքուր
Եվ այնպես հե՛զ եք ու այնպես քո՛ւյր,
Կարծես հեռվից եք հետս խոսում,
Կարծես երազ եմ Ձեր երազում,
Անտես մի գիրք եք կարծես կարդում
Եվ կիսանիրի եք և կիսարթուն:
Կրակն անցնում է բուխարու մոտ,
Ա՜խ, ինչ անուշ է լույսում աղոտ,
Երբ աննշմար եք, որպես ստվեր,
Բռնել ձեր ձեռքն ու անխոս նստել...

* * *

Այնպես բարակ են Ձեր մատները, Տիկի՛ն,
Այնպես քնքուշ են Ձեր ձեռները նեղ,
Եվ ինչ խաղաղ է նայում Ձեր հոգին
Ձեր աչքերից այդ մաքուր ու անմեղ:
Այստեղ նստում եմ ես Ձեզ հետ միշտ այնպես՝
Որպես եղբայր մի անուշ քրոջ մոտ,
Կարծես նանիկ է գգվանքը Ձեր հեզ,
Երբ մեղմ հանգչում է կրակն այս աղոտ:
Մի ազնվություն կա ժպիտում Ձեր այդ խոր,

Ձեր մեջ միշտ մաքուր են և՛ կիրք, և՛ սեր,
Քնքուշ են, գգվող են, մեղմող օրոր—
Ձեր ձայնը, Ձեր ձայնը, նայվածքը Ձեր...

* * *

Ձեռներին Ձեր մարմարյա,
Ոսկեցոլք Ձեր աչքերին—
Ես գերի եմ հնօրյա:

Ես գիտեի՝ Դուք լռին
Ժպտում եք ինձ ամեն օր—
Օրհնություն Ձեր ձեռներին:

Եվ օրհնություն մեղմօրոր
Քայլվածքին Ձեր նվագուն,
Որ դյութում է նորից նոր:

Որ անգութ է և տոկուն,
Որպես արեգ մի կիզող—
Իսկ ես խենթ եմ, ես նկուն—

Խոնարհ եմ ես, որպես հող:

* * *

Անվանեցեք ինձ հիմար,
Կոչեցեք հիվանդ,
Ձեռները Ձեր պիտի հար
Երգեմ մոլեռանդ:

Ձեր մատները, ամ՛ս, այնքան
Մեղմ են ու շոյող,–
Չունի մաքուր լուսնկան
Այդքան նուրբ մի շող:

Եվ հրեշտակն այն, որ մեզ
Մահն է ավետում,–
Չունի թևեր, որ այնպես
Լինեին տրտում:

Ձեր մատները արծաթե
Նուրբ են առավել,
Քան այն երգը, որ գիտե
Ընդմիշտ օրորել...

Անվանեցեք ինձ հիմար,
Կոչեցեք հիվանդ,
Ձեռները Ձեր պիտի հար
Երգեմ մոլեռանդ...

* * *

Տխրադեմ ու մտախոհ
Գալիս եք Դուք ամեն օր–
Եվ ես ամեն երեկո
Խոնարհվում եմ խոր...

Լուռ նստում եք պուրակում,
Համր ու անխոս հեռանում,

Ժպտում եք ինձ և այգուն
Ժպիտով խոր ու խոհուն:

Դուք գիտեք, որ Ձեզ եմ լոկ
Երկրպագում և սիրում,
Բայց ժպիտով մտահոգ
Ժպտում եք ինձ ու լռում:

Հետևում եմ ամեն օր,
Տանում մինչև տուն,
Եվ փողոցում հեռավոր
Նորից եք ժպտում...

Սիրում եմ այդ անվրդով
Սառնությունը Ձեր սրտի,
Եվ չեմ ուզում իմ վշտով
Հուզել վիշտը Ձեր հուռթի[1]:

Այնքան չքնաղ եք, Տիկի՛ն,
Դուք այդ ազնիվ սևերում...
Գիտեմ, գերի եք մեկին,
Որ շիրմից է Ձեզ սիրում...

* * *

Ո՛չ ծաղրածու զվարճաբեր, ո՛չ խոսքերի վարժ վարպետ–
Կոչված ես դու վերին կամքով, որպես պայծառ մի ասպետ[2]:

1 հուռթի – շռայլ, պարարտ, այստեղ՝ մեծ

2 ասպետ – անձնուրաց, հավատարիմ, վեհանձն և ազնիվ (տղամարդ)

Դու մարգարե պիտի լինես, խաչակիր և մարտիրոս.[1]
Խարույկ ու խաչ պիտի ելնես— ոչ իբր ստրուկ, այլ հերոս...

Խոսքդ պիտի լինի դաշո՛ւյն, սիրտդ՝ կրա՛կ ահավոր,
Պիտի լինես հեզ, որպես որբ, վեհանձն, որպես թագավոր...

Պիտի բանաս սիրտդ բորբոք ամեն սրտի դեմ,
Պիտի լինես միշտ հրահրուն և միշտ լուսեղեն:

Եվ սնոտի[2] օրերի մեջ պիտի վառվես որպես ջահ,
Որպես բարիք ընդունես միշտ և՛ տանջանք, և՛ մահ...

* * *

Թեթև էր արվեստն իմ՝ խնդում,
Իսկ կյանքս այնպես դժվարին էր,
Այնպես միշտ անօգ ու լռին էր,
Այնպես միշտ մոլար ու անտուն:
Հոգին իմ պայծառ մի տենդում
Պարզված էր, անհուն աշխարհինն էր,
Հավատս այնպես միշտ խորն էր,
Այնպես անաղոտ ու խնդուն:

---

1 մարտիրոս – իր դավանած գաղափարի համար նահատակված մարդ, գաղափարի համար մեռած մարդ, նահատակ. շատ չարչարանքներ կրող, տանջվող

2 սնոտի – սին, դատարկ, անիմաստ, անիրական, կեղծ, կարծեցյալ, անարժեք, չնչին, աննշան

* * *

Երանի նրան, ով հայրենական
Խաղաղ հարկի տակ հանգչում է հիմա,
Ում չեն սարսեցնում[1] հողմերը գուժկան,
Ով գալիք օրվան ժպտում է անահ...
Երանի նրան, ում հաստատ ուղին
Բացված է ազատ և հեռու, և լայն,
Ում չի կասեցնում կասկածը մթին,
Ում քաղցր կոչ է թվում ամեն ձայն...
Երանի նրան, ում մի մայր գթոտ
Օրորում է իր երգով հնամյա,
Ում չի սարսեցնում մի ահ անծանոթ,
Ով հայրենական տուն ունի հիմա...
Ով պարզ է նայում մթին գիշերին,
Ով պարզ է ժպտում արևոտ օրվան,
Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ
Հազար բյուր անգամ երանի նրան...
Փշով են պատած ուղիներս մութ,
Մեր տեսիլքները՝ սառն ու ահավոր,
Մեզ գգվում են միշտ գգվանքով մի սուտ,
Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր...
Մութ է, և՛ ցուրտ է, և՛ բուք, և՛ բորան,[2]
Մեր ուղիներում սարսափ է և մահ,
Արյունոտ ուղի՜... Երանի՜ նրան,
Ով հայրենական տուն ունի հիմա...

---

1 սարսել – սոսկալ, սարսափել, սարսռալ. ցնցվել

2 բորան – ձյունախառն փոթորիկ

* * *

Ինչ ունեմ ես,
Ինչ է իմ կյանքը հիմա,
Սիրտ անխնդում, իմ երկրի պես,
Դու ավերված, դու տրորված անխնա...

Ինչ ունեմ ես.
Սիրտ իմ անքուն, մրրկուն,
Սիրտ անարգված, սիրտ հրակեզ,
Իմ երկրի պես, իմ երկրի պես հավետ նկուն...

* * *

Պետք է համառ դեռ կիզեն,
Պետք է մաշեն, որպես խունկ,
Սիրտը մեր վիշտ ու երկունք.–
Խոր է խորհուրդն ու վսեմ...

Պետք է տոկալ ու գթալ,
Պետք է այրվել ու սիրել
Եվ աննկուն համբերել,
Պետք է անվերջ հավատալ...

Նա թևերով հրավառ,
Նա զորքերով լուսեղեն
Գուցե գալիս է արդեն
Դեպի երկիրն իմ խավար:

Սիրտ, հավատա, որ լուսե
Վառ է մի նոր Բեթղեհեմ[1]–
Գուցե պարզված են արդեն,
Բաց են թևերը բոցե...

Նա պիտի գա լուսեղեն,
Նա պիտի գա հրավառ—
Դեպի երկիրն իմ խավար,–
Խոր է խորհուրդն ու վսեմ...

* * *

Նորից իմ ճամփան գնում է հեռուն, հեռուն է տանում
Եվ օրորում է թախծալի երգով գնացքն այս անկանգ,
Նորից ես անտուն, նորից հեռավոր, նորից անանուն,
Եվ իմ հոգու մեջ և շուրջս նորից աղետ ու վտանգ...

Բացվում են իմ դեմ անծիր ծավալվող երկիրներն այս նոր,
Եվ քանի գնում, այնքան երազ ես թվում, այնքան վառ,
Եվ քանի գնում, այնքան բաղձալի, այնքան լուսավոր
Եվ դյութական է հնչում քո ձայնը, հայրենի՛ք թշվառ...

Դառնացած սիրտս դառնում է նորից քո սրտին ցավոտ,
Վշտացած հոգիս կրկնում է նորից խոսքերը տրտում,
Հիշում եմ նորից գյուղերը խավար, քաղաքներն աղոտ
Եվ ժողովուրդն այն՝ արհավիրքի և մահու դեմ արթուն:

---

1 Բեթղեհեմ – քաղաք Պաղեստինում. «Բաբելոնյան գերությունից» (մ. թ. ա. 597– 537) հետո հրեաները վերաշինել են քաղաքը՝ հուսալով, որ այստեղ կծնվի իրենց ազատարարը՝ Մեսիան. քրիստոնեական աշխարհում Բ–ը սրբազան է հռչակվել, որտեղ, ըստ Նոր Կտակարանի, ծնվել է Քրիստոսը...

Որքան ցավել է իմ սիրտը, այնքան թող զվարթ լինի
քո սիրտը լուսեղ[1],
Որքան դառնություն տվել ես դու ինձ— այնքան թող լինի
քո օրը խնդուն,
Որքան մաշել ես սիրտս սառնությամբ և քինով[2] ահեղ,
Այնքան քեզ վայելք, այնքան սիրո երգ, այնքան օրհնություն:

* * *

Մութն ընկավ... մութն ընկավ... հնչյունները մեռան,
– Իմ անգի՛ն, քեզ որտե՞ղ կգտնեմ,
Չգտա, չգտա ցանկալի հանգրվան,
– Չգիտեմ, ես ոչինչ չգիտեմ...
Արտի մոտ, դաշտի մեջ դու քնել ես հավետ,
– Իմ անգի՛ն, դաշտի մեջ, արտի մոտ,
Արտի մոտ, դաշտի մեջ... ես հիշում եմ մի գետ...
– Դու չկաս... իմ սիրո՛ղ, իմ գթո՛ւտ:
Ո՞չ մի հույս, ո՞չ մի լույս, իմ ճամփան մենավոր,
– Քո արցունքն ամոքիչ, քո ժպիտը չկա,
Դու մեռար, քա՛ղցր մայր... ամեն օր, ամեն օր
– Իմ հոգին քո շշուկը կզգա...

* * *

Այս գիշեր կրկին մայրս մեռած
Հայտնվեց նորից մահճիս վրա,

1 լուսեղ – շատ լուսավոր, պայծառ, լուսեղեն, փխբ.՝ հրաշագեղ, չքնաղ

2 քեն – վրեժխնդրության զգացմունք մեկի նկատմամբ, ոխ, թշնամանք՝ ատելություն

Փայփայեց նորից որդուն կորած,
Օրորեց երգով իր հնօրյա...

Եվ արցունքներս դառն ու առատ
Չպահեցի ես, երբ նա հանդարտ
Շոյեց ձեռներով այն անարատ,
Ժպտաց ժպիտով այն անզվարթ:

Ու որպես ստվեր մեղմ ու բարի՝
Մնաց նա մոտս մինչ առավոտ,
Լսեց գանգատս այս աշխարհի,
Տենդի[1] խոսքերս՝ խենթ ու աղոտ...

Եվ աղոթեց նա հիվանդ որդուն,
Օրհնեց երկրային ուղիս դժվար,
Եվ լուսեղեն էր գիշերն արթուն,
Եվ սիրտս ցավին պարզվեց հոժար...

Նորից դաժան օր– մշուշ ու մեգ,
Եվ նորից, նորից երկրում օտար
Ընկած եմ՝ որպես ծովում անղեկ
Եվ անառագաստ մի նավավար,—

Բայց ունի հոգիս մի սուրբ ավանդ[2],
Մի թալիսման, որ չի խաբի ինձ.
Եվ սիրտս խնդուն ու հնազանդ
Կընդունե հիմա վիշտ ու թախիծ...

---

1 տենդ – փխբ. ներքին հուր, կրակ ջերմություն

2 ավանդ – պատվեր, պատվիրան, գրավական

* * *

Կգա կրկին մայիս մի նոր,
Եվ կծաղկեն արտ ու արոտ,
Եվ կհնչեն սիրակարոտ
Երգեր քնքուշ ու մեղմօրոր:

Ախ, քանի մայր հրակարոտ
Եվ քանի կույս սրտով մոլոր
Պիտի ողբան ձեզ, անօրոր
Քնով քնած սրտեր վիրոտ:[1]
Ճամփի վրա, սարալանջում,
Ուր աղբյուրն է անուշ կանչում,
Մութ խրճիթում, սուրբ հարկի տակ,
Ծովում, գետում, ջրհորներում
Ընկած եք դուք—տեր ու մշակ:

* * *

Դրեք սիրտս դարավոր
Հարազատ օրրան,
Օրորեցեք վիրավոր
Սիրտս նահրյան...
Նվագներով պարզ ու նուրբ
Գգվեցեք նրան,
Հայրենական երգով սուրբ
Սգացեք վրան...
Ոսկե թևեր ուներ նա,

1 վիրոտ – վերքոտ, վիրավոր

Ուներ բոցեր բորբ,[1]
Արյունաներկ է հիմա,
Ու երկրիս պես որբ:
Դրեք սիրտս դարավոր
Հարազատ օրրան,
Օրորեցեք վիրավոր
Սիրտս նահիրյան...

* * *

Հիմա երկրում իմ բարձրիկ,
Սարերում այն հեռավոր
Ամայություն է լռիկ,
Գիշեր է ահեղ ու խոր:

Բայց վառ է ահա մի շող,
Մի ճամփորդ է շրջում անտուն՝
Ճակատը պատած փշով,
Մահու չափ դեմքը տրտում:

Անցնում է անօթևան
Երկրում այն միշտ հյուրասեր,
Անցնում է գյուղ ու ավան,
Բոլորը—լուռ ու ավեր:

Բուքն է, մրրիկն է կոծում,
Դառն է թախիծը նրա...
Վարդեր են անվերջ բացվում.
Վարդեր—ձյունի վրա:

1 բորբ – տաք, ջերմ, բորբոքուն

Եվ լալիս է Անցորդը– լույս,
Եվ գնում է դառը լացով,–
Օրհնի՛ր, օրհնի՛ր, Հիսուս,
Երկիրն իմ երկունքի ծով...

* * *

Հոգնեցի գրքերից անհամար,
Աշխարհից այս խավար ինձ տարեք,
Ինձ տարեք այս երկրից անարեգ:

Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ,
Մեր սարերն անառիկ, վեհանիստ,
Մեր արտերն արևոտ ու հանգիստ:

Փրկեցեք մտքերից այս անծայր,
Փրկեցեք խոսքերից այս խելոք,
Դարձրեք ինձ մանուկ ու անհոգ:

Փրկեցեք սրերից այս սուրսայր,
Խորախոց խոհերից իմաստուն,
Մեր սարերը տարեք, տարեք տուն...

* * *

Երկի՛ր Նաիրի, երա՛զ հեռավոր,
Քնած ես քնքուշ թագուհու նման,
Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր
Եվ արքայական դնեմ գերեզման.

Եվ միթե, միթե, սիրտս ավերված
Ավերակներիդ լոկ պիտի պարզեմ,
Քո տեղ փայփայեմ ստվերդ մեռած,
Քո սուրբ խոսքի տեղ իմ լացը լսեմ...

* * *

Այս գիշեր իմ սրտում, այս գիշեր
Վարդեր են բացվում— վերքեր...
Անցեք լուսեղեն, անցեք հուշեր,
Մոռացվա՛ծ, կորա՛ծ իմ երգեր...

Այս գիշեր ես հեռվում եմ, հեռվո՛ւմ,
Կարծես հայրենիք եմ դարձել.–
Օ՜, սի՛րտ իմ, ո՞ւմ հետ ես կռվում,
Ո՞ւմ հետ ես ուզում դու մրցել...

Նայի՛ր՝ մեր սարերը ձերմակ—
Ձմեռն է, ձմեռն է ծաղկում...
Օ՜, սի՛րտ իմ, օտար երկնի տակ
Մեռնում ես անտուն ու անքուն...

Հիշո՞ւմ են արդյոք քեզ այնտեղ.
Անունը դ տալի՞ս են արդյոք...
Օ՜, սի՛րտ իմ, լռի՛ր ամեն տեղ–
Թաղի՛ր և՛ մրմունջ, և՛ մորմոք...

* * *

Ո՛չ, մենակ չեմ ես լեռներում,
Ծաղկանց մեջ, երկնի մոտ,
Ոսկե մեգն է ինձ գուրգուրում
Երեկո ու առավոտ:
Արշալույսին ջերմ արևն է
Ինձ համբուրում սիրաբար,
Շոգ կեսօրին հով տերևն է
Շվաք փռում ինձ համար:
Աստղ ու ծաղիկ, հավք ու տերև
Ինձ ժպտում են սիրագին,
Լայն երկինքը գլխիս վերև,
Երկնի պես լայն իմ հոգին.
Ու նայում եմ ես դեպի ցած,
Ուր դաշտերն են մրափում,
Մինչդեռ հոգիս լուսնով հարբած՝
Տխուր քունն է թոթափում...

* * *

Արթուն է վիշտը տոկուն,
Աննինջ է, բայց անվհատ
Հազարամյա իմ հոգում:

Խոհերս դառն են դեռ, խոց,
Բայց վառ է սրտիս մթնում
Անմար մի, բորբոք մի բոց:

Երկի՛ր իմ աղետավոր,
Ասում եմ՝ տոկա՛[1] համառ.
Գալու է հարության օր:

* * *

Նոր օր է բացվում ազգերի համար,–
Իմ հայրենիքում տիրում է գիշեր,
Իմ հայրենիքում՝ անթափանց խավար.
– Զարթե՛ք, վե՛ր ելեք, կենդանի ուժեր:

* * *

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին,
Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին.

Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

Բաբելոնն է եղել մեր ախոյանը, տե՛ս—
Անհետ կորել, անցել է— չար մշուշի պես:

Ասորիքն է եղել մեր թշնամին— ահա՛
Դաշտ է տեղը, և չկա քար քարի վրա:

Ամրակուռ[2] է մեր հոգին— դարերի զավակ՝
Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:

---

1 տոկալ – որևէ դժվարության, դժբախտության դիմանալ. պայքարում, գոտեմարտում չընկճվել, չընկրկել, չնահանջել

2 ամրակուռ – ընդհանրապես՝ ամուր, պինդ, փխբ.՝ հզոր

Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք,–
Լաց է այնտեղ ամեն երգ և ողբ՝ ամեն գիրք:

Գերված ենք մենք— ո՛չ ստրուկ— գերված մի արծիվ,
Չարության դեմ՝ վեհսիրտ միշտ, վատի դեմ՝ ազնիվ:

Բարբարոսներ[1] շատ կգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ:

Չի հասկանա ձեր հոգին և՛ ծույլ, և՛ օտար,
Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամեն քար:

Եգիպտական բուրգերը փոշի կդառնան,
Արևի պես, երկի՛ր իմ, կվառվես վառման:

Որպես Փյունիկ[2], կրակից կելնես, կելնես նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:

Արիացի՛ր, սի՛րտ իմ, ել հավատով տոկուն,
Կանգնիր հպարտ՝ որպես լույս լեռն է մեր կանգուն:

* * *

Չեմ հավատում ճիչերին ձեր ցնծագին
Եվ խանդավառ աղմուկներին այդ շփոթ.

---

1 բարբարոս – անուն, որ տալիս էին հին հույներն ու հռովմեացիները ուրիշ ազգերին. փխբ. քաղաքակրթության ստորին աստիճանի վրա գտնվող մարդ, վայրենի, արյունարբու, վայրագ, կոպիտ, անտաշ, գռեհիկ

2 փյունիկ – փխբ. գեղարվեստական գրականության մեջ գործածվում է որպես հավերժական վերանորոգման՝ վերակենդանացման խորհրդանիշ

Գաղտնի մի թույն կեղեքում է իմ հոգին,
Եվ ձեր խինդը սարսեցնում է՝ որպես բոթ:

Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին իմ ավեր,
Ո՞վ է թարգման մեր դարավոր տանջանքին...

* * *

Ի՞նչ մնաց ինձ— ոսկյա մի ցանց, ուրիշ ոչինչ,
Մարգարտաշար հուշերի գանձ— ուրիշ ոչինչ:

Տրտում գիշեր և մենություն անօգնական,
Սիրտ կեղեքող կարոտ անանց— ուրիշ ոչինչ:

Երազներից իմ հրավառ — մնաց փոշի —
Սին անուններ կորած կանանց— ուրիշ ոչինչ:

Ջինջ իմ հոգուն մնաց մշուշ ծանր ու մթին
Եվ իմ այգում քամու կաղկանձ[1]— ուրիշ ոչինչ:

Պարի՛ր, քամի՛ այգում այս մերկ ոռնա՛ ու լա՛ց,
Տա՛ր, մի՛ թողնիր քամի անսանձ— ոչինչ, ոչինչ...

* * *

Ինչո՞ւ ես ջահել չմեռա,
Երբ վառ էր հոգիս ու լեցուն,
Երբ պարզ էր օրերի լեզուն
Եվ թեթև՝ աղմուկն առօրյա...

1 կաղկանձ – շների հաչոց, վնգվնգոց, փխբ. ոռնոցի նման ձայն (քամու)

* * *

Կրկին եկար, անո՛ւշ գարուն,
Նեղ փողոցիս ծառին վտիտ
Բերիր քնքուշ ծիլ ու ժպիտ
Եվ շողացիր անսիրտ քարում,
Եվ մատներով նուրբ՝ որպես հուշ
Թմրած ու թույլ սրտիս դիպար,
Հողմով տարար ամպը կապար—
Լազուր[1] ու լուրթ գարուն անուշ:
Նոր կարոտով դեպի հեռուն
Կանչում ես ինձ ու կախարդում:
Քաղցր է դողում սիրտս տրտում,
Ո՞ւր ես կանչում, անո՛ւշ գարուն...

* * *

Արեգակը հուր ոսկի է մաղում
Արտերիս մաքուր ոսկեծովի[2] մեջ.
–Սի՛րտ, արտերիս պես եղի՛ր միշտ բեղուն,
Արևի նման հրահրի՛ր[3] անշեջ...
Եվ որպես վճիտ լճերն են ցոլում
Ցրտում աշնային— մշուշների տակ,
– Դու էլ, սի՛րտ, մնա հարության գալուն
Տրտմությամբ անչար, և՛ խոր, և՛ հստակ...
Կանցնեն հուշերդ— մշուշների պես,

1 լազուր – բաց կապույտ գույն, բնստ.՝ ջինջ, հստակ, մաքուր

2 ոսկեծով – ոսկեգույն ծովի նման, ոսկեգույն երանգներով ծփացող. ամբողջապես ոսկեգույն ճառագայթներով ողողված

3 հրահրել – դրդել, մղել, բորբոքել, գրգռել

Կգա խնդություն՝ խոր ու անարատ,
Կցրե մեգն ու կզարդարե քեզ,–
Որպես երկիրն իմ, արեգակն առատ...

* * *

Պայծառ են աստղերը,
Աստղերը շողուն են,
Սրտում իմ ստվեր է,
Խավար է հոգում իմ:
Ուղին իմ խոտոր[1] է
Ու միշտ ես մեկին[2] եմ,
Տրտում ու մոլոր է,
Մոլոր է հոգին իմ...

* * *

Իմ դուռը բաց է, եկեք բոլոր
Անուղիներդ, բաց է հոգիս,
Ով թափառում է ուղեմոլոր,
Ում սիրտը չունի քուն ու հանգիստ...
Ում հոգին խոց է, ում օրը՝ մութ,
Ում տխրությունը դառն է ու խոր,
Վառ է իմ բոցը՝ կանչս անսուտ,
Եկեք բոլորդ՝ որբ ու անզոր...
Ես էլ անգետ[3] եմ— մոլոր ձեզ պես,

1 խոտոր– ոչ ուղիղ, ծուռ

2 մեկին– պարզ, հասկանալի

3 անգետ – չգիտեցող, անտեղյակ, անփորձ

Մոլոր ու որբ եմ չարիքի դեմ,
Բայց միշտ ձեզ հետ եմ, եղբայր եմ ձեզ,
Ձեզ պես անզոր եմ, ձեզ պես՝ անզեն:
Հոգիս բացված է ծաղկի նման,
Իմ սերը խորն է և անսպառ,
Չէ՞ որ լոկ սերն է, սերն է վահան,
Եվ սիրտն է, սիրտն է սրտին ասպար[1]...

* * *

Դուրս եմ գալիս ես, լուռ թափառում,
Մեգն է գրկում ինձ, հողմն օրորում.
Մեղմ կրակներն են միգում վառվում,
Մեգ է սրտում իմ, մեգ է հեռվում,
Մեղմ կրակներն իմ՝ մութ աշխարհում...

Սի՛րտ իմ, ժպտում ես մեգ– մշուշում,
Եվ երեկոն այս դառն ու դալուկ,
Մեղմ կրակները ոսկե փոշում
Դառն են ժպտում քեզ, հիվա՛նդ մանուկ,
Սի՛րտ իմ, մանո՛ւկ իմ, մեգ–մշուշում...

Վիշտը քո խոր է, խոր է և լուռ.
Եվ անամոք է, և՛ անամոք...
Հիվանդ մանո՛ւկ իմ, աշխարհը հուր,
Դու մի թիթեռ ես, հիվա՛նդ մանուկ,
Դու մի թիթեռ ես՝ հավետ անօգ...

1 ասպար – փխբ.՝ ապավեն, պաշտպան, հենարան

* * *

Փողոցներն ահա դադար են առնում,
Ննջում են խաղաղ խրձիթ ու պալատ.
Լոկ ես եմ անվերջ անցնում ու դառնում
Ու տխուր լալիս երգերս վիատ[1]...

Մի անհուն ցավով երկիրն է տնքում,
Կարծես իմ սիրտն է կանչում Աստծուն...
Ցուրտ աշխարհի մեջ մերժված ու անքուն
Ո՞վ է այս գիշեր շրջում ու թախծում:

Անցնում եմ, գնում ես՝ մենակ մի մարդ,
Ինքս ինձ երգում, լալիս ինքս ինձ,
Եվ լապտերների ժպիտը հանդարտ
Ինձ ողջունում է խավարի միջից...

Ստվերի նման դալկադեմ մի կին՝
Քույրս, տարամերժ ձայն տվեց, անցավ.
– Քեզ որտեղ թաղեմ, վի՛շտ իմ մոլեգին,
– Ինչո՞վ բուժեմ քեզ, անբուժելի՛ ցավ...

* * *

Իմ հոգին՝ որպես թափառիկ մի շուն,
Եվ շուրջը՝ գիշեր, և շուրջը՝ աշուն,
Մոլորված քայլով և մահն աչքերում,
Ահաբեկ, անօգ փախչում է հեռուն:

1 վիատ – հուսահատ

Ո՞ւր պիտի գտնի հյուրընկալ մի տուն,
Որտե՞ղ պիտ ընկնի հոգնած ու տրտում,
Ծեծված, տրորված աշխարհում անդուռ,
Ո՞ւմ պիտի պարզի աչքերը տխուր
Եվ ո՞ւմ պատի տակ աշնան գիշերով
Պիտի հանգչի նա՝ մերժված ու խռով...

* * *

Անձրև է կրկին, և խցիկն իմ խեղճ
Միսում է, դողում խոնավ բակի մեջ,
Բայց սիրում եմ ես եղանակն այս, երբ
Լալիս է շուրջս երգը միակերպ,
Եվ հնչում այնպե՜ս, այնպես ներդաշնակ
Հոգուն իմ բեկվա՜ծ, միայնա՜կ, մենակ...

Եվ խոնարհվում է իմ սիրտը հանկարծ,
Եվ զգում է խոր, անսասան[1] ու պարզ,
Որ ողջ աշխա՛րհն է այդպես անխնդում,
Որ մենք բոլորս որբեր ենք անտուն,
Արծվի թևերով— ջարդված ու բեկուն,
Հավետ բանտարկված այս անել բանտում...

1 անսասան – չսասանվող, անսերեր, հաստատուն

ԷՔՍՊՐՈՄՏ[1]

Սիրելի Պերճանույշին[2]

Ամպերի նման թող սահեն-գնան
Մնքերը մոլոր,
Ցավերը բոլոր—
Եվ սիրտդ մնա պայծառ հավիտյան,
Երկնքի նման.
Եվ աստղերի պես թող միշտ վառ մնան
Երազ ու խնդում
Քո բոցե սրտում,
Եվ ցոլմն, ցոլմն աստղերի նման
Անմար ու արթուն...
Ու որպես արևն արդար ու առատ
Խավար աշխարհում,-
Սիրտդ հրահրուն —
Թող ժպտա պայծառ, խնդուն, անարատ,
Զարին ու բարուն...

* * *

Կանչում են ինձ ձայներ,
Ձայներ սրնգանուշ.[3]
Պարզվում են ինձ ձեռներ,
Ձեռներ ձյունաքնքուշ,

1 էքսպրոմտ – հանպատրաստից գրված բանաստեղծություն, երաժշտական ստեղծագործություն, արտասանված ճառ և այլն, հանկարծաստեղծություն

2 Պերճանույշ – Տերյանի քույրերից մեկի՝ Նաշոյի մեծ աղջիկն է (Սիմոնյան)

3 սրնգանուշ – սրինգի ձայնի պես անուշ

Կանչում են ինձ հեռուն,
Հեռուն՝ անհայտ ու նոր,
Փաղաքշորեն գերում,
Տիրում— ասում օրոր...

Հեռացի՛ր, Մա՛հ, և թո՛ղ,
Մի՛ հմայիր անհաղթ
Նվագներով դյութող,
Երջանկությամբ անախտ:

* * *

Հրեշտա՛կ՝ մաքուր, լուսաթև,
Իջի՛ր երկնից հեռավոր
Երգով անուշ ու թեթև,
Նվագներով մեղմօրոր:

Մանկիկին իմ այս անտուն,
Չար աշխարհում մոլորված,
Բե՛ր երկնային մի խնդում,
Դրախտային մի երազ...

Բե՛ր բյուր աստղեր դու փայլուն
Թող խաղալիք անի նա,
Խնդա անվերջ զմայլուն
Եվ խինդը վերջ չունենա...

Կամ տար նրան, տար մի այլ
Ամոքական նոր աշխարհ,

Ուր խնդում է անայլայլ,
Ուր ցնորք է հար...

Նայի՛ր՝ ինչպես հողմածեծ
Ծաղկի նման գլխակոր,
Քաղաքում այս չար ու մեծ
Դողում է նա ամեն օր...

Եվ շրջում է աղմկոտ
Փողոցներում անդադար,
Եվ բոլորն էլ՝ պաղ ու խորթ,
Եվ բոլորն՝ օտար...

Եվ այգուց մի մշտառատ
Բե՛ր ծաղիկներ անթառամ,
Ե՛վ հուր անմար, և՛ հեքիաթ,
Ե՛վ երգեր նրան...

* * *

Ինչո՞ւ է այսպես սիրտս մղկտում,
Այսպես, նոյեմբե՛ր, քո հողմի նման
Լալիս անդադար և աղեկտուր,
Կարծես նեղ լինի աշխարհն անսահման,
Կարծես ոչ մի տեղ չի գտնում դադար,
Կարծես ոչ ոքից չի տեսնում բարիք,
Քո հողմի նման— տարամերժ, օտար,
Օ՜, հանգստացե՛ք— հերիք է, հերիք...

* * *

Ջերմ կարոտով սպասում եմ անհամբեր,
Որ մեկը իմ փակ դռները կբանա.
– Ո՞վ պիտի գա, գուցե գունատ մի ստվեր
Լուռ ներս սողա ու նորից լուռ չքանա...
Ես մնում եմ ջերմ կարոտով, որ, ահա՛,
Մեկը անուշ կհեկեկա իմ կրծքին.
– Ո՞վ պիտի գա, գուցե հովը մեղմ հևա
Ու քարանա իմ գերեզման տան կողքին...
Մի՞թե չկա ոչ մի հոգի հարազատ,
Մի՞թե չկա ոչ մի մոլար ուրվական,
Որ ամոքեր քարացումը իմ գունատ,
Որ ինձ հաներ այս կոշմարից մոգական...

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Իմ վիրավոր, իմ վրդովված սիրտը նորից մի՛ վրդովիր,
Դու հեռավոր, օտար մարդկանց սիրտդ տվիր ու ինձ թողիր:

Դու չուզեցիր, չկամեցար իմ խենթ հոգու սիրով շնչել,
Էլ ինչո՞ւ ես ուզում անհայտ ցավով կրկին հոգիս տանջել:

Աշնան օր է կյանքս հիմա, վիրավոր է հոգիս տրտում,
Հարկավոր չէ... գնա... գնա... վշտի ծով է այժմ իմ սրտում:

* * *

Դու Լեյլան ես, դու երա՛զ— դու Լեյլան ես լուսավոր,
Ես Մեջլումն եմ, ես մեռած, քնած մահու քնով խոր...

Դու վաղուց ես հեռացել— մոռացել ես, միտդ բեր.
Շատ են եկել ու անցել ձմեռներ ու գարուններ...

Որպես Մեջլումն ու Լեյլան՝ չէ՞ որ մենք էլ՝ դու և ես,
Հանդիպել ենք մի անգամ և առհավետ՝ նրանց պես:

Եվ սրտերով հրահրուն երազել ենք մեկ-մեկու,
Եվ ծաղկել են նույն հեռվում ցնորքները մեր հոգու...

Ե՛վ առավոտն անստվեր, և՛ երեկոն սևագիր,
Պսակել են սերը մեր երկինք, երկինք ու երկիր...

Դու գնացիր, չդարձար, քո կարոտով մեռա ես,
Բայց մեռած էլ անդադար կանչում եմ միշտ, կանչում քեզ:

Ես Մեջլումն եմ, ես մեռած, քնած մահու քնով խոր,
Լեյլա՛, դարձի՛ր, իմ սիրա՛ծ, դարձի՛ր, լուսավոր...

Սիրո կանչով կանչի՛ր ինձ, և կարթնանամ ես,
Լեյլա՛, դարձի՛ր, դարձի՛ր ինձ— կանչում եմ միշտ քեզ...

* * *

Աստղերն են քնքուշ խաղում,
Դողում ու շողում են վառ
Հեռվից այն արծաթավուն,
Ժպտում են ինձ ու իրար...

Բացված է հոգիս պարզված,
Բացված է աշխարհում խոր,
Հրով ու սիրով լցված,
Լցված է սիրով մի նոր...

Եվ շուրջս՝ որպես օրոր,
Մի երգ է անլուռ հնչում.
Իմ սի՛րտն է, թե՞ հեռավոր
Աստղերն են մեղմ կարկաչում...

* * *

Քնկոտ առվին թեքվեց ուռին,
Աստղերն ելան ցիրուցան.
Ա՜խ, մի՛ հիշիր տանջանքը հին,
Մի՛ մտորիր այս անգամ:

Աստղը՝ ջրին, ցողը՝ ծաղկին,
Մեգը ծովին է փարվում,
Շողը՝ մութին, հավքը՝ հավքին
Կարոտագին համբուրում:

Դու էլ, դու էլ քնքուշ եղիր,
Մի՛ տրտնջա, լացդ թո՛ղ,
Այս սուրբ ժամին լռի՛ր, լռի՛ր,
Սիրի՛ր անխոս ու կարող...

Շուտով կանցնի գիշերն անուշ,
Խորհուրդը լուռ կմարի,
Սիրտս կզգա, որ ուշ է, ուշ,
Ջուր կաչաս «օ՜, արի՛»...

* * *

Ոսկի ավազ լինեի,
Ջուրդ գար ինձ տաներ,
Արծաթ ամպիկ լինեի,
Հովդ գար տարտղներ:[1]

* * *

Արեգակը ծովն է իջնում,
Ցողը շողաց դալարին,[2]
Սարի լանջից հովն է փչում,
Աստղը ժպտաց կամարին:
Անճառելի[3] վայելչությամբ
Իջավ տխուր իրիկուն,
Արևմուտքում մի ոսկի ամպ

1 տարտղնել – ցրել, ցիր ու ցան անել
2 դալար – կանաչ, բուսականություն
3 անճառելի – անպատմելի, անասելի

Ցնորում է ու խոկում:
Իմ թախիծն էլ այն ամպի պես
Ցնորում է քնքշաբար,
Բոցավառվում՝ հիշելով քեզ
Եվ արտասվում քեզ համար:

* * *

Այստեղ միշտ քեֆ ու հանդես է,
Կեցցե՛ «մեր Օհաննեսը»:

Ա՜խ, շեն[1] է տունն այս, շե՛ն է,
Բայց ափսոս չկա Աշխենը:

Անպակաս այս տան վարդը—
Ծաղկի՜ մեր քնքուշ Նվարդը:

Այս տունը միշտ անուշ է,
Այստեղ է անուշ Անուշը:

Եվ ինչպես մարդիկ չարբեն,
Քանի այստեղ է Արփին...

* * *

Թումանյանի պալատում
Ով որ քեֆի չի նստել,
Նա չի տեսել դեռ խնդում,
Աշխարհ չի տեսել:

1 շեն – առատ, լիքը, հարուստ

Թումանյանի պալատում
Կգտնես, ո՞վ մարդ,
Անուշ, Արփի-արբեցում,
Եվ վարդ, և՛ Նվարդ...

* * *

Թումանյանի երգերում
Կա և՛ «էս», և՛ «էն»,
Բայց իզո՛ւր ես դու սրում
Ատամներըդ, քե՛ն:
Թումանյանի երգերում
Կա և՛ «էն», և՛ «էս»,
Բայց կա և սիրտ դեգերուն[1],
Հոգի հրակեզ:
Խելքի՛ եկ, ո՞վ նենգամիտ,
Այնտեղ փնտրիր միշտ
Հայրենի խինդ ու ժպիտ
Եվ հայրենի վիշտ:
Այո՛, «էս»-ին և «էն»-ին
Ես էլ եմ մերժում:
Ջոկի՛ր քաջին ու հենին,[2]
Ո՞վ լուսնահաչ[3] շուն:

---

1 դեգերող – թափառող. փխբ.՝ մտքով հածող, զանազան բաների մասին մտածող

2 հեն – ավազակ, ավարառու

3 լուսնահաչ – լուսնի վրա հաչելը, շների առանց պատճառի հաչելը. փխբ.՝ դատարկաբանություն, վայրահաչ

* * *

Վալերի Բրյուսովին

Ես դեռ պատանի՝ սիրեցի քո խիստ,
Ցուրտ, հյուսիսային մտազուսպ լեզուն,
Եվ տեսա՝ որքա՛ն ահեղ է կիզում
Կրակը թաքուն տողերից հանգիստ:

Այդպես ափերում իր կանաչանիստ,
Իմ հեռու երկրում Արազն է հոսում,
Եվ այնպե՛ս, այնպես հանդարտ է խոսում՝
Թաղած իր խորքում մրրիկն անհանգիստ:

Դու չարչարանաց ահավոր ժամին
Եկար այցելու իմ երկիրն անհույս
Եվ ավետեցիր փրկություն ու լույս,
Երբ հալածում էր մեր նավը քամին:

* * *

Ավետիք Իսահակյանին

Ճեղքելով կապույտ անապատն անհուն՝
Ոսկի քարվաններն անցնում են կրկին.
Քո քարվաններն են, դերվի՛շ[1] իմ անտուն,
Խառնում իրանց ջինջ կարկաչն իմ երգին...

Քո քարվաններն են օրորում անքուն
Իմ սիրտը բեկված և իմ հին վերքին
Բերում են հանգիստ և հոգուս՝ խնդում:

1 դերվիշ – մահմեդականների թափառական կրոնավոր, փխբ.՝ թափառական մարդ

Ռ. ԶԱՐԴԱՐՅԱՆԻ ԱԼԲՈՄՈՒՄ

Մի՛ տրտնջա ցավիդ համար— սիրո առատ աղբյուր է նա,
Մի՛ ափսոսա մեղքիդ համար— սիրտը մաքրող սուրբ հուր է նա.

Թե սերն անցնի՝ մի՛ մորմոքա— կըմնա հուշ— մաքուր է նա:
Սիրտդ թող միշտ խնդա կամ լա— մահ է մթին, երբ լուռ է նա:

* * *

Արածներիդ համար երբեք չես ասելու ախ ու ափսոս,–
Չարածներիդ համար պիտի ասես ափսո՜ս, հազա՛ր ափսոս:
Վահան Տերյանն ասաց— ավա՛ղ, ինչո՞ւ դրի սրտիս կապանք,
Քանի՛ սերեր, քանի՛ հուրեր զուր հանգցրի— հազա՛ր ափսոս:

* * *

Գար ինձ հանկարծ հեռագիր,
Որ դու գալիս ես, գալիս,
Դո՛ւ, իմ միա՛կ ցանկալիս,
Դո՛ւ, իմ անո՛ւշ տարագիր...

* * *

Այս հին ու նոր գրքերի վրա կորացած՝
Չտեսա ես, չտեսա, որ գարուն է նոր,
Եվ այս մեռած մարդոց մեջ՝ սիրտս կուրացած
Չզգաց, որ բաց են արդեն վարդերը բոլոր...

Ես արևը չտեսա խուցիս մեջ մթին,
Եվ երգերը մայիսյան չհասան ինձ, չհասան:
Քո ծիծաղը կարկաչուն հնչեց իմ սրտին,
Եկա՛ր, եկա՛ր՝ որպես երգ պայծառ մայիսյան...
Տես ինչպե՞ս եմ հոգնել ես այս գրքերից՝ հին ու նոր,
Խոսքերից այս իմաստուն, գիտուններից բյուր:

Ժպտա, անգի՛ն, ժպիտդ խոր՝ գրքերից խոր,
Խնդությունդ՝ ամոքիչ, զրույցդ՝ աղբյուր...
Քո համբույրը գարնային[1] իմաստուն է ավելի,
Քան գիտուններն այս խոժոռ, գրքերն այս մթին:
Քո գգվանքը բյուր անգամ թովիչ է և սիրելի,
Քան և՛ Վոլֆը,[2] և՛ Բոպպը,[3] և՛ Հումբոլդտը[4] միասին...

* * *

Այնպես պարզ ու խնդագին, օ՜, խնդությո՛ւն իմ սրտի,
Պարզվեցիր իմ երկունքին, օ՜, խնդությո՛ւն իմ սրտի,
Տվիր խնդուն ամեն ինչ և մոռացար ինքդ քեզ,
Հյուսած կյանքդ իմ կյանքին, օ՜, խնդությո՛ւն իմ սրտի,
Ու ցավերիս ցավակից՝ դու խնդությո՛ւն չտեսար,
Ինքդ՝ խնդում երկնային, օ՜, խնդությո՛ւն իմ սրտի.
Եղար ինձ քույր մեղմանույշ և քնքշագին սիրուհի,
Եղար ինձ մայր կաթոգին, օ՜, խնդությո՛ւն իմ սրտի.

---

1 գարնային – գարնանային

2 Վոլֆ Ֆրիդրիխ Ավգուստ (1759–1824) – գերմանացի բանաստեղծ, դասական

3 Բոպպ Ֆրանց (1791 – 1867) – գերմանացի լեզվաբան

4 Հումբոլդտ Վիլհեմ (1767 – 1835) – գերմանացի բանաստեղծ, լեզվաբան, հիմնադրել է Բեռլինի համալսարանը (այժմ՝ Հումբոլդտի անվ. համալսարան Գերմանիայում)

Հավատարիմ սուրբ ուխտիս՝ եղար խանդոտ քրմուհի,[1]
Վառ պահեցիր իմ հոգին, օ՜, խնդությո՛ւն իմ սրտի.
Քե՛զ օրհնություն հավիտյան, և՛ երգ, և՛ սեր, և՛ աղոթք...

* * *

Ա՜խ, դեռ հնչում է քնքուշ մուզիկը.
Կադրիլ[2] հին, վալս հին և պոլոնեզ.[3]
Կիսախավարը այնպես նազիկ է,
Այնպես հուշիկ է, այնպես ձեզ պես...
Աղոտ նայվածն իր ձերի պես խորն է,
Իր նայվածն էլ է ճչում– «շընա՛լ»[4]
Այնպես անհույս է հեծում վալտորնը.[5]
Եվ անողորմ է վալսը բանալ,[6]
Կանայք օրորում են իրանց իրանը,
Կավալերները՝ գեշի կարոտ.
Եվ այս մի, այս մի այն ծուռբերանը
Չար քրքջում է ծառերի մոտ...

---

1 քրմուհի – հեթանոսական կրոնի սպասավորուհի

2 կադրիլ – վեց ձևով (ֆիգուրով) եվրոպական պար՝ իրար հանդիպակաց զույգերի կատարմամբ և այդ պարի երաժշտությունը

3 պոլոնեզ – լեհական հանդիսավոր պար, ինչպես և դրա երաժշտությունը. այդ պարի ռիթմով գրված երաժշտական ստեղծագործություն

4 շնալ – շնանալ

5 վալտորն – պղնձա փողային երաժշտական գործիք, որ աչքի է ընկնում փափուկ ու լիահունչ ձայնով, գալարափող

6 բանալ – банальный - անհամ, տափակ, գռեհիկ

* * *

Դարձել եք հեռու երկրներից
Մաշված, սրտաբեկ և տրտմերես,[1]
Ու մոռացա ես ողջը նորից,
Եվ սիրտս բոլոր արդեն ներեց:

Արդեն արծաթն է ցոլում մեկ-մեկ
Ձեր ճոխ մազերի պարզ հյուսվածքում,
Եվ ձեր ճակատին պայծառ ու սեգ,
Երկու ակոս է նուրբ սողոսկում:

* * *

Եվ դուք այդ գիտեք՝ դա չէ՞ արդյոք
Խառնում նրբագիծ մի դառնություն
Ժպտին Ձեր՝ երբեմն այնքա՜ն անհոգ
Ու հիմա՝ այնքան խոր ու տրտում...

Կարծես քաշվում եք ինձնից մի քիչ,
Ձեզ մեղավոր եք զգում կարծես,
Դրա համա՞ր է գուցե մոգիչ
Ձեր դեմքը շիկնում հանկարծ այդպես:

Երբ ինձ գրկում եք խանդակարոտ
Եվ փակում աչքերն այդ ոսկևուն,
Երբ որպես թռչնակ մի վեհերոտ[2]
Կարծես խղճիս եք ապավինում...

---

1 տրտմերես – տխուր, տրտում դեմքով, տխրադեմ

2 վեհերոտ – վախկոտ, երկյուղած, ահաբեկված

* * *

Որքա՜ն փոխված եք... Պճնված ճոխ
Ձեմում եք որպես դշխո[1] հպարտ,
Եվ մի հեգնանք կա նուրբ ու զիջող
Նայվածքում Ձեր խոր ու անզվարթ:

Դուք զարմացած եք և չեք կեղծում,
Երբ տեսնելով ինձ այստեղ, հանկարծ
Բացականչում եք, սիրով լեցուն.–
Բոլորի համար զարմանք ու հարց:

Արդյոք պահե՞լ եք մի նշույլ դեռ
Անցած օրերից, թե՞ դա էլ նոր
Մի զարդ է, որ պիտ պարուրե Ձեր
Սին կյանքը մեգով խորհրդավոր:

Հիմա դուք կուռք եք, շքեղ բագին,[2]
Իսկ ե՞ս... Ո՞վ եմ ես. մի հեգ անցորդ,
Այլ է կարոտն իմ, այլ՝ իմ ուղին,
Եվ ամբոխին այս, և Ձեզ՝ միշտ խորթ:

Երբ խուժանից այս երկրպագու
Դուք հեռանում եք իմ թևն անցած,
Սիրով նախատում և ասում «դու»,
Եվ հիշում, հիշում օրերն անցած:

---

1 դշխո – թագուհի

2 բագին – զոհասեղան (հեթանոսական)

Ես էլ հիշում եմ փոքրիկ մի տուն,
Փոքրիկ սենյակ մի արևով լի,
Մի աղջիկ չքնաղ, պարզ ու խնդուն.
Այնպես լուսեղեն ու սիրելի:

Եվ ինձ թվում են այնպես անդարձ.
Այնպես հեռու և այնպես երազ
Գիմնազուհու այն զգեստը պարզ
Եվ շեկ մազերն այն՝ մի հյուս արած...

ՆԱՄԱԿ

Դուք մոռացել եք այն «հանաքները»
Եվ համբույրներն այն, և սերն ամեն.
Իսկ իմ սրտից այդ հիշատակները
Որքա՜ն արցունք դեռ պիտի քամեն...
Ձեզ համար սերը «հաց ու պանիր է»,
Այսօր այստեղ եք, էգուց՝ այնտեղ,
Իսկ ես պահում եմ Ձեր սուվենիրը,
Որպես ծաղիկ մի՝ սուրբ ու անսեխ:
Ծիծաղելի են Ձեզ այս խոսքերը,
Ծիծաղելի եմ ես և հիմար.
Հիշո՞ւմ եք ինչպես մի օր «Հասկերը»
Նվիրեցիք ինձ ծաղրի համար...
Ես «երեխա» եմ՝ Դուք միշտ կրկնում եք.
Ո՛չ, հայ աղջիկ եմ՝ պարզ ու պարկեշտ:
Իմ ցնորքները կծու հեգնում եք —
Եվ երգում սերը՝ ազատ ու հեշտ:
Ձեզ համար սերը «հաց ու պանիր է»,

Այսօր այստեղ եք, էգուց՝ այնտեղ,
Իսկ ես պահում եմ Ձեր սուվենիրը՝
Որպես ծաղիկ մի՝ սուրբ ու աննեխ...

* * *

Եվ հիշեցի ես հորդ անձրևի տակ
Սլացող կառքը, որ տանում էր մեզ
Եվ քո խոսքերի կարկաչունն արագ,
Եվ քո աչքերի փայլը հրակեզ...
Մնաբերեցի և «Եդեմ» այգին,
Եվ համբույրներս՝ տարփոտ գգվանքում,
Երբ հրահրում էր կուրծքս քո կրծքին,
Եվ ալեկոծվում հոգիս քո հոգում...
Եվ հրաժեշտը մեր տխուր ու ցուրտ,
Երբ մենք, անկարող գրկել մեկմեկու,
Ձեռք էինք պարզում սառն ու անխորհուրդ՝
Որպես աշխարհիկ ծանոթներ երկու:
Բայց գուցե մնա և քո հոգու մեջ
Բոցեղեն մի երգ, լուսեղեն մի հուշ՝
Որպես սիրելի պոետից մի էջ,
Որ ժպտում է միշտ գգվանքով անուշ...

* * *

Երգն այս անզոր ու անզարդ
Թող հիշեցնե քեզ կրկին
Գարնան անձրևն այն զվարթ
Եվ «Եդեմ» այգին:

Այսօր անձրև է նորից,
Բայց աշնային, հյուսիսյան.
Ինչպե՞ս չզգամ ես թախիծ,
Ինչպե՞ս չափսոսամ:
Ինչպե՞ս սրտով մորմոքուն,
Ինչպե՞ս, ինչպե՞ս չթերթեմ
Հուշեր, որ դառն այս մեգում
Երազ են արդեն...
Շողարձակ այդ աչքերիդ՝
Որպես գերի մի անզեն,
Ինչպե՞ս կիզող ցոլքերիդ,
Սիրտս չպարզեմ...

* * *

Դու չգիտես՝ դեռ որքան անմիտ են
Իմ ցնորքները և որքան խենթ են.
Մաքուր հայացքդ մահացու նետ է,
Դու չգիտես դեռ, որ թշնամիդ եմ:
Լուսե քո սիրտը դեռ միամիտ է,
Իսկ ինձ այրում է քո կրծքի «լենտը».
Դու չգիտես դեռ՝ որքան անմիտ են
Իմ ցնորքները և որքան խենթ են...

ՀԱՆԱՔ

Էքսպրոմտ

Դու ասում էիր— «Հանաք ենք անում»,
Երբ փորձված մայրդ նախատում էր քեզ.
– Հանաքը հաճախ դանակ է դառնում,
Մի օր սև գլխիդ փորձանք կբերես...

Ինչո՞ւ ես հիմա նախատում դու ինձ,
Մայրդ քեզ ասաց— ես ի՞նչ մեղք ունեմ,
Կարծում էի, որ հանաք է նորից,
Հիմա գանգատով կանգնել ես իմ դեմ...

Դու չէի՞ր կրկնում— հանաք ենք անում.
Երբ փորձված մայրդ նախատում էր քեզ.
– Հանաքը միշտ էլ դանակ է դառնում,
Մի օր անպատճառ թակարդը կնկնես...

* * *

Ինչո՞ւ ես այդպես դու ինձ նախատում,
Չէ՞ որ դու ինքդ ձեր տանից փախար,
Չէ՞ որ դու ինքդ իմ գիրկը եկար,
Ո՛չ, նախատինքիդ ես չեմ հավատում:
Տես, դու ժպտում ես ու սուտ նախատում,
Ես քեզ կանչեցի, դու եկար ինձ մոտ,
Դու ընկար կրծքիս գգվանքով խանդոտ,
Քո սուտ զայրույթին ես չեմ հավատում:
Թե ես հավատամ, գիշերը բնավ

Չի հավատալու քո սուտ զայրույթին,
Չեն հավատալու երկինք ու գետին,
Աստղերը պայծառ, կանաչը խոնավ:
Ինչո՞ւ աչքերդ փակեցիր ու լուռ
Ընկար իմ կրծքին համբույրով կրքոտ.
Իսկ հիմա ահա կանգնել ես իմ մոտ
Ու նախատում ես ժպիտով տխուր...

«ՓՇԵ ՊՍԱԿ» ԳՐՔԻՑ

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան
(Արևածա՛գ, օ՛, արշալո՛ւյս արյունո՜ւտ).
– Կանգնած էին զինվորներն ու քահանան.
Գունատ ու լուռ կանգնած էին նրա մոտ...

Ծեր քահանան ոչ մի աղոթք չէր հիշում
(Սիրտը նրան շշնջում էր՝ անիծի՛ր),
– Լուսածագի ծիրանավառ մշուշում
Կայծկլտացին ճաճանչները ցան ու ցիր...

Մռայլ սպան լուռ շրջում էր աջ ու ձախ
(Արդյոք հիշեց նա իր մո՞ր սգավո՜ր).
– Գունատվում էր մութ գիշերը, և ուրախ
Արեգակն էր ոսկեզօծում սար ու ձոր...

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան
(Արևածա՛գ, օ՛, արշալո՛ւյս արյունո՜ւտ),
– Կանգնած էին զինվորներն ու քահանան,
Գունատ ու լուռ կանգնած էին նրա մոտ...

* * *

Ողջո՛ւյն քեզ, տանջա՛նք, ահե՛ղ հիացում,
Գրկի՛ր իմ սիրտը, քեզ օրհնում եմ ես,
Մանուկ օրերից իմ դուռն ես ծեծում,
Եվ հոժար հոգիս ընդունում է քեզ...

Փռեցեք այստեղ մարմինս հլու,
Խաչեցեք նորից իմ խոցված հոգին,
Սիրտս բացված է անանց սիրելու
Եվ տառապելու կրկին ու կրկին...

Ո՞վ գերագո՛ւյն փառք, վերջի՛ն հիացմունք,
Արյունիր սիրտս քո համբույրներում:
Թափվե՛ք, ի՛մ երգեր, արցունք առ արցունք
Այնտեղ, ուր մարդկանց տանջանքն է լռում...

* * *

Երանի՜ նրանց, որ մութ բանտերում
Եվ չարչարանքում դժնի՝ որպես մահ,
Մաշեցին այնքան օրեր հրահրուն՝
Գերված թշնամուց անսիրտ ու ագահ:
Երանի նրանց, որ սրտով եռուն
Մնացին տոկուն, հպարտ և անահ՝
Պարզած աչքերը դեպի լույս հեռուն,
Արհամարհեցին և՛ երկունք, և՛ մահ,
Երանի՜ նրանց, և՛ փառք, և օրհնանք...

* * *

Գիշեր ու ցերեկ համաչափ զարկով
Աղմկում եք դուք, պողպատե՛ դևեր,
Նետվում եք ներքև, ցատկում դեպի վեր,
Օրորում եք ինձ ձեր ահեղ երգով...

Մանուկ օրերից սև կամարի տակ
Ես ձեր երկաթե խոսքերն եմ լսում,
Եվ կարծ քնի մեջ, մռայլ երազում
Հոհոում է ձեր երգը դժնդակ...

Արդյոք ո՞վ հյուսեց ձեր դժկամ լեզուն,
Ո՞վ շղթայեց մեզ ձեր մեռած կամքին,
Մի՞թե վերջ չկա մեր տառապանքին,
Եվ մի՞թե արդեն մենք չենք երազում...

Մեկ ժիր ցատկում եք, մեկ՝ հանդարտ սահում,
Չգիտեք հանգիստ և գութ չգիտեք,
Խուլ մռնչում եք, անսիրտ ծիծաղում,
Գիշեր ու ցերեկ, գիշեր ու ցերեկ...

* * *

Լռել են արդեն երգերը հզոր,
Ու էլ չեն հնչում խոսքերը հպարտ.
Խավարն է գերել մեր հոգին այսօր
Եվ լռությունը՝ հավետ մահապարտ:

Սև գնդերն ահա կազմել են շարքեր
Արյունված երկրում, ուր երեկ այնպես
Շաչում էիք դուք, հրեղեն երգեր,
Եվ ալեկոծում փողոց ու կրկես:

Դաժան ցնծությամբ թշնամին ահա
Իր սև հաղթության խնջույքն է տոնում,
Հռհռում է մեր տանջանքի վրա,
Արյունով հարբած՝ արյուն է խմում...

Լցված է արդեն բաժակը թունոտ,
Համբերելու ժամն անցել է արդեն.
Ելնենք ճչալու խնդությամբ քինոտ
Ու հպարտ կանգնենք մութ բռնությա՛ն դեմ:

Այս դառն օրերի մթնում մահաբեր,
Արնոտ խնջույքի այս սև զնդանում
Դավաճան է նա, ով լռում է դեռ,
Մատնիչ է, ով իր սուրը չի հանում...

* * *

Կանչում են ինձ գիշերն ի բուն, աղաղակում իմ հոգում,
Իմ սրտի մեջ ճիչ են ճչում— իմ սրտի մեջ՝ հեկեկում...

Արշալույսը դեռ չբացված՝ նոքա կգան, կտանեն՝
Սվիններով շրջապատած— շղթայակապ ու անզեն:

Ոչ ոք, ոչ ոք չի ճչալու գիշերում այն ահավոր,
Լռելու են համր ու հլու— անարթուն ու խոր...

Արևավոր իմ պատանի, կարմիր է քո հարսնացուն,
Սիրտս քո մոր, սիրտս քո մոր հեկեկանքով է լեցուն...

Դահիճների մթին խմբում կլինես դու միայնակ,
Եվ ամեն խոսք կլինի թույն, ամեն ժպիտ՝ մի դանակ...

Ընկերներդ չեն լսելու գիշերում այս դառն ու խոր,
Մենակ պիտի ընդունես դու Գողգոթան[1] մեր նոր...

Եվ թշնամին պիտի ժպտա դեմքիդ հանգիստ և անահ,
Սիրտս քեզ հետ, սիրտս ահա ընդունում է խաչ և մահ...

Հրահրուն ես ու բոցավառ արևածագ՝ ալ-բոսոր,
Ո՞ւմ արյամբ ես ներկել կարմիր, կարմիր թևերդ այսօր...

Շողերից ու ծաղիկներից չեմ հյուսի քեզ, երգ իմ, ո՛չ,
Արյան շիթ է ամեն մի վարդ, արցունք՝ ամեն մի բողբոջ...

* * *

Քե՛զ եմ երգում, կարմի՛ր,
Արյունաբո՛ւրբ
Ազատությա՛ն դրոշ,
Վառվի՛ր.
Հարյավ[2] հոգին իմ որբ,
Հավետ հարյավ
Ցնծուն ու խենթ՝ որպես
Մրրկահավ...

---

1 Գողգոթա – փխբ. կառափնարան՝ գլուխը կտրելու՝ գլխատելու տեղ, առհասարակ մահապատժի տեղ

2 հարյավ (գրբ.) – արթնացավ, հարություն առավ, վերակենդանացավ

* * *

Հարյավ հավետ, հարյավ հոգին իմ որբ
Մահանման քնից, քնից անարգ.
Քեզ եմ երգում, կարմիր, արյունաբորբ
Ազատության դրոշ— քեզ փառք...
Անմխիթար ու չար իմ օրերին,
Անապավեն[1] կյանքիս, կյանքիս մոլոր
Իջավ անմար մի լույս, մի հուր վերին
Եվ հրդեհեց հոգիս...

Եկավ երկաթ քայլով,
Եվ երկիրը դողում է.
Զգեստավորվիր նոր փայլով,
Ընդունիր իր ալ շողումը:
Դատաստանի օրվա
Ահաբեկ աստղերի նման
Թափվում են թագերն հնօրյա,
Եվ գահերը լինում են կործան...

* * *

Ել, դեմոկրատիա,
Խոր ու խնդուն աղմկիր ամեն կողմ,
Դուրս թափվիր մութ խուցերից
Եվ որոտա՝ որպես հողմ,
Լից և փողոց, և կրկես,
Ել մրրկուն ու հրկեզ...

1 անապավեն – ապավեն՝ օգնական չունեցող, անօգ, անտերունչ

Թո՛ղ ոլորուն ու խավար
Այս փողոցները
Խառնիճաղանջ,[1]
Ել՝ որպես հուր ու լավա,
Լից և՛ փողոց, և՛ կրկես,
Շաչ ու շառաչ, ճիչ ու կանչ,
Ողջը սրբիր ու լվա...

* * *

Ջարդեցե՛ք անդուլ, անգութ, անխնա,
Ջնջեցե՛ք աշխարհն ապական ու հին:
Թող քարը քարի վրա չմնա,
Ողջը մատնեցե՛ք հրին ու մահին:
Եվ կործանեցե՛ք բանտերը վերջին,
Փշրեցե՛ք վերջին շղթաները պիրկ,
Որ կաշկանդել են մեր միտքն ու հոգին:
Որպես փոթորիկ՝ իջե՛ք ավերիչ
Եվ խորտակեցե՛ք աշխարհն այս զազիր,
Փոշի դարձրե՛ք այստեղ ամեն ինչ:

* * *

Մեր թշնամին բերում է «տանկեր»,
Բերում է ցեղեր սևամորթ:
Կեռ դաշույններով գալիս են,
Մռայլ գնդերով գալիս են:
Թող գա՛ն...

1 Խառնիճաղանջ – խառն, անկարգ, խառնիխուռն

Մեր կրակի դեմ անզոր են,
Մեր դրոշի դեմ կխորտակվեն.
Մենք մութ աշխարհում ջահ ենք,
Մենք տանջված երկրին՝ դրոշ,
Թող գա՛ն,
Թող գա՛ն,
Թող գա՛ն...

* * *

Մշտունայն[1] այս հոգսերում
Հավատացի միայն քեզ,
Միայն դու ես հրակեզ
Ողջակիզվում և սիրում...
Միայն դու ես, սի՛րտ մաշվող,
Տեսնում երկրի այս բանտից
Հուրեր անծիր և անբիծ
Եվ երկրներ մշտաշող...
Եվ աշխարհում անխնդում,
Մեր մոլորուն ու անօգ
Ուղիներում դո՛ւ ես լոկ
Ազատություն ավետում...

ՔԱՂԱՔ

Ձեր շքեղ շենքերի ծանրությամբ սրտմաշուկ,
Ձեր ահեղ բերդերի համրությամբ վերամբարձ,

1 մշտունայն – մշտապես ունայն, անիմաստ

Քաղաքներ, ձեր մեջ կա դժոխքի մի շշուկ,
Քաղաքներ, ձեր բանտից արդյոք կա՞ վերադարձ:
Եվ գիշեր, և՛ ցերեկ հղփացող[1] պաղ կուռքեր,
Ջնդաններ ու բուրգեր՝ չարությամբ անողոք,
Քաղաքներ, ձեր բանտում մեռնում են երգ ու սեր,
Քաղաքներ, մոռացա ես երգերս անհոգ...
Դղյակներ, պալատներ կերտելով ոսկեզօծ՝
Հեռուները մեռած շենքերի անտառում,
Քաղաքներ, իմ հոգին ձեր վիհում ալեկոծ,
Քաղաքներ, իմ հոգին արեգակ է խնդրում...
Կրկնակի գալստյան զանգերն եմ ես լսում,
Հատուցումն է գալիս— ես զգում եմ նորան,
Քաղաքներ, զարթնում է ահավոր մի ցասում,
Քաղաքներ, զարթնում են այն մարդիկ, որ մեռան...

* * *

Ես ձեզ բերի բարի լուր,
Ի՜մ եղբայրներ, արթնացե՛ք.
Լո՛ւյս է, լո՛ւյս է ամենուր,
Մեռած- քնած վե՛ր կացեք...
Ձեզ կոչում է անդադար
Նոր միացման մոռացում.
Առվակ, արև ու անտառ
Ձեր երգին են սպասում:
Լույս է, լույս է ամենուր,
Պատանիներ և կույսեր,
Ես ձեզ բերի բարի լուր,

1 հղփացող – փխբ. առատությունից, հարստությունից երես առնող, շփացող

Նոր հիացում, նոր հույսեր.
Շիրիմներից ելե՛ք վեր,
Մահիճներից հեշտանքի
Թևեր առե՛ք, լույս թևեր
Նոր արբունքի, նոր կյանքի:

* * *

Գայլերն են ոռնում... քամին է շաչում...
Կալանավորը նայում է հեռուն —
Մարդիկ լռել են, պատերն են լռում,
Անվերջ ու անվերջ շղթան է հնչում:
Կարծես թե քամին նոցա է կանչում,
Քամին պատմում է նրան մի գաղտնիք,
Գայլերն են ոռնում, լռել են մարդիկ,
Անվերջ ու անվերջ շղթան է հնչում:
Քամին քուն մտած մարդկանց է կանչում,
Ահավոր քամին դռներն է թակում...
Գալարվում, լալիս, անվերջ հեկեկում,
Անվերջ ու անվերջ շղթան է հնչում...
Քնած են մարդիկ, գայլերն են ոռնում,
Քամին է թակում դռները մարդկանց,
Բորբոքի՛ր, վառվի՛ր, ազատությա՛ն բոց,
Զարթնեցե՛ք, մարդի՛կ, գայլերն են գոռում...

* * *

Լա՛ց, լա՛ց, ի՛մ մուսա, մարդիկ չլացին
Անհայտ ընկածին...

Օտար դաշտերում, պաղ կյանքերի մեջ
Ընկնում են անվերջ,
Վաղաժամ մեռնող թերթերի նման
Թափվում են անձայն...
Նոցա արյունից կվառվի մի օր
Վրեժն ահավոր,
Նոցա խոսքերը նորից կհնչեն,
Կռվի կկանչեն...
Կլինի մի օր՝ զայրույթը կարող,
Երկի՛նք, ծով ու հող...
Լա՛ց, լա՛ց, ի՛մ մուսա, մարդիկ չլացին
Անհայտ ընկածին,
Եվ քո երգերում, և՛ տխուր լացում
Կոչի՛ր[1] հատուցում:

ԱՔՍՈՐԱՎԱՅՐՈՒՄ

Լուռ է գիշերը: Սառույց է ու ձյուն...
Պաղ լռությունը մռայլ է ու չար.
– Զարթի՛ր, ըղձալի գարնան շառաչյուն,
Պայթի՛ր, փոթորի՛կ՝ կարող ու պայծառ:
Լուռ է երկիրը: Երկինքը ամպոտ.
Մեկը թախծագին նայում է հեռուն,
Մեկը կանչում է՝ «Զարթի՛ր, առավո՛տ»,
Ու շղթաներով աղմուկ է հանում...
Ոչ մի արձագանք... գիշեր է ու ձյուն...
Հանգիստ ննջում է մռայլ շրջական,
– Շողա՛, վրեժի մահաբե՛ր դաշույն,
Հնչի՛ր, փոթորի՛կ ժողովրդական...

1 կոչել – կանչել, ձայն տալ. հրավիրել, անվանել, գոչել

* * *

Արևն արթնացավ, արևը մեզ ի՞նչ,
Նա մեզ չի բերում իր շողերը ջինջ,
Մեր վրա մռայլ կամարն է հեգնում,
Անսիրտ մեքենան ելնում ու ընկնում:
Գիշերն է իջնում հեզ ու հանդարտիկ,
Գազանն է ննջում, ննջում են մարդիկ,
Անվերջ կարիքն է մեր դուռը բախում,
Սովից մեր հոգնած սիրտը նվաղում:
Անվերջ աշխատի՛ր, տանջվիր անդադար,
Ու աշխատանքդ՝ ուրիշի համար.
Բավական է, վե՛րջ, մենք էլ չենք ուզում
Սիրո երգ, անրջանք, վայելք ու հուզում,
Վե՛ր կաց, ի՛մ ընկեր, վե՛ր կաց, մուրձդ ա՛ռ,
Նոր կյանք, նոր վայելք կոենք մեզ համար...

* * *

Այս պաղ աշխարհում ես տեսա միայն տառապանքի լաց,
Եղբայրների տեղ ես հանդիպեցի չար ոսոխների.
– Եվ դորա համար իմ դեմքը երբեք զվարթ չժպտաց,
– Եվ դորա համար դահիճ խոհերի ես դարձա գերի:
Երբ ես կամեցա ոսկե արևի շողերը գրկել,
Մարդիկ նենգամիտ խոնավ նկուղում ինձ շղթայեցին,
– Ինձ կյանքի քնքուշ գուրգուրանքներից մարդիկ են զրկել,
– Իմ սիրտը մարդիկ անգութ ու մռայլ չարությամբ լցրին:
Ես որոնում եմ ինձ նմաններին— իմ ընկերներին,
Ես որոնում եմ նոցա, որ զրկված, թշվառ են ու խենթ,
– Եկե՛ք խորտակենք այս կապանքները, որ մարդիկ դրին,
– Եկե՛ք, ձեր սրտում ես կիրդեհեմ հատուցումի տենդ...

* * *

Արևելքը ալ քող նետեց ուսերին,
Լույսը վառեց կատարները լեռների,
Մնաս բարով ասենք մենք էլ գիշերին,
Ալ շողերը տանենք ներքև— թող վառի...
Ելլ, իմ եղբայր, արշալույսի շողի հետ
Ճամփա ընկնենք լույսի երգով կենսավառ,
Տես, մութ է դեռ ձորի միջին արահետ,
Դեռ նիրհում են ճամփին ձորակ ու անտառ...

* * *

Իմ երկինքը հիմա բացված է,
Բացված է հուրերի ծով,
Իմ աչքերը հիմա լցված են,
Լցված են զվարթ ոսկով,
Կարկաչում են գարնան ջրերը,
Երգում են բարակ հովեր,
Արևոտ են գարնան օրերը,
Թևեր ինձ, ոսկի թևեր...

ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ

Համառ կանգնած ենք մենք իրար դիմաց,
Ես ու անցյալիս ստվերն ահարկու,
Ու մոտենում ենք մեկմեկու կամաց,
Ու թշնամաբար նայում մեկմեկու:
Զարթնել է հոգիս նոր կյանքի համար,

Նա ինձ ժպտում է՝ քարացած իմ դեմ,
Թևերն է հոգիս պարզում տիրաբար
Ու զվարթ ճչում— ես քեզ կհաղթեմ...

ԱՐԹՆԱՑՈՒՄ

Խե՛նթ մարտիրոսներ, պայծա՛ռ հերոսներ,
Ձեր կարմիր ճամփան՝ քարերի միջին,
Ցրեց իմ հոգու տենչերը չնչին,
Բացեց իմ հոգուն ուրիշ փարոսներ:[1]
Իմ ջլատ[2] հոգու վիշտը քարացավ,
Ես խորն զգացի իղձը ձեր հոգու,
Փա՛ռք ձեր անունին, որ այս ահարկու
Գիշերին բերիք նոր լույսի համբավ:
– Բարի կուռքերն[3] են մեզ շրջապատում,
Կենդանի աստված, ես քեզ եմ կանչում,
Ինձ քո կարոտն է անդադար տանջում,
Բարի կուռքերին ես չեմ հավատում:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԵՐԳ

Արձագանքվում են ամեն կողմերում
Մեր խրոխտ կանչի երգերը հզոր,
Վերջին տրտմության գիշերն է այսօր,

---

1 փարոս – աշտարակաձև բարձր կառույց լուսային ազդանշանով՝ վերին ուղի ցույց տալու համար, փխբ. որևէ բանի ուղենիշ

2 ջլատ – փխբ.՝ ուժասպառ, ջլատված, թույլ, տկար

3 կուռք – մարդակերպ կամ կենդանակերպ արձան, որին հեթանոսները պաշտում էին՝ իբրև աստծու, փխբ. պաշտամունքի առարկա, պաշտելի անձ

Մենք ձեր մութ կյանքին լույսեր ենք բերում:
Սև քաղաքներում գիշերն է շնչում,
Տանջանքն է սողում սև օձի նման,
Մեր ամբողջ կյանքը տանջանք է միայն.
Մենք չենք տրտնջում, իրար ենք կանչում:
Մենք ձեռք ենք մեկնում, կանչում, ականջում,
Մեր ընկերներին՝ պայքարից հոգնած,
Մեր ընկերներին՝ մռայլում քնած,
Վերջին զայրույթի զանգն է ղողանջում:
Արթնացի՛ր, երկրի դարավո՛ր մշակ,
Վառվեցե՛ք, ջահե՛ր, փողե՛ր, հնչեցե՛ք,
Շողա՛, նոր կյանքի արյունավա՛ռ ծեգ,[1]
Ծածանվի՛ր ազատ, կարմի՛ր դրոշակ...

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Իմ մենակության անապատներից
Լսեցի հանկարծ ահազանգերի
Ղողանջը ահեղ, և նոր տենչերի
Պայծառ հրդեհը իմ սիրտը այրեց:
Ու իմ փոշեպատ քայլերը մոլոր
Դեպի քաղաքը դարձան վերստին,
Ուր ձայնում էին կռիվը վերջին,
Ուր կռում էին աղմուկ ու ժխոր:
Եվ ինձ ժպտացին երգեր ու շփոթ,
– Ողջո՛ւյն քեզ, աղմո՛ւկ նորածին կյանքի,
Ողջո՛ւյն քեզ, ղողա՛նջ փրկարար զանգի,
Ողջո՛ւյն քեզ, բացվող պայծա՛ռ առավոտ...

1 ծեգ – արևածագ, լուսաբաց, այգ, արշալույս. փխբ. երևէ ցանկալի բանի (կյանքի, երջանկության և այլնի) սկիզբ

ՆՈԿՏՅՈՒՐՆ[1]

Խաղաղ ննջեցին երկինք ու երկիր,
Բայց ես քնած չեմ— դու արթո՞ւն ես դեռ.
– Ննջի՛ր, ի՛մ անգին, աչքերդ փակի՛ր,
Ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ:
Հեռու լեռներից գալիս է մի ձայն՝
Պաղ շղթաների շառաչյունի պես,
– Այս մութ գիշերի ժամապահն է այն,
Ննջի՛ր, ի՛մ անգին, ննջիր, որ զարթնես:
Շուտով կհնչեն թմբուկներ ու փող,
Շուտով կկանչեն այնտեղ ամենքին—
– Ննջի՛ր, մոռացի՛ր տանջանքդ խայթող,
Ես քեզ կարթնացնեմ, ննջի՛ր, ի՛մ անգին:

* * *

Դեռ իմ մոտ են քո նամակն ու պատկերը հին,
Ծաղիկներդ, ծաղիկներդ դեռ իմ մոտ են,
Ինձ ժպտում է հեռվից դեմքդ հավատարիմ,
Դեռ լալիս է տխուր հոգիդ իմ հոգու դեմ:
Դու սիրեցիր իմ խենթ հոգու վիշտը տկար,
Դու ինձ համար քո հայրենի հողը թողիր,
Ամեն բերկրանք դու մերժեցիր ու մոռացար,
Քո անարատ, քո սուրբ հոգին դու ինձ տվիր:
Ո՛չ ոք, ո՛չ ոք ինձ չսիրեց քեզ պես անվերջ,
Ո՛չ ոք դիպավ քեզ պես քնքուշ, քեզ պես մաքուր,
Բայց դու չկաս... ուշ է արդեն... ու ես հավերժ

1 նոկտյուրն – քնարական բնույթի փոքրիկ երաժշտական ստեղծագործություն՝ գործիքային կատարման համար, ցայգերգ

Լալիս եմ քեզ, իմ չսիրված հողերի տակ
Քնած ի՛մ քույր...

ՅՈԼԱԿԻՆ

Դու կամենում ես նոր երգեր լսել
(Անկատար մնաց իմ խոստումը հին),
Տխուր խոսքերից հոգնել եմ ես էլ,
Բայց կյանքն է տերը— մենք նրա գերին—
Հոգիս լցված էր երգերով հպարտ,
Բացվում էր իմ դեմ մի նոր ճանապարհ,
Բայց հանկարծ երգս մնաց անավարտ,
Ու նորից տիրեց իմ սրտում խավար:
Զգում էր հոգիս ազատ թևերի
Վեհ սավառնումի վեհ թափահարում,
Բայց լռեցրին ինձ անվերջ ձայների
Կսկիծներն անդուլ օտար աշխարհում...
Մի՛ կարծիր, որ ես համբակի[1] նման
Թեթև ուղին եմ համարում ընտիր
Եվ գերադասում սովորած ճամփան...
Թե գիտենայիր, ինչքա՜ն ցնորքներ
Եվ ինչքա՜ն երգեր մեռան իմ հոգում,
Թե գիտենայիր, հեռավո՛ր ընկեր,
Իմ դառն օրերն ու գիշերներն անքուն,
Թե գիտենայիր, ի՜նչ համառությամբ
Կուրծքս դեմ տվի ես հարվածներին,
Որ թափվում էին տարափ առ տարափ,
Ինչպես նենգ հուրով և ինչպես մթին,
Թե գիտենայի՜ր...

1 համբակ – թերուս, տգետ, իմաստակ

* * *

Որքան բոցեր, վարդեր վառման,
Խնդություններ՝ անդարձ կորած,
Որքան սերեր, որքան գարնան
Քնքշություններ դարձան երազ:
Որքան, որքան՝ մարգարտակուռ
Երգեր, խոսքեր ոսկեհնչյուն,
Ըղձեր, ըղձեր՝ շուշան մաքուր
Դեռ չբացված՝ դարձան աճյուն...

* * *

Երբեք չէր եղել այսպես ցավագար[1]
Քնքշությունդ, սի՛րտ, այսպես խորախոց,
Եվ երբեք՝ այսպես խանդոտ, խելագար,
Երբեք չէր եղել այսպես ցավագար...
Վերջինն է արդեն և դրա համա՞ր
Հանգիստ է կարծես— բայց ինքն՝ ալեկո՞ծ...
Երբեք չէր եղել այսպես ցավագար
Քնքշությունդ, սի՛րտ, այսպես խորախոց...

1 ցավագար – փխբ. վշտահար, վշտերից տառապող

ՄԹՆՇԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ

ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Սահուն քայլերով, աննշմար՝ որպես քնքուշ մութի թև,
Մի ըստվեր անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիկ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու[1] անցավ, մի գունատ աղջիկ՝ ձերմակ շորերով...

Արձակ դաշտերի ամայության մեջ նա մենում շշնջաց,
Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող[2] դաշտերին.—
Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց՝
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...

ԷՍՏՈՆԱԿԱՆ ԵՐԳ

Երբ կհոգնես, կգազազես աշխարհից,
Դարձի՛ր իմ մոտ, վերադարձի՛ր դու նորից.—
Ցաված սիրտս միայն քեզնով է շնչել,
Չի կամենալ նա վերստին քեզ տանջել:

Եթե բախտն ու վայելքները քեզ ժպտան,
Օտար մարդիկ քեզ սիրաբար ողջույն տան,

1 ուրու – մեռելի ոգի, ուրվական

2 նիրհ – քնին նախորդող թմրություն, նինջ, քուն

Գուցե ես լամ բախտիդ համար, իմ անգին,
Սակայն դարձիր, վերադարձիր դու կրկին:

Եթե հեռվում ճակատագիրն անհոգի
Սիրտդ մատնե անկարեկից տանջանքի,
Օ՜, գիտեցիր, իմ հոգին էլ կցավի
Անմխիթար մորմոքումից քո ցավի...

ԱՇՈՒՆ

Դալուկ[1] դաշտեր, մերկ անտառ...
– Մահացողի տխուր կյանք...
Անձրև, քամի, սև կամար...
– Սրտակտուր հեկեկանք:

Միգում[2] շողաց մի ցուրտ լույս.
– Օ՜, արդյոք կա՞ վերադարձ.—
Մահացողի անզոր հույս,
Վհատ[3] սրտի տխուր հարց...

Անուժ ցավի ցուրտ կապար[4]...
Մահացողի տխուր կյանք.
– Անմխիթա՞ր, անսպա՞ռ
Վհատության հեկեկանք...

---

1 դալուկ – դժգույն, գունատ

2 մեգ – մառախուղի թանձր շերտ

3 վհատ – հուսահատ, հուսալքված

4 ցուրտ կապար – փխբ. ճնշող, խիստ մտահոգություն պատճառող ցավ

ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏԵՐԻՑ

Աստղերն են ժպտում լուսեղեն նազով,
Խաղաղ դաշտերը մութն է համբուրում.
– Ես կախարդված եմ միշտ նույն երազով,
Միշտ նույն ցնորքն է իմ սիրտը այրում:
Մոտեցած երկնից աստղերը պայծառ
Ժպտում են խաղաղ քո աչքերի պես.—
– Իմ լքված սրտի կարոտը անծայր
Ամեն ինչի մեջ որոնում է քեզ...

* * *

Սարի հետևում շողերը մեռան.
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեգ.
Տխուր երեկոն զարկել է վրան.
– Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ:

Խորհրդավոր է երկինքն երազուն.
Վարսաթափ ուռի, դողդոջուն եղեգ.
Արծաթ խոսքերով աղբյուրն է խոսում.
– Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ:

Ծաղիկներն ահա քնքուշ փակվեցին,
Բացվեցին երկնի ծաղիկներն անհաս.
Սև տագնապները իմ սիրտը լցրին.
– Արդյոք ո՞ւր ես դու, իմ անո՛ւշ երազ:

Սի՛րտ իմ, այդ ո՞ւմ ես դու իզուր կանչում,
Տե՛ս՝ գիշերն անցավ, աստղերը մեռան,
Մենավո՛ր իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն,
Կարոտիդ կանչը չի հասնի նրան...

* * *

Եվ մոռացված, և՛ անմոռաց հեքիաթներ,
Լույս հնչյուններ, որ դողում են աշխարհում,
Քնքուշ աստղեր, որ վառվում են ու մարում.
Կյանքս՝ նա էլ մի լուսեղեն հեքիաթ էր...

Ճառագայթներ, որ շողացին ու չկան,
Մթնշաղի ուրվագծեր նրբահյուս.
Կյանքս՝ հեռվում անհայտ կորած մի հեզ լույս,
Որ չի վառում ո՛չ անցյալը, ո՛չ ներկան:

Հեռածավալ անհայտներում պահվտած
Գալիք օրերն անհուն, անտես խավարում.
Կյա՛նքս՝ հավետ քեզ անծանոթ տաճարում
Կանթեղի[1] պես առկայծում է քո դիմաց...

FATUM[2]

Կախարդական մի շղթա կա երկնքում՝
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու.
Իջնում է նա հուշիկ՝ որպես իրիկուն՝
Օղակելով լույս աստղերը մեկ-մեկու:
Մեղմ գիշերի գեղագանգուր[3] երազում՝
Այն աստղերը, որպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտագին, երազուն՝
Հավերժաբար իրար կապված և բաժան:

---

1 կանթեղ – լուսավորության սարք կամ հարմարանք յուղի ճրագի, վառած մոմի ձևով

2 fatum – (լատ.) – ճակատագիր

3 գեղագանգուր – գեղեցիկ գանգուրներով, այստեղ՝ գեղեցիկ

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու.
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ՝ բաժան և հեռու,
Աստղերի պես և՛ հարազատ, և՛ օտար...

ԷԼԵԳԻԱ[1]

Մեռնում է օրը: Իջավ թափանցիկ
Մութի մանվածը դաշտերի վրա.
Խաղաղ–անչար է, պայծառ՝ գեղեցիկ
Անտրտունջ նինջը մահացող օրվա...
Պարզ ջրի վրա եղեգը հանդարտ
Անդողդոջ կանգնած էլ չի շշնջում,
Լռին խոկում[2] են երկինք, գետ ու արտ,
Եվ ոչ մի շարժում, ու ոչ մի հնչյուն...
Ես կանգնած եմ լուռ, անչար է հոգիս,
Թախիծս՝ խաղաղ անուրջի նման.
Էլ չեմ անիծում ցավերը կյանքիս,
Էլ չեմ տրտնջում վիճակիցս ունայն...

ԱՇՆԱՆ ԵՐԳ

Ցրտահար, հողմավար
Դողացին մեղմաբար
Տերևները դեղին,
Պատեցին իմ ուղին...
Ճաճանչները[3] թոշնան[4]...

1 Էլեգիա – քնարական ժանր՝ թախծոտ բանաստեղծություն
2 Խոկալ – մտածել, խորհել
3 ճաճանչ – ճառագայթ, ցոլք, փայլ
4 թոշնել – թուլանալ, թառամել, բնական գույնը կորցնել

Կանաչներս աշնան —
Իմ խոհերը մոլար[1՝]
Ցրտահամ, հողմավամ...
Կրակներըս անցան,
Ցուրտ ու մեգ է միայն.
Անուրջներս երկնածին
Գնացի՜ն, գնացի՜ն...

* * *

Սիրտս ցավում է անցած-գնացած
Օրերիս համար.
– Մեկը շշուկով պատմում է կամաց,
Մեկը իմ հոգին տանջում է համառ:
Այդ հուշերի մեջ կա մի քաղցր ցավ,
Մի թովիչ երազ.
– Մեկը իմ սիրտը փշրելով անցավ
Ու հեգնությունով նայում է վրաս:
Սակայն չեմ կարող ես նրան ատել —
Սիրում եմ նրան.
– Իմ կյանքը մի նուրբ մշուշ է պատել,
Գուրգուրում է ինձ մի լույս-հանգրվան...
Մեկը իմ սիրտը փշրելով անցավ.
Օ՜, քաղցր արբանք[2]:
– Օրհնված եք դուք, սեր, ցընո՛րք ու ցա՛վ,
Օրհնված եք դուք, երկի՛ր, ե՛րգ ու կյա՛նք...

1 մոլար – մոլորված, թյուր, սխալ

2 արբանք – արբեցում, հարբել, զմայլանք

ԱՆԾԱՆՈԹ ԱՂՋԿԱՆ

Լույսն էր մեռնում, օրը մթնում.
Մութը տնից տուն էր մտնում.
Ես տեսա քեզ իմ ճամփի մոտ,
Իմ մտերի՛մ, իմ անծանո՛թ:
Աղբյուրն անուշ հեքիաթի պես
Իր լույս երգով ժպտում էր մեզ.
Դու մոտեցար մեղմ, համրաքայլ՝
Որպես քնքուշ իրիկվա փայլ:
Անակնկալ բախտի նման,
Հայտնվեցիր պայծառ-անձայն.
Անջատվեցինք համր ու հանդարտ,
Կյանքի ճամփին մի ակնթա՛րթ...

ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ

Աշո՛ւն է, անձրև՛... Ստվերներն անձև
Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ
Անձրև՛ ու անձրև՛ ...
Սիրտս տանջում է ինչ-որ անուրախ
Անհանգստություն...
Սպասի՛ր, լսի՛ր. ես չեմ կամենում
Անցած լույսերից, անցած հույզերից
Տառապել կրկին.
Նայիր, ա՛խ, նայիր, ցավում է նորից
Իմ հիվանդ հոգին...
Անձրև է, աշուն... Ինչո՞ւ ես հիշում,
Հեռացա՛ծ ընկեր, մոռացա՛ծ ընկեր,
Ինչո՞ւ ես հիշում.

Դու այնտեղ էիր, այն աղմկահեր
Կյանքի մշուշում...
Դու կյա՛նքն ես տեսել, դու կյա՛նքն ես հիշում—
Ոսկե տեսիլնե՛ր, անուրջների լո՛ւյս...
Ես՝ ցուրտ մշուշում.
Իմ հոգու համար չկա արշալույս —
Անձրև՛ է, աշո՛ւն...

* * *

Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում,
Երբ տխուր գգվանքով արեգակը մեռնող
Սարերի արծաթե կատարներն է վառում,
Երբ մթնում կորչում են ծով ու հող...

Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները — ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ:

Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցեք,
Որ խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք.
Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն անսահման...

* * *

Բյուր մարդոց մեջ,
Պաղ մարդոց մեջ,
Որպես տրտում
Անապատում —
Մենակությո՛ւն,
Մենակությո՛ւն...

Ա՜խ, այս տրտում
Երկրի ցրտում
Անլուր ընկան,
Անխոս հանգան
Երկնքի հուշ
Երգերս անուշ:

Եվ իմ հոգում,
Ցուրտ ու միգում,
Խինդը մեռավ,
Բախտը մարավ
Անվերադա՛ռձ,
Անվերադա՛ռձ...

ԹԱՓԱՌԱԿԱՆ

Օսիկին[1]

Նորից կթողնեմ քաղաքն աղմկոտ
Ու ճամփա կնկնեմ հավետ միայնակ.

1 Օսիկ Օհանջանյան – Տերյանի՝ Լազարյան ճեմարանի ընկերներից հաս. պետական գործիչ

Անխոս կմարի երեկոն աղոտ,
Կպառկեմ դաշտում կանաչ ծառի տակ:
Կմոռնամ հեռվի աղմուկը ահեղ,
Կզգամ համբույրը ուրիշ օրերի,
Լույս երազների գիշերը շքեղ
Սրտիս անծանոթ վայելք կբերի...
Հեռավոր մարդոց ցավերը կզգամ,
Կարկաչող ջրի լացը կլսեմ.
Հողը կգրկեմ, ջերմ կհեկեկամ,
Վառ աստղերի հետ անուշ կերազեմ:
Անտուն անցորդից կխնդրեմ ես հաց,
Պայծառ աղբյուրի ջուրը կխմեմ,
Լայն երկնքի տակ հաշտ ու սրտաբաց
Քնքուշ ծաղկանց հետ խաղաղ կքնեմ...

ԿԱՐՈՏ

Իմ անվերջ ճամփի տանջանքից հոգնած՝
Ես ննջել էի ոսկեղեն արտում.
Ու ճչաց սիրտս վայելքից անկարծ[1].
– Թվաց, որ մեկը կանչում է տրտում...

Եվ ես արթնացա խնդության ցավից.–
Գիշերվա հովն էր լալիս դաշտերում,
Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ,
Մենակությունն էր քարի պես լռում...

1 անկարծ – չկարծված, անսպասելի

ԼՈՒՄՆՈՏ[1]

Հմայված լուսնի շողերովն արծաթ,
Սրտում փայելով անսովոր մի տենչ՝
Ուրվականորեն շրջում է անվերջ
Տարորեն[2] լռին լուսնոտը գունատ:
Լուսնի շողերը՝ թովիչ-խուսափող,
Ստվերիդ նման և՛ հեռու, և՛ մոտ,
Ես մի լուսնահա՛ր, ես մի խենթ լուսնո՛տ,
Դու ցո՛լք, դու ցնո՛րք՝ հավիտյան խաբող:
Իմ մեջ սառել է հիվանդ մի կարոտ
Եվ չգտնելու տանջանքը մաշող.
Ես՝ մի լուսնահա՛ր, դու՝ լուսնկա՛ շող,
Դու հավերժաբար և՛ հեռու, և՛ մոտ...

ՀՐԱԺԵՇՏ

Դու գնում ես՝ չգիտեմ ուր,
Լուռ ու տխուր,
Հեզ գունատվող աստղի նման:
Ես գնում եմ տրտում-մենակ,
Անժամանակ
Ծաղկից ընկած թերթի նման:
Դու գնում ես՝ չգիտեմ ուր,
Սրտակտուր
Լացդ պահած իմ հայացքից:
Ես գնում եմ լուռ-անտրտում,

1 լուսնոտ – լուսնոտությամբ տառապող, հիվանդ, լուսնահատ, քնաշրջություն

2 տարորեն – տարօրինակ կերպով, անսովոր

Բայց իմ սրտում
Ցավ է անվերջ, մահո՛ւ կսկիծ...

ԻՐԻԿՆԱԺԱՄ

Շուտով կլռե աղմուկը դաժան,
Ու սիրտս կզգա քայլերդ փափուկ.
Դու նորից կիջնես, նո՛ւրբ իրիկնաժամ,
Քո խաղաղ մութով՝ գգվող-խուսափուկ:
Տխուր թևերդ անձայն կփռես,
Կգրկես հողը կանացի նազով,
Երկնքում անուրջ աստղեր կվառես,
Կլցնես հոգիս անուշ երազով:
Ցուրտ ցերեկներից հավիտյան դժգոհ՝
Սիրտս կարոտ է քո գգվանքներին.
Դու ինձ չես խաբում, քնքո՛ւշ երեկո,
Անո՛ւշ երեկո՝ մեղմ ու մտերիմ...
Կնստեմ անվերջ, կնստեմ մենակ,
Դու կփարվես ինձ թևերով ճկուն,
Քնքուշ կգգվես՝ հույս ու հիշատակ,
Կպարզես մեղմիկ ցոլքդ իմ հոգուն:

ԱՆՋԱՏՄԱՆ ԵՐԳ

Դու անհոգ նայեցիր իմ վրա
Ու անցար քո խաղով կանացի.
Ես քեզնից դառնացած հեռացա,
Ես քեզնից հեռացա ու լացի...

Իմ հոգին ծովերում անծանոթ՝
Մենավոր ու մոլոր մի նավակ,
Մատնեցի փոթորկին աղմկոտ՝
Հուսաբեկ, թողած ղեկ ու թիակ...

Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում,
Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան.
Միայն հողմն է տխուր շառաչում,
Անթափանց մեգ–մշուշ է միայն...

ՅՆՈՐՔ

Նա ուներ խորունկ երկնագույն աչքեր,
Քնքուշ ու տրտում՝ որպես իրիկուն.
Նա մի անծանոթ երկրի աղջիկ էր,
Որ աղոթքի պես ապրեց իմ հոգում:
Նրա ժպիտը մեղմ էր ու դողդոջ՝
Որպես լուսնյակի ժպիտը տխուր.
Նա չուներ խոցող թովչանքը կնոջ.–
Նա մոտենում էր՝ որպես քաղցր քույր...
Իմ հուշերի մեջ ամենից պայծառ,
Իմ լքված սրտի մաքուր հանգրվան,
Քո՛ւյր իմ, դու չըկաս, քո՛ւյր իմ, դու մեռար,
Ու քեզ հետ հոգուս լույսերը մեռան...

* * *

Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
Երեկոն վառեց լույսեր դժգունակ.

Մութը հյուսում է տրտմության ժանյակ,
Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում[1].
– Իմ սիրտը տրտո՛ւմ, իմ սիրտը մենա՜կ...
Մեռած լուսնյակը մենակ ու աղոտ
Սփռում է շուրջը իր շողերը ցուրտ.
Հավետ լռում է մի տխուր խորհուրդ,
Վառվում է հավետ մի անանց[2] կարոտ
– Սի՛րտ իմ ցնորող[3], սի՛րտ իմ անհագուրդ[4]...
Տխուր ու մենակ լուսնյակն է վառվում,–
Իմ սիրտն է լալիս մենակ ու ցավոտ.
Լուսնյակն արևի ստվերն է աղոտ,
Արևի ցոլքն է լուսնյակը տրտում.
– Փառքիդ ստվե՛րն է իմ կյանքը կարոտ:

ՎԻՀԻ[5] ԵԶԵՐՔԻՆ

Ունկնդիր եղա հողմի խենթ երգին,
– Անամոք[6] ցավի սրտմաշո՛ւկ նվագ.
Կանգնած եմ մռայլ վիհի եզերքին,
– Տրտում է հոգիս, հիվանդ ու մենակ...
Անվերջ մի ցավ է իմ սիրտը ճնշում,
– Ես մոռացել եմ արևի ուղին.
Անուրջ օրերի լույսը չեմ հիշում,
– Ինձ ո՞վ է մատնել այս մառախուղին...

---

1 բուրվառել – փխբ.՝ բույր սփռել

2 անանց, անանցանելի – չանցնող, չվերջացող, չմարող

3 ցնորող – երազող, անրջող

4 անհագուրդ – անհագ՝ չհագեցող, չբավարարվող

5 վիհ – անդունդ

6 անամոք – անսփոփ, դառը

Ունկնդիր եղա հողմի խենթ երգին.
– Ես էլ եմ ուզում հեկեկալ անհագ.
Կանգնած եմ մռայլ վիհի եզերքին,
– Տրտում է հոգիս, հիվանդ ու մենակ...

ՏԽՈՒՐ ԶՐՈՒՅՑ

Կապույտ երկնքի ոսկեղեն աստղեր,
Ձեր հեռվից դուք միշտ տեսնում եք նրան.
Ասացեք, արդյոք նա էլ թախծո՞ւմ էր,
Արդյոք տրտո՞ւմ էր նա էլ ինձ նման:

Խորհրդագետնե՛ր, դուք տեսնում եք միշտ.–
Արդյոք մենա՞կ էր նա էլ ինձ նման,
Թե՞ ընկեր գտած ժպտում էր անվիշտ,
Եվ փայփայում էր, և՛ սիրում նրան:

Խորհրդագետներ, դուք ժպտում եք լուռ,
Դուք լուռ ժպտում եք իմ ցավի վրրա.
– Նա քեզ մոռացած՝ վաղուց ամենուր
Ծաղրում է քո խենթ խոսքերը հիմա...

ՀՐԱՇՔ–ԱՂՋԻԿ

Հրա՛շք–աղջիկ, գիշերների՛ թագուհի,
Ճառագայթող քո աչքերով դու եկար,
Ոսկե բոցով լցրիր հոգին իմ տկար,
Հրա՛շք–աղջիկ, ցնորքների՛ դիցուհի...

Կախարդ լուսնի հրապուրող շողի պես
Դու ժպտացիր գուրգուրանքով սեթևեթ[1],
Ազատ սիրտս շղթայեցիր առհավետ,
Հրաշք-աղջիկ, դո՛ւ միշտ հաղթող ու միշտ հեզ:

Դու մի ցավոտ հիացումի երգ գիտես,
Քո ժպիտում կա խորհուրդի մի փայլանք,
Քո աչքերում կա մի անանց զմայլանք.
Դու չմեռնող մի վայելքի խոսք գիտես...

Հրաշք-աղջիկ, անհայտ երկրի՛ մանուշակ,
Գիշերային արեգակի ճառագայթ,-
Դու իջնում ես՝ կարող՝ որպես մահու խայթ,
Քնքուշ՝ որպես անդարձ բախտի հիշատակ...

* * *

Որպես ծաղիկն է անխոս գունատվում
Ցուրտ շվաքի մեջ արևից հեռի[2]՝
Այնպես թող սերը մեռնի իմ սրտում,
Որ քաղցր կյանքիդ տխրանք չբերի...

Ես լուռ կթաղեմ իմ ցավը միակ,
Ձվարթ կժպտամ բախտավորի պես,-
Երբեք չեմ բանա սրտիս մութը փակ,
Երբեք չեմ հայտնի իմ տանջանքը քեզ:

Որ պայծառ ժպտաս կյանքի երեսին,
Որ ոչ մի տրտունջ սիրտդ չհուզե,
Որ չմտորես իմ ցավի մասին,
Որ քո թունավոր խոսքը չկասե[3]...

1 սեթևեթ – պչրող, կոտրատվող, նազող

2 հեռի – հեռու

3 կասել – կանգ առնել, դադարել, հապաղել

* * *

Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր,
Կա քո հոգու մեջ անթափանց մի մութ,
Քո մութ հայացքում կա մի քնքուշ սուտ,
Քեզ միշտ թաքցնող մի նուրբ վարագույր...

Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ,
Հավետ քեզ կապված՝ քեզ օտար եմ ես.
Երբ խենթ խնդությամբ փայփայում եմ քե՛զ
Եվ սիրում եմ քեզ, և՛ քեզ չգիտեմ:

Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ,
Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր.
Քո հոգու վրա կա մի վարագույր,—
Ո՞վ ես դու, ո՞վ ես,— բնավ չգիտեմ...

* * *

Դու դեռ չես մեռել իմ հիվանդ սրտում,
Դու դեռ ապրում ես երազի նման.
– Բայց չէ՞ որ միշտ էլ երազ էր միայն
Պայծառ պատկերդ այս անապատում...

Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել,
Ես ամենուրեք քե՛զ եմ որոնում.
Դու երազների լուսե օրրանում
Ան՛ուրջ, որ գուցե բնավ չես եղել...

Քեզ իմ կարոտի կսկիծն է վառել
Երազանքներում իմ նվիրական.
Ի՜մ քույր, ի՜մ դահիճ, ի՜մ սուրբ սիրեկան,
Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել...

* * *

Ես անջատված եմ հայրենի հողից,
Հայրենի տունս՝ իմ սրտին օտար.
Ինձ այրում է միշտ մի անհագ թախիծ,–
Հավիտյան դյութող անհայտ ճանապարհ...

Հուզվում են, հոսում հեղեղները մեծ,
Մագլցում վերև և թավալվում ցած.
Զմրուխտե ջրեր[1], ձեզ ո՞վ վրդովեց,
Հայրենական տո՛ւն՝ հավետ մոռացված...

Միևնույն է ինձ Հյուսիս թե Հարավ,–
Մի խենթ տագնապ կա իմ հիվանդ սրտում,
Կա իմ հոգու մեջ մի անհագ ծարավ.
– Հավիտյան օտար, հայրենակա՛ն տո՛ւն...

* * *

Տխուր մեռան կապուտաչյա
Երազները երկնաշող.—
Գագաթներից ես ցած իջա
Անդունդները սիրտ մաշող...
Էլ ոչ մի թև ինձ չի տանի
Դեպի բարձունքն արծաթյա.
– Խենթ անկումիս գերեզմանի
Խավարներում ինձ գթա՛ ...
Ցուրտ է դարձյալ, մութ՝ իմ ուղին,
Սրտումս՝ մահ և աշուն

1 զմրուխտե ջրեր – փխբ. վճիտ, հստակ ջրեր

Մոռացել եմ ես ամենքին,
Միայն քեզ եմ ես հիշում...
Միայն քեզ եմ ես աղոթում,
Քո հրաշքին անպատիր[1]. –
Հայտնվի՛ր սև անապատում —
Ամոքիր ու ազատվիր...

* * *

Կրկին հնչում է թունավոր լեզուդ
Եվ քո խոսքերի նիզակները սուր,
Եվ քո համբույրը՝ որպես քաղցր սուտ—
Բախտ են խոստանում իզո՛ւր և իզո՞ւր...

Իմ մեջ մարել է մի լույս արեգակ,
Մահու գիշերն է մթնել իմ հոգում,–
Մի՞թե դու պիտի վառես նոր փափագ,
Մի՞թե դու պիտի հրդեհես հուզում...

Կանգնել ես՝ որպես անհաղթ հրապույր,
Մոտեցար ահա կարող ու խոնարհ,
Մթնում բորբոքվեց մի արնոտ համբույր,
Մեղքի պես թովիչ, ցավի պես խելառ:

Օձեղեն մարմնով փարվել ես կրծքիս,–
Եվ քո ցանկության ահեղ փոթորկում
Անեծք է թափում անկարող հոգիս
Եվ անհույս ճչում քո թունոտ գրկում...

1 անպատիր – չխաբող, ազնիվ, անդավաճան

* * *

Երբ պայծառ օրդ տխուր կմթնի,
Եվ սիրտդ կայրե թունավոր կասկած,
Վիատ սոսկումի տանջանքով կզգաս,
Որ որոնածդ բնավ չես գտնի...
Բայց դու կգնաս, օ՜, դու չես կանգնի,
Վերջին լույսերը մեղմ կվախճանեն,
Վերջին հույսերդ կդավաճանեն,–
Դու որոնածդ բնավ չես գտնի...
Եվ երբ չի մնա ոչ մի հույս գաղտնի,
Սիրտդ կճչա, արդյոք ո՞ւր ես, կա՞ս,
Հողը կգրկես և կհեկեկաս.–
Ո՛չ,– կարձագանքվի,– բնավ չես գտնի...

ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Քո հայացքը մոգական
Բորբոքում է քաղցր դող,–
Պարուրի՛ր ինձ կուսական
Հուզումներով քո դյութող:

Ինձ փաթաթի՛ր՝ որպես ամպ,
Մութ աչքերդ մեղմ փակի՛ր,
Ժպտա՛ կրքոտ բերկրությամբ,
Անցավ կյանքս խորտակի՛ր...

Արյունոտի՛ր շուրթերն իմ,
Սիրտս խայթի՛ր՝ ծիծաղի՛ր.
Թող աչքերս հեզ մեռնին,
Կյանքս մարի՛ր ու փախի՛ր:

Քո հայացքը մոգական
Բորբոքում է քաղցր դող,–
Պարուրի՛ր ինձ կուսական
Հուզումներով քո դյութող...

* * *

Կա խորհրդավոր մի հրապուրանք
Քո շարժումների անխոս զրույցում,
Ինչ–որ օձային ինքնահիացում
Եվ դեպի հողը ինչ–որ քամահրանք[1]:

Մի այլ երկրային երաժշտության
Ելևէջների պչրանքն[2] եմ հիշում,
Քո շարժումները աղոթք են շարժում,
Քո շարժումները և՛ կան, և՛ չկան...

Երկրում են սնված, բայց ոչ երկրային
Արբեցումներ են նոքա խոստանում,
Մի այլ տանջանքի եդեմ[3] են տանում,
Մատնելով հոգիս չարքերի[4] խաղին...

* * *

Անանց կարոտն է իմ սիրտը տանջում,
– Արդյոք ո՞ւր ես դու, արդյոք ո՞ւր ես դու.

---

1 քամահրանք – արհամարհանք

2 պչրանք – փխբ. նազանք

3 եդեմ – դրախտ, փխբ. երանավետ տեղ

4 չարք – երևակայական չար էակ, քաջք, սատանա

Քո անուշ ձայնն է հնչում ու կանչում,
– Բայց դու անհաս ես, հավիտյան հեռու...

Ելնում եմ դարձյալ անվերջ ճանապարհի,
– Կժպտա՞ս արդյոք, լուսեղե՛ն երազ.
Կցրե՞ս սրտիս թախիծը խավար,
Կնետե՞ս անուշ ցոլքերդ վրաս...

Թափառում եմ ու կարոտով կանչում,
– Արդյոք կգտնե՞մ աշխարհում անհուն.–
Բոլոր խոսքերում քո ձայնն է հնչում,
– Բայց անհայտ ես դու, դու չունես անուն...

ԱՇՆԱՆ ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆ

Կրկին իմ հոգում
Իջավ մշուշոտ, արցունք անձրևող
Տրտում իրիկուն.
Իմ սրտում անցավ
Մահացող ծաղկանց բույրը ցավ բերող,
Համբույրը խոնավ.
Կրկին պաղ միգում
Ամպոտ երկինքը մեռած լույսերի
Թաղումն է սգում:
Հողմը սրարշավ
Հոգուս դալկացած ծաղիկ հույսերի
Թերթերը տարավ...
Անջատման ցավոտ
Ձայներ դողացին ու հեզ դալկացան
Հեռվում անծանոթ.
Կրակներն անձայն

Լացող ամպերի միգում անսահման
Թոշնեցի՛ն, անցա՛ն.
Անձրևն անընդհատ
Մաղում է վիատ թաղումի կոծով,–
Տխուր, հուսահատ...
Իմ հոգու մեջ է՛լ
Աշուն է իջել անամոք լացով,
Իմ հոգու մեջ է՛լ...

* * *

Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ,
Քնքուշ ձեռներդ ես կհամբուրեմ,
Կցրեմ կյանքի հուշերը ցավոտ
Ու հեքիաթային լույսեր կվառեմ...

Երկար մազերդ կարձակես ազատ,
Հիվանդ գլուխդ կդնես կրծքիս
Կլինես քնքո՛ւշ, մոտի՛կ, հարազատ,–
Անուշ խոսքերով կդյութես հոգիս...

Պայծառ աշխարհում կլինենք մենակ,
Ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված,
Կերազենք անհուշ, անվերջ ու անհագ,–
Հեքիաթ աշխարհում առհավետ կապված...

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ[1] սգավոր,
Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ.
Իմ ուղին միշտ մթին, մենավոր,
Կգնամ իմ դժկամ ցավի հետ:

Իմ ճամփան՝ անվախճան մի գիշեր,
Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա.–
Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր,
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա...

Հուսաբեկ[2] մութ ու մեգ թող լինի,
Իմ վերև թող արև չխնդա.
Լոկ երկունք, լոկ արցունք թող լինի,
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա...

* * *

Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Հարկավոր չէ ինձ ո՛չ ծաղիկ, ո՛չ սուգ.
Հանկարծ կզարթնի ջերմ լալու փափագ,
Սիրտս չի գտնի ոչ մի արտասուք:

Իմ գերեզմանը թող լինի հեռվում,
Ուր մահացել են շշուկ, երգ ու ձայն
Թող շուրջս փռվի անանց լռություն,
Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան:

1 մրմունջ – տրտունջ, գանգատ

2 հուսաբեկ – հույսը բեկված՝ խորտակված, հուսահատ

Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Թողեք, որ հանգչի իմ սիրտը հոգնած,
Թողեք, որ լինեմ հեռավոր, մենակ,–
Զզգամ, որ կա սեր, և՛ ցնորք, և՛ լաց...

ՀԻՎԱՆԴ

Քնքուշ երազով պաճուճիր[1] հոգիս,
Նստիր մահճիս[2] մոտ ու տխուր երգիր,
Մազերդ փռիր հոգնատանջ կրծքիս
Ու մեղմ փայփայիր սիրտս տարագիր[3]:

Օտար դաշտերի անանց մշուշում
Տխուր լռության գիշերն է իջել. –
Իմ սիրտը հավետ թախիծն է մաշում,
Մի լուսե երգ է իմ հոգում ննջել...

Քո պայծառ գահից մեղմորեն իջիր,
Մազերդ փռիր հոգնատանջ կրծքիս,
Անուշ երազով սիրտս պաճուճիր,
Ցնորք հուշերով ամոքիր հոգիս...

* * *

Չարտասանված տխուր խոսքեր,
Որ դողում եք անպատասխան,
Ես սիրում եմ, տխո՛ւր խոսքեր,
Ձեր թրթիռը կախարդական:

---

1 պաճուճիր – պատիր, պարուրիր

2 մահիճ – սնար, մահճակալ, անկողին

3 տարագիր – վտարանդի, պանդուխտ, նժդեհ

Խենթ հուզումի անուշ խոսքեր,
Պաղ մարդոցից խորը պահված,
Անջատման պես տխուր խոսքեր,
Հոգուս լույսեր մթնշաղված...

Դուք այրում եք, սիրո՛ խոսքեր,
Կարոտիս պես սիրտս մորմոք.
Ձեզ չի գգվի, տխուր խոսքեր,
Ցուրտ աշխարհում ո՛չ ոք, ո՛չ ոք...

Չարտասանված տխուր խոսքեր,
Դուք չեք մեռել, դուք չե՛ք մեռնի,
Դուք այրում եք, սիրո խոսքեր,
Որպես խայթը սև եղեռնի...

ՄԹՆՇԱՂ

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,
Երբ ամեն ինչ՝ խորհրդավոր ու խոհուն,
Ցնորում է կապույտ մութի աշխարհում...
Չկա ոչ մի սահման դնող պայծառ շող,
Աղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ մաշող.–
Հիվանդ սիրտդ չի՛ տրտնջում, չի՛ ցավում՝
Որպես երազ մոռացումի անձավում.
Եվ թվում է, որ անեզր է ամեն ինչ—
Ու ողջ կյա՛նքդ — մի անսահման քաղցր նինջ...

* * *

Ցերեկը լռեց... Երկինքը վառեց ոսկե բուրվառներ[1],
Լույսերը քնքուշ գրկեցին անուշ երկինք, ծով ու հող.
– Ա՜խ, եթե մեկը իմ հոգին այդ մեղմ լույսերին խառներ
Եվ փայփայեր իմ հոգնատանջ սրտի թախիծը մաշող...

Լքված իմ հոգին տանջում է կրկին տանջանքը մռայլ,
Եվ անուն չունի տանջանքը սրտիս, տենչանքը գաղտնի.
– Ա՜խ, եթե մեկը իմ սրտին նետեր նոր հույսերի փայլ,
Մեղմաբար ասեր, քնքուշ համոզեր, որ նա կգտնի...

ԵՐԵԿՈ

Երեկոն փռեց իր թևերը մութ,
Անուշ նիրհեցին երկինք ու երկիր.–
Աչքերդ փակիր, ինձ քնքուշ գրկիր,
Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ:

Լայն ստվերները ընկան անաղմուկ,
Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ...
Ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ,
Իմ սիրո՛ւն մանուկ, իմ քնքո՛ւշ մանուկ...

Կրծքիս դիր դեմքը քո տխրադալուկ,
Մոռացիր կյանքի տառապանքը մութ,
Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ,
Իմ սիրո՛ւն մանուկ, իմ քնքո՛ւշ մանուկ...

Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ,
Ննջեցին անուշ երկինք ու երկիր.

1 բուրվառ – մետաղյա անոթ, որի մեջ կրակ են լցնում և խունկը մեջը գցելով՝ խնկարկում

Աչքերդ փակիր, ինձ քնքուշ գրկիր,
Ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ...

* * *

Դու քնած ես քո տաքուկ անկողնում
Եվ արև բախտի երազ ես տեսնում.
Դուրսը բքաբեր քամին է ոռնում,
Դուռ ու լուսամուտ ձյունով է լցնում...

Դու քնած ես քո տաքուկ սենյակում,
Իսկ ես ցուրտ ձմռան բուք ու հողմի մեջ
Խենթ հեկեկանքով դռներն եմ թակում,
Քո փակ դռները՝ անվերջ ու անվերջ:

Դու ինձ չես տեսնում լուսե երազում,
Դու ինձ չես լսում ձմռան փոթորկում,
Ես մութ գիշերում քե՛զ եմ երազում,
Բուք ու հողմերում ես քեզ եմ երգում...

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼ[1] ԵՐԳ

Արդյոք հիշո՞ւմ ես՝ անտառ էր, առու...
Հեքիաթի պես էր — երազի նման.
Խաղաղ երեկոն խոսում էր անձայն,
Արդյոք հիշո՞ւմ ես. – հեռո՛ւ էր, հեռո՛ւ...

Արդյոք հիշո՞ւմ ես՝ երկիրը պայծառ
Ժպտում էր սիրով հավիտենական.
Գարունն էր երգում ձայնով դյութական,

1 սենտիմենտալ – կյանքում և արվեստում չափազանցված զգայականության դրսևորում

Արդյոք հիշո՞ւմ ես՝ առու էր, անտառ...

Արդյոք հիշո՞ւմ ես՝ գիշերն էր գալու,
Հեքիաթի պես էր... Անտառ էր, առու...
Արդյոք հիշո՞ւմ ես՝ հեռո՛ւ էր, հեռո՛ւ.
Կյանք, տխուր հովիտ՝ հավիտյան լալու...

* * *

Ես չգիտեմ՝ ո՛ւր են տանում հեռավոր
Ուղիների ժապավենները անհամար,
Ես նստում եմ ճամփի վրա ամեն օր
Եվ աղոթում, և՛ թախծում եմ քեզ համար:

Եվ իմ մոլոր ուղիներում, ո՛վ գիտե,
Գուցե մի օր դու երևաս լուսերես[1].
Գուցե ժպտաս քո խոսքերով արծաթե
Եվ մութ սրտիս նոր խնդության լույս բերես:

Օձանման ոլորումով հեռախույս[2]
Ինձ կանչում են ուղիները բյուրավոր.
Արդյոք ո՞ւր ես, խորհրդավո՛ր արշալույս,
Հանդիպումի երջանկության պայծա՛ռ օր...

* * *

Իմ մոլոր ճամփին դու հանկարծ իջար
Քո գիշերային մեղմաշունչ մութով
Եվ զարդարեցիր քո անուշ սուտով
Իմ տխուր կյանքի մշուշը խավար:

---

1 լուսերես – լույսի նման սպիտակ երեսով

2 հեռախույս – դեպի հեռուները փախչող

Սրինգե ձայնդ հնչեց մութերում
Աղբյուրի նման զվարթակարկաչ.
Գարնան խոսքերով կարմիր ու կանաչ
Դու ինձ կանչեցիր դեպի քո հեռուն:

Ուրիշ ափերի թովիչ ձայնի պես,
Քո շարժումները ուրվականային
Ստվերապաճույճ իրիկնապահին
Շղթայեցին ինձ օղակով անտես...

Իրար ձուլվեցին իմ մեջ մահ ու կյանք,
Հոգիս մատնեցի քո մառախուղին,
Ընդմիշտ օրհնեցի անհաստատ ուղին,
Ուր փարոսում ես դո՛ւ, քա՛ղցր պատրանք...

* * *

Սև գիշերն իջավ իր անհայտ գահից
Եվ մութով լցրեց երկինք ու գետին
Խավարեց հեռվում փարոսը հետին.–
Սասանում[1] եմ ես ջրերի ահից:

Շողում են, դողում աղմուկով զվարթ,
Անխոս քարանում ու նորից խաղում,
Անդունդից ելնում, դեմքիս ծիծաղում,
Խուլ շառաչում են — լարում են թակարդ...

Նավը ճեղքում է ջրի հայելին,
Իր ցուրտ աչքերով ծովն է նայում ինձ,
Կտրված եմ ես երկնից ու հողից.–
Իր թելն է մանում[2] անխուսափելին:

1 սասանել – երկյուղից դողալ, ահից ցնցվել

2 թել մանել – այստեղ՝ տևական՝ մաշող հիվանդությամբ տառապել

Գերի է նավս անակնկալին.
Մութով կտրված երկնից ու հողից...

* * *

Հեռավոր, անել լեռնագագաթներ,
Պայծառ արևի գահեր հիասքանչ,
Սիրտս մեռնում է, լեռնագագաթներ,
Ներքևում նիրհող դաշտերում կանաչ:
Իմ երազները ձեր գիրկն են թռչում —
Բա՛րձր, դեպի վե՛ր, արեգակին մոտ,
Ուր խենթ բոցերի խուրձեր դողդոջուն
Լուռ դալկանում են երկնում անաղոտ:
Հեռո՛ւ, օ՜, հեռո՛ւ այս ունայնաշունչ
Տխուր դաշտերից՝ հանդարտ ու անկյանք.–
Գրկի՛ր ինձ, անել գագաթների՛ շունչ,
Սիրտս բորբոքի՛ր, բարձրության բերկրանք:
Թող իմ աչքերը լույսից կուրանան,
Թող սիրտս լցվի արևի բոցով.
– Օ՜, երջանկությո՛ւն անել բարձրության,
Լուսեղեն երկնի անեզրական ծո՛վ...

ԱՂՈԹՔ

Քո պայծառ գահի անհաս բարձունքից
Մի՛ մերժիր սրտիս աղոթքը անբիծ ...

ՍԱՖՈ

Ես ընկա անդունդները խավար,
– Իմ ցնո՛րք, նորից քեզ եմ կանչում.

Մոռացա ուղիներս պայծառ,
Իմ սրտում դառը մութն է շնչում:

Դու անմութ աշխարհում ես ապրում,
Հիշի՛ր դու խավարում տանջվողին,
Քո սրտում արևներ են վառվում,
Արևի՛ր սև կյանքիս մութ ուղին:

Հավիտյան ինձ քո սերն է այրում,
Դու լուսե՛ղ ... Ինձ խավարն է ճնշում:
Ես մեռնում եմ այս մութ վիհերում...
Հեռավո՛ր, քեզնից չեմ տրտնջում...

* * *

Մռայլ թաղումի ջահերի նման
Մեկը աստղերն է վառում տխրությամբ.
Իմ հոգու վրա իջել է մի ամպ,
Իմ սրտի պայծառ ծաղիկներն ընկա՛ն:

Հիվանդ քնքշությամբ երկինք է պարզում.
Մեռնող ծաղիկը իր բույրը վերջին.
Իմ ջերմ աղոթքի խոսքերը չնչին —
Հեռավո՛ր, քեզնից սեր չեն աղերսում:

Իմ սրտում միայն սառած հեկեկանք
Բայց արցունք չկա իմ սև օրերում.
Մեռնում է սիրտս անհուն խավարում,
Եվ դու կա՞ս արդյոք, լո՛ւսե անրջանք...

ԴԱՐՁ

Մի օր առհավետ կյանքս կանիծեմ
Ու գունատ հույսի քայլերով տարտամ
Կգտնեմ ուղին հեռավոր քո տան
Եվ թույլ ձեռներով դուռդ կծեծեմ:

Տխուր կժպտաս դու հոգնածորեն
Ու հոգնածորեն դուռը կբանաս. —
Սրտիս մութ ցավը անխոս կիմանաս,
Եվ արցունքներդ հանդարտ կծորեն:

Եվ գթությունը քո քրոջական
Սիրտս կլցնե խնդության լուսով,
Քո սուրբ ծնկները կգրկեմ հուսով,
Եվ կհեկեկամ, և կհեկեկամ...

ԶՄՌԱՆ ԳԻՇԵՐ

Զմռան գիշերն է մեղմորեն ընկնում
Եվ մեծ քաղաքի դեմքը մշուշում.–
Ես դուրս եմ գալիս, փողոց եմ գնում
Եվ երկար, երկար մայթերն եմ մաշում:

Բարձր տների պատուհաններում
Պայծառ լույսերը հանգչում են մեկ–մեկ.
Ես արդեն ոչինչ չեմ մտաբերում,
Ինձ համար չկա այսօր ու երեկ:

Կեսգիշերն անցավ... Ես տուն չեմ գնում.
Երկար, անդադար մայթերն եմ մաշում.

Շրջում եմ անվերջ, երբեք չեմ հոգնում,
Ոչինչ չեմ հիշում, ոչինչ չեմ հիշում...

Լապտերը միգում մաղում է պաղ բոց,
Ես աննպատակ շրջում եմ անվերջ.
Ես լուռ անցնում եմ փողոցից փողոց
Ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մեջ:

* * *

Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
Ամենին մոռանալ.
Չսիրել, չխորհել, չափսոսալ—
Հեռանալ...
Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,
Գիշերում այս անշող
Արդյոք կա՞ իրիկվա մոռացման,
Մոռացման ոսկե շող...
Մի վայրկյան ամենից հեռանալ,
Ամենին մոռանալ.—
Խավարում, ցավերում քարանալ
Մեն-միայն...
Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
Ամենին մոռանալ.
Չսիրել, չտենչալ, չկանչել,
Հեռանալ...

* * *

Օտար երկնքի կամարների տակ
Երազիս տեսա մի չքնաղ աղջիկ.
Ես՝ մի աղքատ մարդ մոլորաշրջիկ[1],
Նա՝ երկնից թռած լուսե հրեշտակ...

Ես ընկած էի օտար աշխարհում,
Անարև երկնի կամարների տակ,
Մեկը փայում[2] էր իմ սիրտը մենակ
Եվ իմ մութ հոգում լույսեր էր վառում:

Մեղմ ու սիրագին ժպտում էր նա ինձ
Օտար կողմերում, լայն ճամփի վրա,
Ես լսում էի խոսքերը նրա
Եվ անուշ լալիս իմ անուրջ բախտից...

14 ՏՈՂ

Արդյոք նորից երազնե՞րն են թափառում,
Սիրո անուշ նվագնե՞րն են ինձ կանչում.
– Դալուկ աշնան տխուր շողերն են մարում,
Սարից իջնող աղբյուրներն են կարկաչում:

Ես լսում եմ հիացմունքի մի շշուկ,
Արդյոք դո՞ւ ես նորից հոգիս մեղմ հուզում.
– Այն գիշերն է, այն հուշերն են տրտմաշուք,
Այն աստղերն են ցուրտ երկնքում երազում:

Ես ընկած եմ անծայր դաշտում միայնակ,
Երազնե՛րս, երազնե՛րս, որ անցան.

1 մոլորաշրջիկ – թափառաշրջիկ
2 փայել – գգվել, փայփայել, սիրել

Արդյոք դո՞ւ ես գիշերի պես հերարձակ,
Գիշերի պես խորհրդավոր, դյութական.
– Դալուկ աշնան մերկ անտառն է շառաչում,
Լույս հուշերի վտակներն են կարկաչում...

* * *

Սև գիշերն է գրկել ինձ, մութն է պատել իմ ուղին,
Քեզ եմ կանչում ես նորից, իմ հեռավո՛ր, իմ անգին...

Ես՝ մոլորված մի կրակ, ես՝ անհաստատ մի հոսանք,
Վիհեր, վիհեր անհատակ — տրտմություն ու ափսոսանք:

Օտար, երկիր, օտար հող, թախիծով լի երազներ,
Անրջանքներ մեղմ մարող, անվերադարձ հիացքներ:

Քաղցր է մութը քո գրկում, լույսը սև է առանց քեզ.
Այնպե՛ս մեղմ ես դու գգվում, դու լուսեղեն ես այնպե՛ս:

Դու իջնում ես՝ որպես հուշ, որպես ուրիշ կյանքի լույս,
Քո հայացքում կա անուշ մեղմություն ու արշալույս:

Սև գիշերն է գրկել ինձ, մութն է պատել իմ ուղին,
Քեզ եմ կանչում ես նորից, ի՛մ հեռավոր, ի՛մ անգին...

* * *

Դժկամ նայում են ժայռերը խոժոռ,
Տխուր խաղում են ալիքները ժիր.–
Ընդունի՛ր հոգիս մոլոր, մենավոր,–
Վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր:

Սողում են դանդաղ օրերը անծիր,
Կորած է մթնում մոլոր իմ ուղին.–

Քնքուշ խոսքերով թախիծս ցրի՛ր,
Անխոս ամոքի՛ր ցաված իմ հոգին:

Մի անմեռ ցավ կա երկրում այս տխուր,
Մի ցուրտ, հոգեմաշ հուսահատություն
Կորցրած հավետ և՛ երազ, և՛ հուր,
Ես վերջին անգամ քե՛զ եմ աղոթում:

Դժկամ նայում են ժայռերը խոժոռ.
Տխուր խաղում են ալիքները ժիր.
Փայփայի՛ր սիրտս հավետ մենավոր,
Վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր...

* * *

Քո մազերի ցնորական փայլը պայծառ,
Ժայռից իջնող ջրվեժի պես առատահոս,
Քո աչքերի խորությունը հրդեհավառ,
Ուր վառված են մութ ցանկության ջահեր անխոս.
Քո ժպիտը թունոտ ծաղկանց բույրի նման,
Որ տիրաբար արբեցնելով մահ է բերում,
Քո խենթ մարմնի սարսուռները երջանկության
Ախտաբորբոք արևներ են բոցավառում...
Թո՛ւյլ տուր՝ սուզվեմ քո աչքերի անդունդը մութ,
Թո՛ւյլ տուր՝ ծծեմ քո մազերի բուրմունքն անուշ,
Բորբոքի՛ր ինձ քո հույզերով՝ քաղցր ու անգութ,
Մարի՛ր իմ մեջ, մարի՛ր իմ մեջ ցնորք ու հուշ...

* * *

Դյութեցին ինձ քո մազերը ալեծածան
Եվ աչքերիդ խորությունը խորախորհուրդ,
Եվ քո քնքուշ ժպիտների խոսքերն անձայն
Գիշերեցին իմ հոգու մեջ մի քաղցր մութ...
Դյութեցին ինձ իրենց խաղով լուսակարկաչ
Քո խոսքերի զանգակները զվարթաձայն.
Շուրթերդ — վարդ բոցավառված են իմ առաջ
Ցանկությունով արյունատենչ ու մեղսական[1]:
Մութ ցանկությամբ ես քո կանչող գիրկն եմ ընկնում,
Նետում եմ ցած վեհ բարձունքից հոգիս հպարտ,
Քո գրկում կա սիրուց անուշ մի հիացում,
Քո խավարում — մոռացության մի ակնթարթ...

ՀՈՒՇԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ

Կյանքը լռում է, աղմուկը մեռնում.
Մի անծանոթ ձեռք նուրբ մթնշաղում
Անցյալն ու ներկան իրար է խառնում,
Իմ սրտում ոսկե անձրև է մաղում:

Մի քնքուշ լույս կա իմ հոգու համար—
Ամեն ինչ ունի չմեռնող մի կյանք,
Կա խորհրդավոր դյութող մի խավար,
Ուր բախտից քաղցր են տրտունջ ու տխրանք:

Մի քաղցր վիշտ կա անդարձ անցածում,
Վերհուշերի մեջ — մի անսուտ դրախտ,

1 մեղսական – մեղավոր՝ հանցավոր ձգտումներ պարունակող

Մի անանց վայելք, անխաբ[1] հիացում —
Կյանքից գեղեցիկ ցնորական բախտ...

ԳԱՐՈՒՆ

Գարունը այնքա՛ն ծաղիկ է վառել,
Գարունը այնպե՛ս պայծառ է կրկին.
– Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,
Ուզում եմ անուշ փայփայել մեկին:

Այնպե՛ս գգվող[2] է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում.
– Շուրջս վառված է մի անուշ տագնապ,
Մի նոր հուզում է սիրտս մրրկում...

Անտես զանգերի կարկաչն եմ լսում,
Իմ բացված սրտում հնչում է մի երգ.
– Կարծես թե մեկը ինձ է երազում,
Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք...

* * *

Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,
Ձգալ, որ դու կաս և լինել հեռու,
Երկրպագել[3] քեզ առանց սիրվելու,
Երազել միշտ քեզ — լինել քեզ օտար...

Ստվերդ փնտրել ամեն տեղ, ուր խենթ
Հոգին կարող է թռիչքով չափել.
Անանց կարոտում անվերջ տառապել
Եվ լինել քեզնից բաժանված հավետ...

---

1 անխաբ – չխաբող, վստահելի, ազնիվ

2 գգվել – շոյել, փայփայել, քնքշությամբ գրկել

3 երկրպագել – պաշտել, չափազանց սիրել

Ու գերեզմանում սև հողերի տակ
Ջգալ, որ անցար, և քեզ չկանչել,
Եվ ոչ մի հուշով սիրտդ չտանջել,
Ու չխռովել բերկրանքդ հստակ...

ԿԱՆՉ

Կանչում ես անվերջ
Կապույտ հեռվից,
Շշուկով անուշ
Կանչում ես ինձ:

Թփերն ես շարժում,
Շրշում անուշ
Շշուկով պայծառ
Ու փաղաքուշ[1]...

Անհայտ է ուղին
Քաղցր երկրիդ,
Ուր բախտ է անանց,
Անանց ժպիտ:

Ուր ծաղիկ ու երգ
Ուրիշ են, այլ,
Ու անմահական
Փառք է ու փայլ:

Այս իրիկնային
Կապույտ երկրում
Դու ես միշտ շրջում
Ու մեղմ երգում:

1 փաղաքուշ – փաղաքշական, քնքշալից, նուրբ

Ու կանչում ես միշտ
Անհայտ հեռվից,
Շշուկով անուշ
Կանչում ես ինձ:

* * *

Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում,
Իրիկնաժամին նստում եմ մենակ
Կանաչ առվի մոտ, ուռիների տակ,
Ու հոգնած սիրտս էլ չի դժգոհում:

Անցած օրերի հուշերն եմ թերթում
Եվ խաղաղ սրտով, անխռով–մենակ,
Քնքուշ երգերից հյուսում եմ մանյակ[1],
Որ պճնեմ սիրով պատկերդ տրտում:

Եվ իմ մութ կյանքի սևերում դժկամ[2՝]
Ես գիտեմ, պիտի ժպտաս, լուսավոր,
Պիտի ողջունես ուղիս հեռավոր.
— Սրբազան երազ, կարոտալի՜ ժամ...

* * *

Արդյոք ո՞ւր ես դու... Ա՜խ, արդյոք դու ո՞ր
Ճանապարհների հեռուն ես մաշում.
Երջանի՞կ ես, թե՞ լուռ ու մենավոր
Անդարձ օրերի գարունն ես հիշում:

Արդյոք քո սրտում ի՞նչ հույս է փայլում,
Ո՞ր հողն է գգվում քայլերդ փափուկ,

1 մանյակ – վզնոց, զարդ

2 դժկամ – անբավական, դժգոհ

Ո՞ր ջուրն է արդյոք յուր լույս հայելում
Մեղմով փաղաքշում դեմքդ խուսափուկ[1]:

Արդյոք խաղաղ է սիրտդ փոթորկոտ,
Արդյոք անցյալի լույսերը մեռած
Չեն հուզում սիրտդ, իմ հոգու կարոտ,
Իմ քնքուշ սիրած, իմ անդարձ երազ:

ՍԻՐԱՀԱՐՎԱԾԸ

Դու գնում ես տուն, և դեռ քո վերջին
Խոսքի հնչյունը չի մարել օդում,
Անզոր եմ արդեն այս խենթ կարոտում,
Եվ կամքս թույլ է, և միտքս՝ չնչին:

Խենթացած բեռից այս չար մենության՝
Ես դուրս եմ վազում քեզ որոնելու,
Տեսնելու ցոլքդ գեթ հեռվից–հեռու
Եվ հսկելու քեզ ստվերի նման...

Այս մութ ժխորում իմ սիրտն է մաշում
Մենակությունը՝ հավիտյան խոցող,
Անցնում եմ արագ ես ձեր փողոցով
Եվ խենթ մշուշում ոչինչ չեմ հիշում:

Ձեր դռան առաջ կանգնում եմ երկար,–
Գուցե դու հանկարծ «պատահմամբ» դուրս գաս,
Կարոտը, գուցե, դու հանկարծ զգաս
Եվ հասկանաս իմ հուզումը տկար:

Սակայն ուզում եմ, որ ինձ չտեսնես,
Չգիտեմ ինչու՞ ձեր զանգն եմ տալիս,

1 խուսափուկ – խուսափող, ծածուկ

Փախչում եմ... փախչում... և հեռանալիս
Փառաբանում եմ, օրհներգում եմ քեզ...

ԱՆԱՆՈՒՆ ՍԵՐ

Իմաստուն խոսքեր սովորեցի ես,
Որ հրապուրեմ զորությամբ մթին,
Հոգիդ կախարդեմ ու հմայեմ քեզ,
Ինձ այրող հուրը նետեմ քո սրտին:

Բայց բոլոր խոսքերն իզուր են արդեն,
Թալիսմանները՝ մեռած և անուժ,
Հմայք և դյութանք անզոր են քո դեմ...
— Արդյոք ո՞վ գիտե անունդ անուշ...

* * *

Իմ խաղաղ երեկոն է հիմա
Մեղմալույս, և՛ տխուր, և՛ անուշ.
Քեզ երբեք սիրտս չի մոռանա,
Իմ մաքո՛ւր, առաջին ի՛մ անուրջ...

Տարիներ, տարիներ կսահեն,
Կմեռնեն երազները բոլոր —
Քո պատկերը անեղծ կպահեմ
Օրերում անհաստատ ու մոլոր:

Եվ տանջանք, և՛ բեկում[1], և՛ թախիծ —
Սև օրեր ես դեռ շա՛տ կտեսնեմ.
Անունդ թող փարոս լինի ինձ
Սուտ կյանքի և դառը մահու դեմ...

1 բեկում – լքում, սրտի կոտրվելը

* * *

Հեռու ես, անհաս, իմ լուսե՛ երազ,
Բայց քեզ է սիրտս փայփայում թաքուն,
Փռված է լույսդ շուրջս և վրաս,
Անհուն աշխարհում և իմ հեզ հոգում:

Քո հեռու երկրի ուղին չգիտեմ.—
Գուցե ես ինքս ստեղծել եմ քեզ,
Աստվածացրել եմ, որ քեզ աղոթեմ,
Հրամայել եմ, որ վրաս իշխես:

Եվ քաղցր է լինել քո կամքի գերին,
Քո չարությունը բարիք համարել—
Կրծքաբաց ելնել ընդդեմ քո սրին
Եվ այդ մահաբեր ձեռքը համբուրել...

* * *

Հեռու երկրի լուսե հովտում
Օրերն ուրիշ երգ են հյուսում.
Կյանքից հոգնած սիրտս տրտում
Այն երկիրն է միշտ երազում...
Խաղաղությունն այն հեռանիստ[1],
Ուր մի ուրիշ արևի փայլ
Ծավալում է անանց հանգիստ
Եվ խնդություն մի անայլայլ[2],
Մի խնդություն՝ մաքուր և խոր,
Ե՛վ անեզերք, և՛ անվախճան,
Ուր քո սիրտը՝ որբ ու մոլոր
Գրկում է մի ոսկե շրջան...

1 հեռանիստ – հեռավոր, դեպի հեռուները տարածվող

2 անայլայլ – առանց այլայլության, անսերեր

ՀԻՆ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Այսօր նորից պարտիզում
Շրջում էի և հիշում
Քեզ արթմնի[1] երազում,
Ոսկի, ոսկի մշուշում...

Դու քո հեռու հեռավոր
Անհայտ երկրում արդյոք ինձ
Մտաբերո՞ւմ ես այսօր
Այն ոսկեղեն աշխարհից: —

Հիշո՞ւմ ես դու ակացիան
Եվ պարտեզը իրիկվա,
Հանդիպումը մայիսյան
Պատանու և աղջկա:

Եվ սենյակը ամփոփիկ,
Եվ տնակը հեռավոր,
Գաղտնիքները մեր փոքրիկ,
Սակայն քա՞ղցր, սակայն խո՞ր

Հիշո՞ւմ ես դու այն արագ
Ժամերը, երբ ես ու դու
Նստում էինք անկրակ.—
Դյութանք սրտի՞ և հոգո՞ւ:

Եվ խավարում, խավարում
Հիշո՞ւմ ես ջերմ շուրթերի
Հանդիպումը հրահրուն,—
Հուզմունքն արբած սրտերի...

1 արթմնի – արթուն վիճակում

Եվ պարտիզում մեր անուշ
Տեսակցությունն այն գիշեր,
Կիսախավարը քնքուշ.–
Ցնորակա՜ն իմ հուշեր...

* * *

Դու շրջում ես ամենուրեք, դու չըկաս,
Աներևույթ դու խոսում ես աշխարհում,
Հանկարծ, անկարծ շշնջում ես, որ կգաս,
Հմայում ես, կանչում, կանչում ու լռում.

Քնքուշաբույր ծաղիկների թերթերում,
Լույս դաշտերի խաղաղ նիրհող օվկիանում
Եվ աստղազարդ, խորհրդավոր գիշերում,
Եվ ջրերի արծաթաձոճ[1] օրրանում:

Ամենուրեք մի կարոտ ես դու նետել,
Քո ստվերն ես փռել անծիր[2] աշխարհում,
Դու ես հյուսում աստղացանցը ոսկեթել,
Գիշեր ու զօր կյանքը դու ես զարդարում:

Եվ աշխարհի ուղիներում ես մոլոր
Թափառում եմ և որոնում տխրադեմ,
Լսում եմ քո ձայնը՝ անուշ–լուսավոր,
Կանչում եմ քեզ, բայց անունդ չգիտեմ:

---

1 արծաթաձոճ – արծաթյա փայլով ճոճվող

2 անծիր – ծայր, սահման չունեցող

* * *

Ես կգամ, երբ դու մենակ կմնաս
Տրտում իրիկվա ստվերների տակ,
Երբ դու կթաղես տենչերդ խորտակ[1].
Եվ վիատությամբ երբ կհեռանաս...

Ես կգամ՝ որպես մոռացված մի երգ՝
Հյուսված աղոթքից, սիրուց ու ծաղկից.
Քո մեռած սրտում կլինի թախիծ,
Ես կկանչեմ քեզ դեպի այլ եզերք:

Ես կգամ, երբ դու կլինես տրտում,
Երբ երազներդ հավետ կմեռնեն,
Ձեռքդ կբռնեմ, ցավդ կըմբռնեմ,
Կվառեմ ուրիշ լույսեր քո հոգում...

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քնքշաբույր ծաղկանց հրեղեն խաղով
Ժպտում են նորից անտառ ու ձորակ,
Եվ հեղեղները՝ խոսուն-սառնորակ
Ողջունում են ինձ զվարթ ծիծաղով:

Ջուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
Գարո՛ւն, ամեն տեղ նոր կյանք ես վառել.
Իմ սրտում էլ ես թևերդ փռել,
Իմ հոգում էլ ես հրդեհել նոր սեր:

1 խորտակ – խորտակված

Եվ ահա կրկին զվարթ ու ջահել,
Դուրս ելա տխուր մենության բանտից.
Պայծառ աչքերդ ողջունում են ինձ,
Եվ ես չեմ կարող իմ ձիչը պահել:

Բացել ես իմ դեմ ոսկեղեն հեռուն,
Ծաղկել ես սարո՛ւմ, անտառո՛ւմ, արտո՛ւմ,
Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում —
Ողջո՛ւյն քեզ, արև՛, ողջո՛ւյն քեզ, գարո՛ւն...

ԳԻՇԵՐ ԵՎ ՀՈՒՇԵՐ

ՃԱՄՓԱԲԱԺԱՆ

Կանգնած եմ նորից ահեղ անտառում՝
Ճանապարհների բաժանումի մոտ.
Հանգչում են վերջին կրակներն աղոտ,
Ու մութն է կրկին իջնում ու փռվում...

Անցած օրերս շարքերով դալուկ
Շողում են ահա և անհետանում.
Չգիտեմ՝ կյանքը ինձ ո՞ւր է տանում.–
Ամեն ինչ հարց է, մթին հանելուկ:

Ծեծում են կուրծքս քամիները բիրտ[1],
Հազար ձայներով անտառն է խոսում,
Ես՝ ուղիների լաբիրինթոսում,
Եվ ողջը օտար, ողջը խստասիրտ:

Կանգնած եմ նորից ահեղ անտառում
Մութ ուղիների բաժանումի մոտ.
Պարզված է սիրտս հեռուն ու հեռուն,
Այրում է հոգիս անհուն մի կարոտ...

1 բիրտ – կոպիտ, դաժան

ՄՈՌԱՑՎԱԾ ՈՒՂԻ

Հեռու դղյակի քնքուշ թագուհին
Ծաղիկների մեջ, լուսեղեն այգում
Շրջում է և ինձ կանչում է կրկին,
Ցերեկը՝ տրտում, գիշերը՝ անքուն
Հեռու դղյակի քնքուշ թագուհին:

Կար մի դյութական ուրիշ ժամանակ,
Երբ նրա կանչի հրաշքին հլու,
Ես թողնում էի օրերս մենակ
Եվ այս աշխարհից սլանում հեռու...
Կար մի դյութական ուրիշ ժամանակ...

Գինովցած մի այլ կյանքի խնդությամբ՝
Թողնում էի այս վայրերը թառամ,
Սլանում՝ որպես լուսեղեն մի ամպ,
Եվ փարում նրան, փայփայում նրան՝
Գինովցած մի այլ կյանքի խնդությամբ:

Հիմա չգիտեմ այն լուսե ուղին,
Բայց զգում եմ դեռ, զգում եմ՝ ինչպես
Հեռու դղյակի քնքուշ թագուհին
Կանչում է ինձ միշտ, կանչում է, բայց ես
Արդեն չգիտեմ այն լուսե ուղին...

ԱՇՈՒՆ

Մեգ է, անձրև ու մշուշ
Իմ այգում մերկ,
Դառը թախիծ ու վերհուշ —
Անվախճան երգ:
Հողմն է լալիս թփերում

Մերկ ու վտիտ[1].
Ցուրտ է, խավար է հեռուն
Եվ անժպիտ:
Սիրտս թախծոտ ու խոցոտ,
Հոգիս հիվանդ,–
Ո՞վ արևոտ ու բոցոտ
Կվառե խանդ:
Տունս ավեր ու խավար՝
Օրս անլույս,
Ո՞վ կվառե ոսկեվառ
Երազ ու հույս...

ՓՈՂՈՑԻ ԵՐԳԸ

Պատուհանիս տակ լալիս է կրկին
Թափառիկ երգչի երգը ցավագին,–
Տխուր այդ երգը վաղուց եմ լսել,
Կարծես թե ես եմ այդ երգը հյուսել,
Կարծես թե ես եմ լալիս այդ երգում,
Կարծես թե քեզ եմ կարոտով երգում:

* * *

Սև գիշեր, և հուշեր, և խոհեր անհամար,
Մոռացված երազներ՝ շուշաններ թառամած,
Խնդություն հեռացած և անցած, և անդարձ,—
Տրտմություն մենավոր, միաձայն, միալար...

Մշուշներն են սահում... Սոսավում[2] է ուռին...
Իմ օրեր՝ անհատնում, անխնդում և անտուն.

1 վտիտ – թուլակազմ, տկար, թույլ, նվազ

2 սոսավել – սոսափել

Ցնորքնե՛ր՝ լուսավառ, ընդունայն[1], ապարդյուն,
Մոռացված է հավետ արևոտ ձեր ուղին...

Սև խոհեր՝ անսպա՛ռ, անհամա՛ր, անհամա՛ր,
Սև գիշե՛ր, և հուշե՛ր, և հուշե՛ր ընդունայն,
Երազնե՛ր իմ անդարձ — ծաղիկնե՛ր իմ գարնան.
Ի՛նչ կանչով ձեզ կանչեմ, ինչպե՛ս լամ ձեզ համար:

* * *

Հնչում է անվերջ աշնան թախիծով
Դաշնամուրն այնտեղ՝ պատի հետևում.
Հարազատ է ինձ այդ երգը հեծող[2] —
Իմ անանց ցավով մեկն էլ է ցավում:

Աշնան տխրահեծ անձրևի նըման,
Անձրևի նըման լալիս են անվերջ
Այն հնչյունները՝ մեղմ ու միաձայն՝
Պատի հետևում և իմ հոգու մեջ...

ԻՆՔՆՕՐՈՐՈՒՄ

Գիշեր է իջել. լռել են բոլոր
Աղմուկները չար, խոսքերը պատիր[3],
Ջրերը մեղմիվ երգում են օրոր,
– Սի՛րտ իմ, հանդարտի՛ր...

Հանգչում է վաղուց անտուն ու մոլոր
Թափառականը՝ մեն[4] ու տարագիր,

1 ընդունայն – ունայն, դատարկ, փուչ, իզուր
2 հեծող – վիշտը լացով ու հառաչանքներով արտահայտող
3 պատիր – սուտ, խաբուսիկ, կեղծ, ստահոդ
4 մեն – մենակ, միայնակ, մենավոր

Աստղերը խմբով երգում են օրոր,
– Սի՛րտ իմ, հանդարտի՛ր...

Լա՛ց վերջին լացդ, սի՛րտ իմ մենավոր,
Վերջին արցունքդ — հեկեկա՛, թափի՛ր,
Երազ, երգ ու սեր, օրո՛ր ու օրո՛ր,
– Սի՛րտ իմ, հանդարտի՛ր...

* * *

Անվերջ գիշերի մռայլ վիհերում
Իմ մենակ սիրտն է ցավագին ճչում.
Ես մոլորվել եմ այս մութ աշխարհում,
Եվ ինձ խավարից ոչ ոք չի կանչում:

Գիշերն է փռել իր թևերը մութ,
Գիշերն է գերել իմ սիրտը ցաված.—
Որտե՞ղ որոնեմ երջանկության սուտ
Եվ ինչպե՞ս գտնեմ վերադարձի լաց:

Հողմն է հեկեկում անունջ[1] վիհերում,
Օ՜, անհո՛ւն գիշեր, քեզ ո՞վ է փռել.
Ինչո՞ւ է շուրջս աշխարհը լռում,
Ո՞վ է իմ հոգու լույսերը մարել...

ՎԵՐՋԱԼՈՒՅՍԻՆ

Բարակ ամպերը մաղում են ոսկի,
Ջրերը անուշ հեքիաթ են ասում.
Կարոտ է սիրտս մտերիմ խոսքի,
Հոգնատանջ հոգիս բախտ է երազում...

1 անունջ – հատակ չունեցող, խոր

Լռին դաշտերի հանգիստը խոսուն
Մի հեզ տխրության լույս է ստվերում.
Խաղաղ ջրերի վաճիտ ալմասում[1]
Դողում է ոսկե ամպերի հեռուն:

Եվ իմ սրտի մեջ՝ այն խավարում էլ,
Մի քաղցր վիշտ է մեղմաբար խոսում.
Մեկը այնտեղ իր հեռուն է վառել՝
Որպես երկինքը ջրի ալմասում:

Քո քաղցր վիշտը, սի՛րտ իմ մենավոր,
Քո վիշտն է փռված անհուն աշխարհում,
Քո սերն է վառված, և՛ պայծառ, և՛ խոր,
Քո խենթ կարոտն է ամեն տեղ լռում...

ՄԻԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Տաղտկահնչյուն[2] ու միաձայն օրերն իրենց երգն են երգում.–
Միայնությո՛ւն, դու ես անձայն ցավս օրրում քո օրրերգում[3]:

Եվ անցյալի խաբեական ցնորքներն են մեղմ օրորվում,
Նոքա անդա՛ռձ, նոքա չկա՛ն, նոքա մեռա՛ն հեռու հեռվում:

Վհատումն է հոգիս գրկել, անհուսությունն անհուն փռվել, –
Ի՞նչ խոսքերով, ինչպե՞ս երգել և ի՞նչ սրտով հիմա սիրել:

Էլ ի՞նչ հույսով սիրտս հուզեմ, ի՞նչ երազով ամոքեմ[4] ինձ
Եվ ո՞ր կողմից բախտ սպասեմ — անվախճան երգ —
վիշտ ու թախիծ:

---

1 ալմասում – ալմաստում (փխբ.)

2 տաղտկահնչյուն – տաղտկալի հնչյուններ՝ ձայն ունեցող

3 օրրերգ – օրորոցի երգ, օրորոցային երգ

4 ամոքել – մեղմել, հանգստացնել, փարատել, սփոփել

Անցեք, հուշեր իմ ապարդյուն, դարձեք ընդմիշտ
մոռացված էջ,
Անհուն փռվի՛ր, սև՛ լռություն, միայնությո՛ւն իմ հոգու մեջ:

ՀՈԳՆԱԾՈՒԹՅՈՒՆ

Ես մի ճամփորդ եմ՝ մթնում մոլորված,
Ու հոգնած սիրտս դարձել է խոնարհ.
Չեմ ուզում կանչել ցնորքս մեռած,
Երազել գալիք ջրերի համար:

Ես չար հոսանքով մղված եմ հեռուն,
Եվ անվերադարձ փակված է ուղին.
Մի որբ մանուկ է հոգիս մոլորուն՝
Մատնված մութին և մառախուղին:

Մի անմայր մանուկ՝ հեկեկանքներից
Հոգնած ու բեկված — ննջել է ուզում.
Մի՛ վրդովեք դուք, մի՛ տանջեք նորից,
Մի՛ տանջեք նորից — հանգչել է ուզում...

ՕՏԱՐՈՒՀՈՒՆ

Դառնություն է լցված ու թախիծ
Քեզ օտար պոետի երգերում,—
Ո՞ր կողմից եկար դու, որտեղի՞ց
Նետեցիր քո նետերն իմ հեռուն:

Մթամած օրերիս տանջանքում
Արեգակ տենչացի, և ահա,
Քո խավարն է փռված իմ հոգում,
Քո գգվանքը և՛ չար, և՛ ագահ...

Ճչում եմ՝ հեռացի՛ր, բայց արդեն
Քմծիծաղն է ծաղկում քո դեմքին.
Ո՞վ ես դու, որ անզոր եմ քո դեմ
Եվ գերի՝ դիվային քո կամքին...

Դառնություն է լցված և թախիծ
Քեզ օտար պոետի երգերում.—
Ո՞ր կողմից դու եկար, որտեղի՞ց
Նետեցիր քո նետերն իմ հեռուն...

ԱՇՆԱՆ ԳԻՇԵՐ

Չգիտեմ՝ որտեղի՞ց է գալիս
Ջութակի հեկեկանքը տրտում
Եվ լալիս է անվերջ ու լալիս
Եվ անվերջ ծավալվում իմ սրտում:

Անհույս է այդ երգը՝ որպես մութ
Գիշերս, գիշերս աշունքվա. —
Կարծես՝ սուգ են անում և անգու,[1]
Եվ դառը լալիս են իմ վրա...

Այնքան վիշտ կա անհույս այդ երգում,
Այնքան դառը տանջանք ու թախիծ,
Եվ անվերջ, հավիտյան է երգում,
Հեկեկում այդ երգը այնտեղից...

Եվ ձուլված է արդեն իմ հոգուն,
Իմ բոլոր օրերին է ձուլված.
Տրտմություն է իմ շուրջն ու բեկում,
Իմ հոգում է անվերջ սուգ ու լաց...

1 անգու – պատշաճ, վայելուչ

Ա՜խ, բոլոր կողմերում է թախիծ,
Ամեն տեղ է փռված տրտմություն.
Եվ արդյոք՝ որտեղից, որտեղից
Սպասեմ ավետիք[1] ու խնդում...

ԿՈՒՅՐ ԼԻՆԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ես գիտեմ հիմա.— ամենքի նման
Մի սովորական աղջիկ էիր դու.
Ես էի պճնել[2] փայլով դյութական
Գորշ պատկերը քո կյանքի և հոգու:

Ես էի լցրել տխրությամբ սիրուն
Քո փոքրիկ սրտի դատարկը անգույն,
Լուսավառել իմ ըղձերի հեռուն
Չնչին օրերիդ մանրահոգ[3] կյանքում:

Ու գիտեմ հիմա.— մի սովորական
Աղջիկ էիր դու, նման ամենքին.—
Ա՜խ, երանի չէր բյուր և բյուր անգամ,
Որ կույր ու անգետ լինեի կրկին:

* * *

Մարդոց ժխորը թողնեմ հեռանամ,
Լիք-լցված սրտով նստեմ միայնակ,
Գրկեմ վարդերս դալուկ, դժգունակ,-
Մեռնող վարդերս փայփայեմ ու լամ:

---

1 ավետիք – ավետիս, ուրախալի լուր

2 պճնել – գեղեցկորեն զարդարել

3 մանրահոգ – մանր՝ չնչին հոգսեր ունեցող

Այս ցուրտ հյուսիսի թախծալի աշնան
Անձրևոտ օրվա մութ երկնքի տակ,
Ամայի դաշտում նստեմ միայնակ,—
Մեռնող հուշերս փայփայեմ ու լամ...

Անծիր աշխարհի դժկամ ու դաժան
Ուղիների մեջ իմ սերը կորած
Էլ չորոնեմ: Մթնում մոլորված՝
Դառը խոհերս գրկեմ, հեկեկամ,
Անվերջ հեկեկամ...

* * *

Գիշեր է և լռություն,
Լռություն է իմ հոգում,
Ո՛չ անուրջ կա ապարդյուն,
Ո՛չ սեգ[1] ըղձանք ու խոկում...

Ցուրտ է աշխարհն ու աղոտ.
Աշո՛ւն՝ անձրև՛ ու մշուշ,
Սևավոր են ու ցավոտ,
Եվ մտածում, և՛ վերհուշ...

Դուրս եմ գալիս ես փողոց,
Շրջում անվերջ ու տրտում.–
Բացված է մի թունոտ խոց,
Մի մութ շիրիմ իմ սրտում:

Մի՛ կանչեք ինձ, հույսի նոր
Խոսքերով ինձ մի՛ դյութեք,
Թող իմ կյանքը մենավոր

1 սեգ – վեհ, վեհապանծ, խրոխտ

Պատե անանց մութ ու մեգ...

Համր է երկիրն ինձ համար,
Եվ ցուրտ, և՛ լուռ, և՛ ունայն,
Հոգիս՝ անհույս ու խավար,
Սառը՝ որպես գերեզման...

Ո՛չ անուրջ կա ապարդյուն,
Ո՛չ սեգ ըղձանք ու խոկում.—
Գիշեր է և լռություն,
Լռություն է իմ հոգում...

ՄԱՀ

Մարի՛ր լույսը մշուշոտ,
Սև հուսերդ արձակի՛ր,
Դու ի՛մ դահիճ, դու ի՛մ քույր,
Դու ի՛մ ընկեր տարագիր,
Էլ մի՛ կրկնիր, մոռացի՛ր
Խոսքերն անմիտ ու պատիր,—
Լուռ տանջանքով, խավարով
Փայփայի՛ր ու փարատի՛ր...
Փարվի՛ր, փարվի՛ր ինձ ամուր,
Մեղսոտ սիրով սիրի՛ր ինձ,—
Մեխիր սուրդ կուրծքս բաց,
Թող թույն լինի և թախիծ:
Արդեն գիշեր, արդեն մութ,
Անանց խավար է արդեն,—
Եղի՛ր հզոր ու անգութ,
Չար ժպիտով ելի՛ իմ դեմ...
Երգի՛ր խավար և անկում,

Ինձ տանջի՛ր և ամոքի՛ր,—
Այրի՛ր սիրտս, թող լինի
Այնտեղ ավեր ու մոխիր:
Ցուրտ համբույրով համբուրի՛ր,
Այրի՛ր բոցով նրա ցուրտ —
Վերջին սիրով անպատի՛ր,
Անվախճան ու անհագուրդ...
Իմ ցավագին աղոթքին
Ունկնդրի՛ր ու երևա՛,
Քո հաղթության ու սիրո
Կնիքը դի՛ր իմ վրա...

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Դանդաղ է քայլում հոգնատանջ իմ ձին,
Եվ տաղտկալի է այս ուղին մոլոր.—
Չհիշե՛լ, մերժե՛լ տենչերս բոլոր
Եվ ցնորքներս, որ ինձ խաբեցին:

Անհուսություն և անվերջ վհատում
Եվ դառնություն է լցված իմ հոգում.
Փռված է խավար, և՛ մահ, և՛ անկում —
Ավերվա՛ծ ես դու, հայրենակա՛ն տուն...

Որքան էլ գիշերն ահավոր իջնի,
Եվ ուր էլ գնամ՝ գլուխ դնելու
Հարազատ մի հող ես չեմ գտնելու
Սև ճանապարհիս օրերում դժնի[1]:

Տանջանք են ու խոց հուշերս բոլոր,
Մնքերս ամեն — անամոք ցավեր.

1 դժնի – դժվարին, անտանելի

Խավար է շուրջը, և՛ մահ, և՛ ավեր,
Մութով է լցված իմ ուղին մոլոր...

Ու քանի գնում՝ այնքան անհատնում,
Այնքան ցավո՛ւտ են խոհերս անհույս,—
Դու չկաս արդեն, դարձել ես զրույց,
Երազ ես դարձել — հայրենական տուն...

Ա՜հ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն
Ընկնել և կորչել, և ննջել հավետ,
Ոչնչանալ ու մոռացվել քեզ հետ,
Ավերված երազ —հայրենական տո՜ւն...

ՑՆՈՐՔ

Ինձ չես սիրում, ուրիշին,
Ուրիշին ես սիրում դու—
Եվ անզոր է ու չնչին
Քո դեմ տանջանքն իմ հոգու:

Դու անցնում ես ամեն օր,
Անցնում՝ ինձ չես նկատում,–
Եվ դարձել եմ ես սովոր
Քամահրանքիդ անհատնում:

Քեզ խոնարհ՝ ամեն անգամ
Գլուխ եմ տալիս խոնարհ,
Բայց ես աղքատ եմ այնքան,
Այնքան թշվառ քեզ համար:

Ամենքինն ես, իմը չես,
Ամենքին ես սիրում դու.
Ա՜խ, ոսկով են գնում քեզ,
Անհաս ցնորք իմ հոգու...

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նուրբ ստվերները փռվում են քնքուշ,
Կապույտ խավարն է երկինքը պատում.–
Անուշ վարդերից մնաց միայն փուշ
Եվ ցնորքներից՝ վիշտ ու վհատում...

Ու մենք ուզեցինք դարձյալ հանդիպել,–
Ահա — մեր հոգում խավար է և մահ.–
Էլ ինչ երազի պատրանքով խաբվել
Եվ ինչ խոսքերով զրուցել հիմա...

Քո արցունքները թափվում են ահա,
Եվ դառն է լացդ հուսահատական,–
Քեզ ինչ խոսքերով սփոփեմ հիմա,
Ինչ արցունքներով հիմա հեկեկամ...

ԱՆԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Մենք բաժանված ենք: Օրերի փոշին
Դեռ չի աղոտել քո դեմքը գունատ.
Բայց ես օտար եմ արդեն այն հուշին,
Ուր վեհ էր երազն ու բախտը ժլատ:

Սառն աչքերով եմ նայում ես հեռվում
Մեռած օրերիս ցնորքին հիմա.–
Ուրիշից լսած մի երգ է թվում,
Ու թեև քաղցր է, բայց իմը չէ նա:

Մենք մնաս բարով չասինք իրարու,–
Ինչ կարիք իզուր տանջվել ու տանջել:
Մեզ կյանքը նետեց միմյանցից հեռու,
Եվ մենք չուզեցինք մեկմեկու կանչել:

Տարիներն անցան, և հին օրերին
Նայում եմ ահա անտարբեր սրտով,
Եվ, որպես գերին հլու իր բեռին,
Տանում եմ կյանքի օրերն անվրդով:

Էլ ոչ մի կանչի ես ձայն չեմ տալիս,
Ու եթե հանկարծ խոսքերդ հնչեն,
Եթե տեսնեմ քեզ վերադառնալիս,–
Քեզ ինչպե՞ս կանչեմ.– ես այն չե՛մ, այն չե՛մ.

ՏԽՈՒՐ ԵՐԳ

Ցուրտ անձրևն է միգում
Հեկեկում,
Տխրությունն է երգում
Իմ հոգում:

Ապագա և՛ անցյալ, և՛ ներկա
Խառնվել են իրար
Խավարել են օրերն արևկա.
Եվ խելառ:

Վիճակիս լծի տակ
Օրերում
Ես շրջում եմ մենակ
Ու լռում:

Չեմ հիշում, մոռացել եմ արդեն
Այն խոսքերը բոլոր,–
Հիմա կույր, հիմա համր եմ քո դեմ
Ու մոլոր...

Ցուրտ անձրևն է միգում
Հեկեկում,

Տխրությունն է երգում
Իմ հոգում...

RESIGNATION[1]

Այսօր գթանք իրարու,–
Խեղճ լինենք ու չամաչենք,
Բախտ չտենչանք ու հեռու
Տարիները չհիշենք:

Լռենք միայն մի մեղմող
Լռությունով ու հանգչենք,–
Բանանք սրտներս մեռնող,–
Որը լինենք ու չամաչենք:

Սիրենք իրար ու ներենք,—
Չնախատենք մեկ-մեկու,
Էլ չար սիրով չսիրենք,
Անչար լինենք ես ու դու:

Այսօր գթանք իրարու,
Այսօր իրար չտանջենք,
Լինենք անչար ու հլու,–
Հեկեկանք ու չամաչենք...

* * *

Իմ սիրտը միշտ
Մի անանուն
Ցավ է տանջում,
Անանց մի վիշտ

1 resignation – համակերպություն

Խորը թաքուն
Եվ անհնչյուն:
Կա մի մորմոք,
Մի վիշտ անհուն,
Որ չի ննջում:
Կա անամոք
Մի տխրություն
Ամեն ինչում...

* * *

Մարել ես արդեն, մեռել ես հավետ,
Հեռավոր կյանքի երազների բոց,–
Խավարն է գրկել հոգիս ալեկոծ,
Եվ դեպի լույսը չկա արահետ...

Անդարձ օրերի ցնորակա՛ն երգ,
Դու վաղ ես լռել իմ ցաված հոգում.–
Ես ինձ եմ թաղում և չեմ հեկեկում.–
Տանջանքի գիշեր — և չկա եզերք:

Իջել են մթին խոհերը վրաս,
Սառն է հիմա իմ գիշերը անապ,–
Էլ չկա ոչ մի լուսեղեն տագնապ,
Եվ ո՛չ մի երազ, և ո՛չ մի երազ...

* * *

Մեղքի մթին քարայրից,
Ուր հսկում ես դու անքուն,–
Մութ ցանկությամբ դյութիր ինձ
Եվ փայփայիր ինձ թաքուն:

Սև գիշերով ինձ կանչիր
Ամայի խուց ու այնտեղ
Հեզ մարմինս չար տանջիր
Գգվանքներում քո ահեղ:

Եվ մութ խորշում անձավի,
Ուր սարսափ է, ուր սոսկում,–
Արյունահոս թող ցավի
Իմ մարմինը քո գրկում:

Ես քեզ մերժել չեմ կարող,
Ես ամեն ինչ կտամ քեզ.–
Սև խորհուրդը մեզ գերող
Ես գիտեմ, և դու գիտես...

ԳԻՇԵՐ

Երգում է քամին, լալիս է նորից,
Անհույս ու անվերջ մղկտում է նա.–
Այս մութ գիշերում այնքան կա թախիծ,
Այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա:

Իմ դուռն է ծեծում քամին խոլական[1],
Իմ պատերի տակ հեծում է անվերջ,
Մեղմիվ երգում է մեղեդին լալկան,
Ոռնում ամայի փողոցների մեջ:

Փախչում է հեռուն թռիչքով անտես,
Դառնում է անկարծ ճիչով խելագար,
Ահաբեկում է և կանչում է քեզ,
Հեծկլտում է խեղճ, անզոր ու տկար...

1 խոլական – կատաղի, խենթ, խելագար

Եվ անպատմելի ցավով է լցված
Այդ երգը անանց հուսահատության.–
Մթին գիշերում իմ սիրտը խոցված,
Լացը հուսաբեկ ավերված իմ տան...

Երգում է քամին, լալիս է նորից,
Անհույս ու անվերջ մղկտում է նա.–
Այս մութ գիշերում այնքան կա թախիծ,
Այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա...

ԴԱՎԱՃԱՆ ՀՈՒՇԵՐ

Անվերջ գիշերիս անամոքական մենակության մեջ
Հետ կանչեցի քեզ, անդարձ օրերի ցնորո՛ւտ երկիր,–
Ուզեցի, որ դու պայծառ ու մաքուր լույսերով անշեջ
Եվ խորհուրդներով դյութես վերստին սիրտս տարագիր:

Եվ իմ հոգու մեջ ես խենթ կանչեցի, ճչացի վհատ,
Երբ տեսա՝ ինչպես մեռած օրերի խումբը դժնդակ
Սահեց իմ առաջ՝ որպես անիծված կյանքի մի հեքիաթ —
Եվ երազածս թվաց նենգալի, չար և այլանդակ:

Դառը մենության և անհուսության մթին վիհերում
Ես իմ թույլ սիրտը կամեցա քաղցր հուշով ամոքել,
Սակայն մթնել էր, դառն էր և դաժան անցյալի հեռուն.
Լուսեղեն հուշեր, դավաճանել եք ինձ դո՛ւք էլ, դո՛ւք էլ:

ՄԵԴՈՒԶԱ

Անհուսության մեջ, խավար օրերում եկավ նա ինձ մոտ.
Նա ինձ մոտեցավ քնքուշ, փայփայող սիրո խոսքերով,–
Շարժումների մեջ և մութ աչքերում կար մի անծանոթ
Վայելքի խոստում՝ անանց հիացման գաղտնիքով գերող:

Ես հավատացի այն ժպիտներին և այն մեղսական
Փայփայանքները բախտ համարեցի իմ մենության մեջ.–
Շուրջս գիշեր էր, մռայլ էր շուրջս իմ հոգու նման —
Եվ նա էր շողում երազի նման խավարում անվերջ...

Խենթ հիացումով արբեցի նրա տանջող գգվանքում,
Եվ գիրկը նրա թվաց ինձ եդեմ, մեղքը — սրբազան...
Օ՜, դառը գիշեր, տանջանք ու թախիծ.— իր արնոտ գրկում
Փայփայում էր ինձ և հևհևում էր երկդեմ Մեդուզան[1]:

ԱՇՆԱՆ ԱՌԱՎՈՏԻ ԵՐԳԸ

Այնպես անլույս է այսօր
Առավոտս լուսացել,—
Սիրտս հիվանդ ու անզոր
Անլուսությամբ է լցրել...

Մութ է հոգիս հոգնաբեկ,
Թախիծով լի և անհույս.—
Հրաշքով դու այսօր եկ,
Ժպտա՛ որպես արշալույս:

Հողմ ու անձրև շարունակ
Իմ լուսամուտն են ծեծում,—
Մի՛ թողնիր ինձ միայնակ
Անսահման այս կսկիծում...

1 երկդեմ Մեդուզա – ըստ հունական առասպելների՝ երեք թևավոր կին հրեշներից մեկը՝ Մեդուզան, ցանկանում է իր գեղեցկությամբ մրցել գեղեցկության աստվածուհի Աթենասի հետ: Վերջինս պատժում է նրան՝ նրա գեղեցիկ մազերը դարձնելով օձեր:

ՄԵՂՄՈՒԹՅՈՒՆ

Այսօր եղիր քրոջ պես —
Անչար, մաքուր և գթոտ,—
Գրկենք իրար ու նստենք,
Նստենք մինչև առավոտ...

Այսօր եղիր՝ որպես մայր —
Բարի, քնքուշ, նրբազգաց,—
Նստիր խաղաղ մահճիս մոտ,
Մութ գիշերին հետս լաց...

Ամոքիր դու իմ ցաված
Սիրտը՝ սիրով քո անբիծ,—
Այն մոռացվա՛ծ, մոռացվա՛ծ
Հեքիաթները պատմիր ինձ...

ՀՈՒՇԵՐ

Մենակության մեջ, գիշերում անքուն,
Հիշում եմ կրկին դաշտերը անծայր,
Արտերի ծովը՝ ոսկեղեն, ծփուն —
Երեկոների հանգիստը պայծառ:
Եվ իջնում է մի անսահման թախիծ...
Հիշում եմ նորից օրերս մեռած,
Տխրություններս՝ անուշ ու անբիծ
Եվ ընդմիշտ անդարձ անուրջ ու երազ:
Հիշում եմ խոսքեր, ակնարկներ անձայն,
Մի լուսե պատկեր —ցնորք աղջկա,
Այն ամենը, որ երազ էր միայն,
Այն ամենը, որ չկա՛ր ու չկա՛...

ՈՒՇԱՑԱԾ ՍԵՐ

Բուքն է լալիս. հողմ ու ձյուն,
Մառախուղ է և մշուշ.–
Ո՞վ է անվերջ հեծեծում[1],
Ո՞վ է կանչում այսպես ուշ:

Ո՞վ է շրջում անդադար,
Ու՞մ է կանչում հիմա նա,
Ես հեռու եմ, ես՝ օտար,
Ասացե՛ք՝ թող հեռանա՛...

Ասացե՛ք՝ թող հեռանա՛.
Թող մոռանա՛ ինձ հավետ,–
Անդարձություն է հիմա,–
Չկա դարձի արահետ:

Մեկը կորած շիրմիս մոտ
Հեկեկում է և երգում.–
Ո՞ւմ լացն է այն, ո՞ւմ ցավոտ
Երգն է ձերմակ մրրկում...

Իմ շիրիմը հեռավոր՝
Ե՛վ մոռացված, և՛ մենակ,
Ո՞վ է հուզում մենավոր
Իր թախիծով շարունակ:

Օտար երկրի դաշտերում,
Ցուրտ գիշերում ձմեռվա
Ո՞վ է անքուն դեգերում,
Անվերջ սգում իմ վրա....

---

1 հեծեծել – վշտից հառաչանքներ արձակել, ողբալ, սգալ

ԱՇՆԱՆ

Նորից անձրև, մշուշ, ամպ,
Թախիծ անհուն, տխրանք հեզ,
Աշո՛ւն, քեզ ի՛նչ քնքշությամբ,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...

Քո մշուշը, քո ոսկի
Տերևները հողմավար,
Դյութանքը քո մեղմ խոսքի,
Արցունքները քո գոհար...

Հարազատ են իմ հոգուն,
Վիատությանն իմ խոնարհ
Եվ թփերը դողդոջուն,
Եվ խոտերը գետնահար[1]...

Եվ քո երգը թախծալի
Իմ սրտի երգն է կարծես,
Աշո՛ւն՝ քաղցր ու բաղձալի,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...

* * *

Հեկեկում է անվերջ,
Հեկեկում.
Մենավոր ու վիատ
Իմ հոգուն
Հարազատ —
Անհատնում, անպատում[2]

1 գետնահար – գետնին կպած, շատ ցածր

2 անպատում – անպատմելի, աննկարագրելի

Կսկիծով
Հեկեկում է տրտում,
Հեկեկում...

Մշուշոտ ու աղոտ օրերում
Գիշերները երկար ու անքուն
Փողոցում, դաշտերում, անտառում.
Անամոք իմ հոգում,
Անանուն և՛ անտուն, և՛ անքուն
Միկտում է անվերջ,
Հեկեկո՛ւմ, հեկեկո՛ւմ, հեկեկո՛ւմ...

ԱՆԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Շրջում եմ դարձյալ պուրակում այն հին՝
Աշնան թախծալի երգով օրորված,
Հողմը փռում է տերևներ դեղին՝
Որպես հուշերս — երա՜զ ու մեռա՜ծ:
Մենակ եմ հիմա, և դու, ո՞վ գիտե,
Ո՞ր կողմերում ես — ժպիտով անուշ —
Նետում ծիծաղիդ կարկաչն արծաթե,
Վառում հայացքիդ դյութանքը քնքուշ...
Եվ գիտեմ՝ պիտի նորից հայտնվես,
Հիշես խոսքերը վաղուց մոռացված,—
Հրաշքին պիտի հավատամ և ես
Ու կրծքիդ դնեմ գլուխս հոգնած...
Բայց երբե՛ք, երբե՛ք էլ չի վառվելու
Ցնորքս մեռած,— պատկերդ հեռու...

* * *

Դու գալիս ես մութ գիշերապահին
Եվ լինում ես լուռ.
Ես չեմ հիշեցնում ցնորքներդ հին,
Չեմ վրդովում քեզ խոսքերով տխուր:

Ես հասկանում եմ քո խենթ աչքերի
Հրեղեն լեզուն,
Խոնարհ եմ լինում ես՝ որպես գերի,
Եվ տրտմության սև խոսքեր չեմ ասում:

Վառվում է մոմը դողդոջ փայլերով
Հեռու անկյունում,–
Ելնում ես անխոս, հպարտ քայլերով,
Մահապարտի պես այնտեղ ես գնում:

Եվ շշնջում է հագուստը թափվող
Վարագույրի մոտ, –
Փռվում է դառը ցնծության մի դող,
Ու ողջ աշխարհը դառնում է աղոտ...

Կանգնում ես դու մերկ, թագուհիդ՝ խոնարհ,
Իսկ ես՝ քո գերին.
Քո թագավորն ու դահիճն եմ խավար,
Եվ սահման չկա չար տանջանքներին...

ԻՄ ԵՐԳԵՐԻՆ

Մարդոց երկրում անտարբեր,
Ցուրտ աշխարհում, արդյոք ո՞վ
Կնդունե ձեզ գգվանքով,
Իմ երազնե՛ր, իմ երգե՛ր...

Այս օրերում ապական[1],
Կյանքի անարգ խնջույքում —
Ո՞վ կգգվե կուսական
Ձեր թախիծը իր հոգում:

Ո՞վ վշտաբեկ ու տրտում
Կարձագանքե ձեր խոսքին,–
Ձեր նվագը ցավագին
Ո՞վ կպահե իր սրտում...

Ո՞ւմ համար եք դուք հնչում,
Մեղեդիներ սգավոր,–
Արդյոք ո՞վ կա հեռավոր,
Որ ձեր ցավով է տանջվում....

* * *

Դանդաղ սահում են օրերը դժկամ,–
Անձրև՝ ու քամի՛,– տրտո՛ւնջ ու թախի՛ծ.
Լույսերս ոսկի ընկան ու հանգան —
Ցաված է սիրտս,– փայփայեցե՛ք ինձ...

Լռել է հեռվում երգը ցնծության,
Եվ գուցե չկար իմ ծնված ժամից,

1 ապական – ապականված, պղծված

Գուցե ես ինքս եմ հնարել նրան,
Որ սուտ հուշերով մխիթարեմ ինձ...

Տխուր ամպերը կամար են կապել. –
Անձրև՛ ու քամի՛,– տրտո՛ւնջ ու թախի՛ծ,
Դուք կարող եք գեթ սուտ սիրով խաբել,–
Հիվանդ է սիրտս.– փայփայեցե՛ք ինձ...

ԹԱԽԻԾ

Ամայի փողոցում մեգ–մշուշ,
Լռություն է մեռած.
Կարոտ է իմ սիրտը քո անուշ
Գգվանքին, իմ երա՛զ...

Հեռավոր կողմերից, հեռավոր,
Հայտնվի՛ր լուսավառ,–
Անհուն է գիշերը ահավոր,
Ե՛վ դժնի, և՛ խավար:

Իմ սերը անարատ է ու խոր,
Իմ հոգին՝ հնազանդ,–
Ամոքիր իմ սիրտը մենավոր,
Իմ թախիծը հիվանդ:

Մահից չեմ վախենում, գալիքին
Նայում եմ հավատով,–
Կարոտ է սիրտս քո հմայքին՝
Մաքուր ու հոգեթով[1]:

Աղոթքս պարզ է և նրբահյուս,–
Մեռնողի վերջին կա՛նչ,–

1 հոգեթով – հոգին թովող՝ հմայող

Հայտնվիր՝ որպես լույս-արշալույս,
Իմ հոգուն մահատանջ...

Ամայի փողոցում՝ մեգ-մշուշ,
Լռություն է մեռած. -
Հայտնվիր հմայքով քո անուշ,
Իմ երա՛զ, իմ երա՛զ...

* * *

Տարիներն արագ, ամպերի նման, անցնում են անհետ,-
Մոխիր է հիմա իմ հոգում անուշ երազների տեղ.
Բոլոր հուշերը, բոլոր խոսքերը մարել են այնտեղ,
Եվ այն, ինչ քաղցր էր, մաքուր էր, երազ,- ննջել է հավետ:

Երկար տարիներ իրարից բաժան, հեռու կողմերում,
Դու՝ ինձ մոռացած, ես՝ քեզ հիշելով՝ կյանք էինք մաշում.
Դու ցնո՛րք, երա՛զ, անհաս թագուհի,- ես երկրի փոշում,
Ես մեռա՛ծ, կորա՛ծ, մոլորվա՛ծ հավետ հեռավոր-հեռվում...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....3
ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ 5
ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ.....11
Որպես Լայերտի որդին, որպես 11
Այնպես անխինդ են և նման լացին..... 12
Իջնում է գիշերն անգութ ու մթին..... 13
Հայրենիքում իմ արնաներկ 13
Դու հպարտ չես, իմ հայրենիք..... 14
Մշուշի միջից,— տեսիլ դյութական 15
Կարծես թե դարձել եմ ես տուն 15
Այստեղ է լացել իմ մայրը..... 16
Քեզ կմնա միշտ օտար 16
Վյաչեսլավ Իվանովին..... 17
Մի՞թե վերջին պոետն եմ ես..... 18
Հիշում եմ՝ ինչպես այն ուշ..... 19
Ինչպե՞ս չսիրեմ, երկի՞ր իմ կիզված..... 19
Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց 20

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ 21
Հուր ես հագել հրեղենդ 21
Նետում ես ոսկի նետերդ 21
Խոր են քո հուր աչքերը.....22
Հրով արթնացած սիրտս 22
Այնպես օրորուն է քայլդ.....23
Դի՛ր քո կնիքը սրտում իմ 23
Չեմ տա երբեք անունդ.....23
Որպես մադամ Բովարին.....24
Տեսա երազ մի վառ 25

Ես չեմ հոգնել սիրելուց, և՛ երգերից, և՛ ցավից 25
Աշուն է. օրերը ցրտում են. 26
Սիրում եմ ես նրանց, որոնք խենթ են ու անտուն 27
Չեմ դավաճանի իմ Նվարդին 27
Դարձար դու, և սիրտս տխուր է 28
Այսօր գալու է իմ յարը 28

ՇԱՐՔԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 29
Դալուկ ու կնճռոտ, դեմքերով տխուր 29
Կոշմարը 30
Հոկտեմբերին 30
Քաղաք 31
Աղբյուր 32
Արծաթ-կարկաչուն 32
Սոնետ 33
Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր 34
Երգ 34
Արդյոք կապրե՞ս սիրտս մաշող կարոտը հեզ 35
Սիրելի Պաոլո Մակինցյանին 35
Դարձյալ իջավ գիշեր, դարձյալ— ու կրկին 36
Շատ երգեր կան իմ սրտում 36
Եթե սեր չկա— ինչի՞ համար 37
Անզարդ իմ օրվան, անտուն իմ կյանքին 37
Նույնն է հասցեդ հնամյա 38
Մենք բոլորս, բոլորս 39
Մանուկ ենք մենք— երկու խեղճ 39
Արարատին 40
Ախ, Բուզուլուկ քաղաքում 41
Ցուրտ հոկտեմբերն է ծեծում իմ դուռը 42
Ձեռներում Ձեր մանրիկ, նվագուն 43

Դու կնստես իրիկվան.....44
Ծույլ ու դանդաղ 44
Հրաժեշտի գազել 45
Երկու դժբախտ մանուկ.....46
Սրտակեզ կսկիծ մի հին 47
Մաշում է իմ սիրտն անդադար.....47
Տնակն իմ ցուրտ ու անզարդ 48
Գիշերն իջավ սև ու չարաչք.....48
Դողում է մարմինդ կիսաբաց 49
Ձյունը մանում է բարակ 50
Անդարձ կորել է սրտիս խնդումը 50
Տրտում է տունս..... 51
Ես մի անմայր որբ մանուկ..... 51
Գալիս ու որպես ալիք 52
Մտքերից այս տարամերժ 53
Երկրից քո հավետ հեռու 53
Դուրսը՝ մայիսն է, արբածը.....54
Քեզ այնքան անգութ 55
Քեզ, իմաստնագույն.....55
Ոսկեհանդերձ եկար և միգասքող.....56
Պաուլոյին 56
Մթնում է միգում արևն իմ բորբոք.....57
Պետերբուրգ 57
Աշխարհից ես չեմ տրտնջում.....58
Մի փրկություն կա միայն.....59
Նույն երգն եք երգում դուք, նույն հինը 59
Շղթայված է իմ հոգին գերի խանդոտ հուշերիս 59
Թողի երկիրն իմ հայրենի.....60
Կանգնել ես դու նրբահասակ..... 61
Այնպես նազիկ, այնպես թեթև, այնպես օրոր 61

Պաուլոյին 62
Մի հին տրտմություն՝ անսփոփ ու խոր 63
Որքան դեռ տրտունջ, քանի տրտմություն 64
Եղի՛ր ինձ քույր... Թող որ հոգիս 64
Լինեի չոբան սարերում հեռու 65
Հովիվներն այնտեղ կրակ են արել 66
Հովիվներն ազատ հեռու սարերում 66
Դու հնչի՛ր— քո սրտի գարունն է 66
Օ՜, կգան օրեր ավելի տրտում 67
Երբ կհոգնեմ, տարե՛ք ինձ երկիրն իմ հեռու 67
Գինով եմ, գինով եմ ես էլ 68
Ինչ քաղցր է նստել այստեղ 68
Դուք մի հին վեպ եք դանդաղ թերթում 69
Այնպես բարակ են Ձեր մատները, Տիկին 69
Ձեռներին Ձեր մարմարյա 70
Անվանեցեք ինձ հիմար 70
Տխրադեմ ու մտախոհ 71
Ոչ ծաղրածու զվարճաբեր, ոչ խոսքերի վարժ վարպետ... 72
Թեթև էր արվեստն իմ՝ խնդում 73
Երանի նրան, ով հայրենական 74
Ի՞նչ ունեմ ես 75
Պետք է համառ դեռ կիզեն 75
Նորից իմ ճամփան գնում է հեռուն, հեռուն է տանում 76
Մութն ընկավ... մութն ընկավ... հնչյունները մեռան 77
Այս գիշեր կրկին մայրս մեռած 77
Կգա կրկին մայիս մի նոր 79
Դրեք սիրտս դարավոր 79
Հիմա երկրում իմ բարձրիկ 80
Հոգնեցի գրքերից անհամար 81
Երկի՛ր Նաիրի, երա՛զ հեռավոր 81

Այս գիշեր իմ սրտում, այս գիշեր 82
Ո՛չ, մենակ չեմ ես լեռներում 83
Արթուն է վիշտը տոկուն 83
Նոր օր է բացվում ազգերի համար.....84
Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին 84
Չեմ հավատում ճիչերին ձեր ցնծագին.....85
Ի՞նչ մնաց ինձ— ոսկյա մի ցանց, ուրիշ ոչինչ 86
Ինչո՞ւ ես ջահել չմեռա.....86
Կրկին եկար, անո՛ւշ գարուն 87
Արեգակը հուր ոսկի է մաղում.....87
Պայծառ են աստղերը 88
Իմ դուռը բաց է՝ եկեք բոլոր 88
Դուրս եմ գալիս ես, լուռ թափառում 89
Փողոցներն ահա դադար են առնում 90
Իմ հոգին՝ որպես թափառիկ մի շուն.....90
Ամնձրև է կրկին, և խցիկն իմ խեղճ..... 91
Էքսպրոմտ.....92
Կանչում են ինձ ձայներ.....92
Հրեշտակ՝ մաքուր, լուսաթև.....93
Ինչո՞ւ է այսպես սիրտս մղկտում 94
Ձերմ կարոտով սպասում եմ անհամբեր.....95
Նմանություն 95
Դու Լեյլան ես, դու երա՛զ— դու Լեյլան ես լուսավոր.....96
Աստղերն են քնքուշ խաղում.....97
Քնկոտ առվին թեքվեց ուռին 97
Ոսկի ավազ լինեի.....98
Արեգակը ծովն է իջնում 98
Այստեղ միշտ քեֆ ու հանդես է 99
Թումանյանի պալատում 99
Թումանյանի երգերում..... 100

Ես դեռ պատանի սիրեցի քո խիստ 101
Ճեղքելով կապույտ անապատն անհուն 101
Ռ. Զարդարյանի ալբոմում 102
Գար ինձ հանկարծ հեռագիր 102
Այս հին ու նոր գրքերի վրա կորացած 102
Այնպես պարզ ու խնդագին, օ՛, խնդություն իմ սրտի 103
Ա՜խ, դեռ ինչում է քնքուշ մուզիկը 104
Դարձել եք հեռու երկրներից 105
Եվ դուք այդ գիտեք՝ դա չէ՞ արդյոք 105
Որքա՜ն փոխված եք... Պճնված ճոխ 106
Նամակ 107
Եվ հիշեցի ես հորդ անձրևի տակ 108
Երգն այս անզոր ու անզարդ 108
Դու չգիտես՝ դեռ որքան անմիտ են 109
Հանաք 110
Ինչո՞ւ ես այդպես դու ինձ նախատում 110
«Փշե պսակ» գրքից 111
Ողջույն քեզ, տանջանք, ահեղ հիացում 112
Երանի՜ նրանց, որ մութ բանտերում 112
Գիշեր ու ցերեկ համաչափ զարկով 113
Լռել են արդեն երգերը հզոր 113
Կանչում են ինձ գիշերն ի բուն, աղաղակում իմ հոգում 114
Քե՛զ եմ երգում, կարմի՛ր 115
Հարյավ հավետ, հարյավ հոգին իմ որբ 116
Ելլ, դեմոկրատի՛ա 116
Զարդեցե՛ք անդուլ, անգութ, անխնա 117
Մեր թշնամին բերում է «տանկեր» 117
Մշտունայն այս հոգսերում 118
Քաղաք 118
Ես ձեզ բերի բարի լուր 119

Գայլերն են ոռնում... քամին է շաչում 120
Լաց, լաց, իմ մուսա, մարդիկ չլացին 120
Աքսորավայրում..... 121
Արևն արթնացավ, արևը մեզ ի՞նչ 122
Այս պաղ աշխարհում ես տեսա միայն տառապանքի լաց122
Արևելքը ալ քող նետեց ուսերին 123
Իմ երկինքը հիմա բացված է 123
Վերածնություն 123
Արթնացում..... 124
Բանվորական երգ..... 124
Նմանություն 125
Նոկտյուրն 126
Դեռ իմ մոտ են քո նամակն ու պատկերը հին..... 126
Ցոլակին..... 127
Որքան բոցեր, վարդեր վառման 128
Երբեք չէր եղել այսպես ցավագար..... 128

ՄԹՆՇԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ..... 129
Տխրություն 129
Աշուն..... 130
Շիրակի դաշտերից 131
Սարի հետևում շողերը մեռան.....131
Եվ մոռացված և անմոռաց հեքիաթներ 132
Fatum..... 132
Էլեգիա..... 133
Աշնան երգ 133
Սիրտս ցավում է անցած գնացած 134
Անծանոթ աղջկան..... 135
Աշնան մեղեդի 135
Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում..... 136

Բյուր մարդոց մեջ 137
Թափառական..... 137
Կարոտ..... 138
Լուսնոտ..... 139
Հրաժեշտ..... 139
Իրիկնաժամ 140
Անջատման երգ 140
Ցնորք 141
Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում..... 141
Վիհի եզերքին..... 142
Տխուր զրույց..... 143
Հրաշք–աղջիկ 143
Որպես ծաղիկն է անխոս գունատվում 144
Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր..... 145
Դու դեռ չես մեռել իմ հիվանդ սրտում..... 145
Ես անջատված եմ հայրենի հողից..... 146
Տխուր մեռան կապուտաչյա 146
Կրկին հնչում է թունավոր լեզուդ 147
Երբ պայծառ օրդ տխուր կմթնի 148
Ցանկություն..... 148
Կա խորհրդավոր մի հրապուրանք 149
Անանց կարոտն է իմ սիրտը տանջում 149
Աշնան տրտմություն 150
Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ 151
Հրաժեշտի խոսքերից 152
Իմ գերեզմանին դուք չմոտենաք 152
Հիվանդ 153
Զարտասանված տխուր խոսքեր 153
Մթնշաղ 154
Ցերեկը լռեց... Երկինքը վառեց ոսկե բուրվառներ 155

Երեկո 155
Դու քնած ես քո տաքուկ անկողնում 156
Սենտիմենտալ երգ 156
Ես չգիտեմ՝ ո՛ւր են տանում հեռավոր 157
Իմ մոլոր ճամփին դու հանկարծ իջար 157
Սև գիշերն իջավ իր անհայտ գահից 158
Հեռավոր, անել լեռնագագաթներ 159
Աղոթք 159
Սաֆո 159
Մռայլ թաղումի ջահերի նման 160
Դարձ 161
Ձմռան գիշեր 161
Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ 162
Օտար երկնքի կամարների տակ 163
14 տող 163
Սև գիշերն է գրկել ինձ, մութն է պատել իմ ուղին 164
Դժկամ նայում են ժայռերը խոժոռ 164
Քո մազերի ցնորական փայլը պայծառ 165
Դյութեցին ինձ քո մազերը ալեծածան 166
Հուշերի երկրում 166
Գարուն 167
Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար 167
Կանչ 168
Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում 169
Արդյոք ո՞ւր ես դու... 169
Սիրահարվածը 170
Անանուն սեր 171
Իմ խաղաղ երեկոն է հիմա 171
Հեռու ես, անհաս, իմ լուսե երազ 172
Հեռու երկրի լուսե հովտում 172

Հին պարտիզում 173
Դու շրջում ես ամենուրեք, դու չկաս 174
Ես կգամ, երբ դու մենակ կմնաս 175
Գարնանամուտ 175

ԳԻՇԵՐ ԵՎ ՀՈՒՇԵՐ 177
Ճամփաբաժան 177
Մոռացված ուղի 178
Աշուն 178
Փողոցի երգը 179
Սև գիշեր, և հուշեր, և խոհեր անհամար 179
Հնչում է անվերջ աշնան թախիծով 180
Ինքնօրորում 180
Անվերջ գիշերի մռայլ վիհերում 181
Վերջալույսին 181
Միայնություն 182
Հոգնածություն 183
Օտարուհուն 183
Աշնան գիշեր 184
Կույր լինելու ցանկություն 185
Մարդոց ժխորը թողնեմ հեռանամ 185
Գիշեր է և լռություն 186
Մահ 187
Հայրենիքում 188
Ցնորք 189
Հանդիպում 190
Անդարձություն 190
Տխուր երգ 191
Resignation 192
Իմ սիրտը միշտ 192

Մարել ես արդեն, մեռել ես հավետ..... 193
Մեղքի մթին քարայրից 193
Գիշեր..... 194
Դավաճան հուշեր..... 195
Մեդուզա..... 195
Աշնան առավոտի երգը 196
Մեղմություն..... 197
Հուշեր 197
Ուշացած սեր..... 198
Աշնան 199
Հեկեկում է անվերջ..... 199
Անդարձություն 200
Դու գալիս ես մութ գիշերապահին..... 201
Իմ երգերին 202
Դանդաղ սահում են օրերը դժկամ.....202
Թախիծ 203
Տարիներն արագ, ամպերի նման, անցնում են անհետ...204

ԻՄ
գրադարանը

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Կազմող և խմբագիր՝ Ն. Վիրաբյան
Հրատարակչության խմբագիր՝ Գ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Հ. Փիլոյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Օհանջանյանի
Կազմի նկարը՝ Գ. Պողոսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am